


ԵՂԻԾԵ
ԹԱՐԵՇՈՒՑԱՆ

75 (47.925) [Բարեկանուան] 57131
Դ-85 Մրամբռան, 13
Լիվայ Բարեկանուան: (Կամեա
և սուրբծագործություն):

9m.

| | | | |
|---|---|---|---|
| — | — | — | — |
| — | — | — | — |
| — | — | — | — |
| — | — | — | — |
| — | — | — | — |







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВА

РУБЕН ДРАМПЯН

ЕГИШЕ ТАТЕВОСЯН

(ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԳԵՎԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

75(47.925)(092 Բարեկայում)

Դ-85

ԱՍՏԽՎԱ Հ 1861 թ.

ԱՊԻՔԵՆ ԴՐԱՄԲՅԱՆ

ԵՂԻՇԵ ԹԱԴԵՈՍՅԱՆ

(ԿԱՆԱԳԸ ԵՎ ՍՏԵՂՄԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1955

27732
1/20003
Դ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի՝
Խմբագրական-հետարարակական խորհրդի ոռումամբ:



Ա. Մ. Թաղեռոյանի դիմանկարը
Գործ՝ Ա. Յա. Գոլովինի



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ արվեստի պատմությունը հարուստ չէ նրա առանձին, թեկուզ և ամենախոշոր նկարիչների մասին զրված մենագրական ուսումնասիրություններով։ Բացառություն չէ նաև նախառնողուցիոն ու սովետական շրջանի ականավոր հայ նկարիչներից մեկի՝ Եղիշե Թադեոսյանի ստեղծագործությունը։ Թագեռայանի ցուցահանդեսների կատալոգների նախաբանները, պարբերական մամուլում հրապարակված հոդվածներն ին նկարչի մասին մինչև այսօր եղած ամբողջ դրականությունը։

Ներկա աշխատությունը նկարչի կյանքի ու ստեղծագործության մեջ նադրական, ավելի լայն, բայց ոչ բնավ սպառիչ քննարկումն անելու առաջին փորձն է։ Նրա ստեղծագործության համեմատաբար լրիվ քննարկումը տալու համար մեր տրամադրության տակ չկային կենսագրական բոլոր նյութերը, իսկ ամենազլամավորը՝ հնարավորություն չունեինք կարծիք հայտնել նկարչի որոշ խոշոր գործերի մասին, որովհետև դրանցից մի քանիսը ոչնչացել են, մի քանիսը մինչև հիմա չեն հայտնաբերվել՝ սփռված լինելով մասնավոր կոլեկցիաների մեջ, կամ թերևս ենթարկվել են առաջինների բախտին։ Մենք ամենեին հնարավորություն չեինք ուն-

նա դատել Թաղեռույանի մի քանի կտավների մասին, եթե շինեին գրանց վերաբերյալ մամուլում հայտնված կարծիքները, ինչպես նաև մերձավոր անձանց գրած նամակները նկարչին:

Եղիշե Թաղեռույանի ստեղծագործությունը հայ արվեստի կարևորագույն օդակներից մեկն է: Նկարչական արտասովոր տաղանդով և ստեղծագործական լայն գիտականով օժտված խոշոր վարպետ Թաղեռույանն աշխատել է տարբեր ժանրերում: Նա առաջին հայ նկարիչներից էր, որոնք նախառնույցիցին տարիներին ստեղծեցին զարդարական աստղավոր նպատակամիտում ունեցող նշանակալի, ռեալիստական նկարներ: Առանձնապես շատ ու արդյունավետ է աշխատել Թաղեռույանը պեյզաժի բնագավառում: Հայ նկարչության մեջ նա ստեղծել է կոլորիտի, լիրիզմի, ինչպես նաև բնության բազմազանությունը վերաբռնագրելու տեսակներից լավագույն պեյզաժներ:

Ներկա մենագրությանը ես ձեռնարկել եմ նկարչի մահվանից հետո, ոսկայն գեռես նրա կենականության օրոք երկար գրուցներ եմ ունեցել հետք, երբ նա նրան էր գալիս, կամ ես էի Թրիլիսի գնում: Հինգտանում կենսագրական բնույթ ունեցող այդ գրուցների գրառումները հետովականորեն հասցվեցին մինչև 1901 թվականը, երբ Թաղեռույանը Մուկվայից փոխազրպից Թիֆլիս՝ մշտական բնակլության: Նկարչի ասանձին ասուցիները միայն վերաբերում էին ավելի ուշ տարիներին: Դրա համար էլ ներկա աշխատության զուտ կենսագրական մասը, հավասարապես հանգամանալիք չէ: Բավկանաշատի լիիվ է բացահայտված կենսագրության միայն առաջին կենը՝ սկսած մանական տարիներից, վերջացած մոսկվային քրանուու: Սյու վերջին շրջանին համար արժեքավոր նյութ հանդիսացան նկարչը գրած հուշերը՝ մեկը Վ. Դ. Պոլենովի, մյուսը Ե. Դ. Պոլենովայի մասին¹: Առանձնապես սակավ էր Թաղեռույանի նախառնույցիցին տարիների՝ թիֆլիսյան շրջանին գրումնեությանը վերաբերող նյութը: Այստեղ խիստ արժեքավոր նզան նկարչը նամակները՝ Վ. Դ. Պոլենովին և այն աեղեկությունները, որ ստացա տիկին Ժ. Թաղեռույանից և արվեստագետի մի քանի բարեկամներից: Թաղեռույանին ստիլատական

¹ Վ. Դ. Պ. Պոլենովի մասին գրքած հուշերը խիստ կրծառ ձեռք հրատարակված են Ե. Դ. Մաթերովի կողմէ ։ Վ. Դ. Պոլենով, Պուշկա, ճաշակի և ՅՈՇՈՎՈՒ գրքում (Ազգ. „Աշկյուտուա“, 1948), Խոհ Ե. Պ. Պոլենովային վերաբերող հուշը մինչև հիմա որիէ տեղ չեն հրատարակվել:


տարիներն ու նրա անձնավորության բնութագիրը կազմված է նկարչը կյանքի վերջին շրջանում բավական հաճախակի դարձած հանդիպումների հիման վրա:

Բղորովին այլ է արվեստագետի ստեղծագործական ժառանգության բախտը: Եթի Թագեռայանի թիֆլոսյան շրջանի գործերը համարյա ամբողջությամբ հասել են մեզ, ապա նրա վաղ շրջանի գործերից շատ քշերն են հասել: Օրինակ՝ Թագեռայանի մրցանակի արժանացած «Կեսօրչաձաշ» և «Թարող ուսկագավաններին» նկարների մասին մենք պատկերացում ենք կազմում միայն էսքիզային փորրագիր կրկնություններից, որ արել է նկարիչը Հետազայտում՝ 1924 և 1925 թվականներին: Չեն պահպանվել անզամ գրանց լուսանկարները: Նրա մի ուրիշ, նմանապիս խիստ նշանակալից գործի («Դնակի պանդաստիլուն», 1894) մասին մենք ոչինչ չիմնք իմանա, եթե շինուին ե. Գ. Պոլենովայի նամակում եղած դրա նկարագրությունն ու կարծիքը նրա մասին:

Ներկա մենագրությանը ձեռնամուկս լինելով թագեռայանի մահվանից շետու ես բնականաբար հնարավորություն շռների իմ եղրակացություններից ու գրութիններից մի քանիսը հաստատել ներկայացնելով զրանք նը-կարչի դատաստանին: Աս էական, և գդրախտաբար շրացված, մի բաց է:

Սույն աշխատությունը հիմնականում կառուցված է նկարչի կյանքու ու գործունեությունը ժամանակաբարկան կարգով հաջորդաբար բացահայտելու պլանով: Բացի զրանից, հատուկ զլուկներ են նվիրված նկարչի պերշամազին, դիմանկարչացին, թատրոնում կատարած աշխատանքներին և վերջապես անձնավորությանը: Այս վերջին զլուկը մեծ տեղ է հատկացված նկարչի ասուլիթներին և նրա, որպես մարդու, բնութագրմանը: Դրա պատճառը ոչ այնքան անձնական մոարիկ ծանրթության տարիներին ինձ մոտ կուտակված նյութների առատությունն է, որքան իմ խոր համոզումը, որ Թագեռայանն այն նկարիչներից է, որոնց ստեղծագործությունն ու ստեղծագործական որոնումները սերտորեն միահյուսված են նրանց անձնավորությանը:

Այդպիսի նկարչի արվեստը բացահայտելու համար արժեքավոր է յուրաքանչյուր շարիխ, և ես ոչ մի բողեք չեմ մոռանում այդ, նիրկա մենադրության վրա աշխատելիս:



ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Եղիշե Մարտիրոսի թագեռոյանը ծնվել է 1870 թ. սեպտեմբերի 12-ին (Հին տոմարով) պատմական Հայաստանի կենտրոններից մեկում՝ Էջմիածնում, նահապետական մի համեստ ընտանիքում։ Եղիշեի հայրը վարձում էր Էջմիածնի վանքին պատկանող ըրազացը, որտեղ աշխատում էր մեկ-երկու օգնականի հետ։ Զրադացանությունը թագեռոյանների տոհմական վրազմունքն էր, ըրազացան էր նաև Եղիշեի պապը։ Աշխատանքը ծանր էր, վաստակելը քիչ, և ընտանիքն ապրում էր մի փոքրիկ, անդամ այլի շանհեցող անակում։ Եղիշեի հոր և մոր ծնողները բնիկ վարշապատցի էին. մայրը, ծնյալ Խուզոյան (Խուզավերդյան) ներսէս արքավիսկոպոս Խուզավերդյանի հարազատ քույրն էր։ Եղիշեի այդ քերին իր ժամանակի, մանավանդ իր միջավայրի համար, կրթած և գեղարվեստական ընդունակություններով օժտված մարդ էր։ Բնությունը՝ գրանցից չէր զրկել նաև Եղիշեի հորը՝ Մարտիրոսին։ Որդու վկայությամբ՝ նա փայտե թռչուններ ու կենդանիներ քանդակելու վարպետ էր։

Ծնոտանիքն ուներ երեք զավակ՝ անդրանիկը Եղիշեն, ապա Հոփիսիմն ու Վերդինե քույրերը։ «Մանկությանս ժամանակ երկու քույրերիս շատ

հմ շարշարել. երբ նրանք կատվի վզից բարձրացնելով՝ սեղմում էին իրենց և, ինչպես ինձ էր թվում, խեղում էին, ևս ծեծում էի բուրբերիս, նրանք էլ, անշուշտ, լավիս իրն Հաճախ սպատշամբի սլունով բարձրանում էի գերանների միջեւ, խոյակի վերեր սարբած ճնճղուկների բույնը, որպեսզի տեսնեմ ձագերին, պահեմ ձեռքումս, հետո էլ անպայման զնիմ տեղը (ևս զա սովորել էի իմ ընկերներից, որոնք նույն բանն իրենց ճնճղուկների հետ էին անում):»¹

Թուշունների ու կենդանիների սերը թափեսլանը պահեց ողջ կյանքում:

Փոքրիկ Եղիշենի Հիշողության մեջ շատ հերպարներ թուզեց 1877—1878 թվականների սուս-տաճկական պատերազմը: Ողջ կյանքում անշխնչ մնացին անցնող զորքերը, իրենց տանը հանգրվանած գեներալը, զինվորները, որոնց հնաւ մտկրթացալ նա, և որոնք սովորեցրին նրան սուսերին տուաշին բառերը:

Այդ նույն տարիներն էլ Եղիշենին տվին զեղարկվեստական առաջին տպափորությունները: Դրանցից ամենասկզբնականը ինչ-որ մարդու պրոֆիլն էր, որ նկարել էր աղդականներից մեկը, ապագան նկարիչն այդ ժամանակ հինգ տարեկան էր: Մանկական տարիներին հաճախ էին նրան տանում վանք, այնտեղ, նրա քեռու մոտ, մի պատից կախված էր Կորեզոցի օթիքառոսի ծնունդը՝ նկարի գրավյունը, որ յուրաքանչյուր այցելությունից հետո ավելի ու ավելի բան էր՝ սուսմ փոքրիկ Եղիշենի հրեակայությանը: Մի զինվորի մոտ նա տեսնում է զնացքի նկար և այդ տպափորության տակ էլ սկսում է ածուխով սպիտակացրած պատերի վրա մարզիկ ու կենդանիներ նկարել: Նրա Հիշողության մեջ երկար ժամանակ տպափորված է մնամ Վաղարշապատի մի տան պատի վրա քանդակված պարսկական գերրը՝ բարձրացրած թաթում սուր բռնած ապրումը, մեջքից էլ ծագող արեւել Հաճանչները: Սակայն երեխայի միտքը ավելի հաճախակի մերադրանում էր հին հայ ճարտարապետության երկու կոթողների՝ Շաղկաձորի տաճարի և Էջմիածնի տաճարում դանվող, այսպէս կոչված, «Քրիչոր կոստավորչի տեսալիքի տեղում» շինված հովանոցի մոդելներին, առաջին մոդելը գտնվում էր Հարեաններից մեկի տանը, իսկ մյուսը՝ տեղացի լուսակարիչ Մերսաւյանի արհեստանոցում:

1. Ե. Թագեռոյանի 15—X—1932 թվակիր՝ Ա. Գրամբյանին դրած՝ նամակից:

1879 թվականի աշնանը, երբ Եղիշեն մտել էր տասերորդ տարին, քեռու ծախտով ուղարկեցին նրան Թիֆլիս ու տվին Տեր-Ակոբովի մասնավոր գիշերօթիկ գպրոցը, որտեղ նա մնաց երկու տարի՝ մինչև 1881 թվականը: Այդ գպրոցից հեռանալով՝ Եղիշեն իր հետ տարավ կրթության նախադիմությանը, որ սովորել էր գպրոցի մի սանից, որ վարպետ էր այդ գործում: 1881 թվականին, քեռու ջանքերով, Թագեռոսյանն ընդունվեց Մոսկվայի Լազարյան ճեմարանի դիմնազիական դասարանների նախապատրաստական բաժանմունքը որպես թոշակառու աշակերտ:

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՇՐՋԱՆ

Թադեոսյանը Լազարյան ճեմաբանի գիմնազիական դասարաններում
մնաց չորս տարի: Հանրակրթական առարկաները քիչ էին հետաքրքրում
պատանուն, բայց նրա գեղարվեստական հակումները ճետզհետեւ ավելի
ցայտուն էին դրսերվում: Մի անգամ նա կալվից քանդակեց ճեմաբանի՝
պահակ Խվանին: Ընկերները գտնելով, որ նման է, ցուց տվին դասա-
տու Վիազմկրին¹. սա էլ գովից նրան: Մեծ իրադարձություն էր աշակերտա-
կան գործերի ցուցահանդեսը. գծանկարով հափշտակված էին նաև ճե-
մաբանի այլ սաներ: Սակայն նկարչության դասատու Միվոխինը վախե-
նարվ աշակերտաներին «Երես տալուց», այլևս այդ փորձը շկլինեց: Նրա-
նից հետո դասատու նշանակվեց Տիտովը, որ ընդհակառակը՝ ամեն կերպ
խրախուսում էր աշակերտներին: Թագիսյանը չրաներկ է դնում, և երբ
մի անգամ աշակերտների ուժերով ճեմաբանում ներկայացնում էին
«Արդանանց պատերազմը», Տիտովն իր խոստումնալից աշակերտին օգ-
նեց նկարել դեկորացիաները: Թադեոսյանը ճետագալում սիրում էր Հի-

¹ Ռ. Վիազմկր (1859—1955) սովետական պատմաբան, ակադեմիկոս, Պոսկարի
համալսարանի պրոֆեսոր:

շել, որ դրանք նկարում էր... իրար փակցրած աշակերտական տեսրակ-ների վրա:

Թագեռոսյանը Լազարյան ճեմարանում մնաց մինչև 1885 թվականը: Պատանու բացահայտորեն դրսորված գեղարվեստական շնորհքը մղեց նրա հայրենակից՝ Հետապայում անվանի բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին խորհուրդ տալ եղիչեի ծնողներին, որ տան նրան Նկարչության, Քանդակագործության ու Ճարտարապետության ուսումնարան, ուր և ընդունվեց նա 1885-ի աշնանը:

Լազարյան ճեմարանը թողնելուց հետո Եղիշեն գիշերօթիկ է ընդունվում Հայկական եկեղեցու ավագերեց տեր Հ. Սուրենյանի՝ անվանի նկարիչ Վարդիկ Սուրենյանի Հոր տանը: Հենց այդ տարին էլ Վարդիկն Արվիստների ակադեմիան ավարտելուց հետո նոր էր վերադարձել Մոսկվա: Բազմակողմանի զարդացած, մանավանդ արվեստի հարցերում իրազեկ Սուրենյանն արդեն բավականաշափ գեղարվեստական գիտելիքներ ձեռք էր բերել, ուստի և միանդամայն բնական է, որ ազգեցություն պետք է գործեր, և փաստացի էլ գործեց, եղիշեի գեղարվեստական զարդացման վրա: Թագեռոսյանն ինքն էլ հաճախ նշում էր զա՞ արվեստի սասպարհում կատարած իր առաջին բավկարը վերջիշելիս: Բայց և այնպիս բոլոր հիմքերը կան հնիթագրելու, որ Սուրենյանի ազգեցությունը չի սահմանափակվել միայն այդ սկզբնական տարիներով: Գար արտահայտվեց բավական ուշ ևս, այն տարիներին, երբ Թագեռոսյանը Նկարչության, Քանդակագործության ու Ճարտարապետության ուսումնարանն ավարտելուց հետո, հանդես եկավ իր առաջին նկարներով: Օրինակ՝ նրա «Ըսաշի երկրպագությունը» (1901) մասամբ մոտ է Սուրենյանի նկարներին թե՛ սյուսենվ, թե՛ նկարելու կերպով (հենց խաչքարը Սուրենյանի ոճով է նկարված):

Ուսումնարանում Թագեռոսյանը հաջորդաբար անցավ բոլոր դասարանները՝ զիպսի, գլխի, ամբողջ մարմնի և բնականի: Ամրոց մարմնի դասարանում մնաց մի ավելորդ տարի անատոմիայի ու հեռանկարի քննությունները շտալու պատճառով: Ուսումնարանում, ինչպես հայտնի է, մասնագիտական առարկաներից բացի, անցնում էին նաև հանրակրթական առարկաներ, որոնց ամեն օր հատկացվում էր երեք դաս, կեսօրից հետո:

Թագեռոսյանը դասատուներից ամենից ավելի իրեն պարտական էր

Համարում ներկին, որը երբեք չէր զավաճանում իր ընդունած կանոնին՝ կանգ առնել ամեն մի աշակերտի աշխատանքի առաջ և ցուցումներ տալ մինչդեռ մյուս գասատուները՝ Վ. Մակովսկին, Պրյանիշնիկովը, Ն. Սորոկինը, Ե. Սորոկինը, Դեսցաոովը, Կամհնսկին, Սոլովյովը՝ սովորաբար մոտենում էին մեկ-երկու աշակերտի: Թագեռոյանի ասածով՝ Ուսումնարանը միայն տեխնիկական որոշ գրադիտություն տվեց իրեն: Սակայն նկարչի այս կարծիքին չի կարելի համաձայնել. բավական թերապեածաված է Ուսումնարանի գերը:

Ուսումնական թվականների երկրորդ կեսը և ինսումնական թվականների առաջին կեսը, որոնց ընթացքում է Թագեռոյանը սովորել Մոսկվայի Ռատումնարանում, նրա գեռես շարունակվող ծաղկման ատրիներն էին: Թագեռոյանի՝ Ուսումնարան մանելուց ընդամենը երեք տարի առաջ, նրա գասատուական կազմից գործ էին եկել Պերովն ու Սավրասովը՝ Ուսումնարանի երկու ամենից ավելի ականավոր ու հանրածանոթ գասատուները՝ 70-ական թվականներին և 80-ական թվականների սկզբին: Սակայն նրանցից հնու էլ Ուսումնարանի գասատուական կազմը Մակովսկիին և Վ. Պոլենովի համարված և կազմված լինելով գերազանցորեն զշշիկ-ներից¹, հաստատ պահում էր այն առաջավոր, ունալիստական արագիցիաները, որոնք կապված էին Պերովի և Սավրասովի անունների հնու: «Այն սիստեմը, որ Ուսումնարանում ամբապնել էր գլխավորապես Պերովը, ենթադրում էր ոչ միայն արվեստի տեխնիկական հիմունքների ուսուցումը, այլ ամենից առաջ գեմոկրատական գաղափարների և արվեստի մեջ ռեալիզմի համար պարզաբերու հնա կապված զեղարվեստական որոշ աշխարհայցքի մշակում: Հետահանքը եղավ այն, որ Մոսկվայի Գեղարվեստական ուսումնարանը տասնամյակներ շարունակ հանդիսացավ գաղափարական ռեալիզմի օջախն ու պահպանը: Այդանդից դուրս էին զալիս ոչ թե պարզապես տեխնիկական տեսակետից պատրաստված մարդիկ, այլ գիտակից արվեստագետներ, համոզված և իրենց հնատապ ուղին հստակորեն պատկերացնող ռեալիստներ»². Ուսումնարանի բոլոր գասատուներն էլ զշշիկ չէին. կային և ակադեմիկական սողության ման-

¹ Տրչեկ (սուրբարան) էին կոչվում շարժական ցուցանակների բնակության անդամները:

² Н. Дмитриева, Московское училище живописи, ваяния и скульптуры. Изд. «Искусство», 1951, стр. 140.

կավարժներ, ինչպես նվզրափ Սորոկինը, որ հռչակված էր որպես փայտան գծանկարիչ: Բայց սրանք չէին կարող փոխել պերովյան տիրապեսակ դիմք: 80-ական թվականների երկրորդ կեսից, Պերովի մահվանից և Ամբրասովի հետանալուց հետո, Ուսումնարանի դասատրական կազմը համալրվեց այնպիսի առաջավոր արվեստագններով, ինչպիս է: Պակենովը, Վ. Մակովսկին, Ի. Պրյանիշնինովը, որոնք շարունակեցին իրենց նախարարների առաջավոր արագիշտաները: Մանկավարժների այս նոր սերնդի մեջ, որոնց գործունեությանը զարգադրում էին, Թագեռոսյանի ուսումնառության տարիները, նկատելի առ էր գրավում Վ. Դ. Պոլենովը: Զիսաւակովի այս աշակերտը իր մանկավարժական գործունեության մեջ հետևում էր սասացչի ուսուցման մեթոդին, որը գերծ էր չոր ակադեմիկ մից և աշակերտների ուշագրաւթյունն ուղղում էր գեղագիտական գործում:

80-ական և 90-ական թվականներին Ուսումնարանն ավարտեցին բավական շատ առաջավոր ունալիւս նկարիչներ, որոնք ականավոր ունի գրավեցին XIX դարի վերջի և XX դարի սկզբի ուսանկան արվեստում: Ուսումնարանն ամենց այնպիսի նկարիչներ, ինչպես Լեհուանց, Ա. Ֆորովնը, Ս. Իվանովը, Կատարկինը, Մալյուսինը, Գ. Կորուֆինը, Վ. Մեշկովը և ուրիշներ: Եթե նույնիսկ համաձայններ Թագեռոսյանի հետ, որ նրա, սրբիս նկարչի, զարդարումը տեղի ունեցավ 90-ական թվականների վերջին, այինքն՝ Ռևուտնարանն ավարտելուց 4—5 տարի հետո, ապա դա հնարավոր դարձավ միայն շնորհիվ այն ճիմքի, որ գրել էր նրա մեջ Ուսումնարանը: Եվ վերջապես այդ նույն Ուսումնարանում չէ՞ր, որ Թագեռոսյանը ծանոթացավ Վ. Պոլենովի հետ, ու թեև նրա մոտ երկար ժամանակ շուսանեց, այնուամենայնիվ իսիս նշանակալի էր Պոլենովի ազգացությունը, որի հետ Թագեռոսյանը մտերմացավ: Իր ուսումնառության վերջին տարին և մանավանդ՝ Ուսումնարանն ավարտելուց հետո: Նրանց այս հարաբերությունների մասին կիսունք ստորև:

Պահպանվել է մի քանի դասարանական աշխատանք, որ կատարել է Թագեռոսյանը Ուսումնարանում սովորելու առաջին տարիներին՝ սկսած 1887 թվականից (նայուք՝ մորա՝ գանկով և ալյն): Այդ սկզբնական գործերը, ինչպիս նաև նույն շրջանին վերաբերող մի քանի պերգամային էայլուգները, որ արել է նա Հայաստանում՝ ամռան արձակուրդի ամիսներին, գենուս ոչ մի բանով ակնբախ չեն դարձնում Թաղեռոսյանին: Բայց

արդեն զրիմյան էտյուդները, որ կատարել է նա 1890 թ. ամառավին ուղևորութան ժամանակ, աշքի են ընկում մանրակրկիս ուսումնասիրությամբ: Սակայն, դրանց մեջ նկարչի անհատականությունն իր արտահայտությունը չի գտել: Թագեռույանը Դրիմ ուղևորվեց իր երիտ զաւընկերների՝ Շատիլովի և Ալեքսեևի հետ: Երիտասարդ նկարիչները եղան Թիոդորիայում, Բախչիսարայում: Թեոգոսիայում այցելեցին Ալյաջովսկուն, որ չերուությամբ ընդունեց նրանց և, ինչպես Թադեոսյանն էր հիշում, գործնական խորհուրդներ տվեց:

Դրիմից մերված էտյուդները ցուցագրվեցին Ուսումնարանում՝ աշակերտական ձմեռային ցուցահանդեսում: Թրանք էլ գրավեցին Վ. Պոլենովի ուշագրությունը դեպի սկսնակ նկարիչը: Պոլենովի հետ ծանոթանալը հետագայում, չնայած նրանց տարիքի զգակի տարբերությանը, արագ վերածվեց վերին աստիճանի սերտ բարեկամության ու մեծ գեր կատարեց Թագեռույանի լյանքի և գեղարվեստական գործունեության մեջ: Ահա թե ինչ է գրում Թագեռույանը Վ. Պ. Պոլենովի մասին. «Երբ 1885 թվականին առաջին անգամ եղան Տրետյակովյան պատկերասրահում, Պոլենովի բաժանմունքի ինձ ավելի ապշեցրեց, քան մյուս բոլորը, մանավանդ սրա պաշտինյան էտյուդները»:

Սակայն միայն Թագեռույանը չէր, որ Հափշտակվել էր Պոլենովի նկարներով: Ցա. Մինչենկովն էլ Համբայան նույնի է ասում Պոլենովի մասին զրած իր հուշերի մեջ. «Պաղեստինի էտյուդները և Գհեննեսարեթի լիճ» նկարը ուսանողների համար իսկական հայտնագործություն էին նկարչության մեջ, չշմարիտ մի գարոց: Դրանց մեջ Պոլենովը սովորեցնում էր, թե ինչպես պետք է նկարի անազարտ գուշներով՝ վերաբարիւրով բնականակի թարմություն և ուժ էր տալիս իներկերին»¹:

Այնուհետև Թագեռույանն իր հուշերում գրում է. «Ինձ՝ սկսնակին համար, տեխնիկայի ու երանգավորման հարցերը կենսական եին: Իմ մեջ առաջացավ հատկապես նրանից ուսանելու սաստիկ ցանկություն, բայց դա իրականացնելն այնքան էլ հեշտ չէր, որովհետեւ Պոլենովի նայուր-մորտի դասարանն Ուսումնարանում փոքր տարածություն ուներ և

¹ Я. Д. Минчеков. Воспоминания о передвижниках. Изд. «Искусство», 1940, стр. 169.

շէր կարող տեղավորել նրա մոտ աշխատել ցանկացող բազմաթիվ աշա-
կերաներին, ում հաջողվում էր դա, նա երշանիք էր Համարում իրեն:

Մի քանի տարի շարունակ ես ոչ մի շանս չունեի ընդունվելու վ. Պ.
Պոլենովի գասարանը: Պոլենովի մոտ աշխատող իմ ընկերներից լավա-
գույն կարծիքներ էին լսել նրա մասին: Ասում էին, որ բոլոր պրաֆեսոր-
ներից միայն Պոլենովն ունի նկարչության պահնդելու միանգամայն որո-
շակի ու խիստ մեխոր, որ ուղղումների ժամանակ բացատրում է արտա-
կարգ պարզ ու հասակի, հանձնարարում փուլել արևադաշտ նկարիչների
անեխնիկան մասնավոր պատկերաբաններում, անցաթլթեր է առվիս
Ս. Մ. Տրետյակովի, Բունինի, Սոլյանովնեկովի մոտ գնալու և այլն, որ
բոլոր պրաֆեսորներից միայն նա համարականական կրթություն ունի:
Մի խոսքով ամեն ինչցից երեսում էր, որ պետք է սովորել հենց նրա մոտ:

Վերջապես 1889-ին ես կարողաց ընդունվել նրա մոտ, բայց զբժ-
րախարար շատ քիչ աշխատեցի: Նկարեցի միայն մի նաուլար-մորա,
և նա մեկնեց, կարծեմ, արտասահման, իսկ նրա զատարանը ժամանա-
կավորապես արվեցի: Ս. Պրյանիշնիկովին...

1891-ին Վասիլի Դմիտրիիշը ուշարժություն գարձեց (աշակերտա-
կան ցուցահանդեսում) իմ զրիմյան էտյուպներին, որից հետո ես երազում
էի ինչ գնով էլ լինի մոտիկից ծանոթանալ նրա հետ և լրացնել իմ կար-
ճատու ու թերի մնացած ուսումնառությունը: Գա անձիշապես շհաջողից:
1892-ի աշակերտական ցուցահանդեսում Վասիլի Դմիտրիիշը գարձաւ
նկատեց իմ գործերը²:

Աշա թի ինչ է դրում վ. Պոլենովն այս էտյուպների մասին իր կնոջ՝
Ն. վ. Պոլենովային. «Թագեռոյանցը ցուցարել է ամառային էտյուպներ՝
խիստ հնարարքական և ինքնուրուցին: Ինչ որ ֆորառնիական բան կա վե-
րաբերմունքի մեջ: Ընդհանրապես առավորությունը խիստ հաճելի է և
աշխատությունը»:

Այս գործերից մեջ հայտնի է միայն մեկը՝ «Բուգորոդսկում», որ հենց

¹ Թէկ որքան հէշուում եմ, վ. Գուն շաբաթական միայն մի զառ ունեմ. զա-
րիս էր մեկուկեն ժամով, և այդ ժամանակամիջոցում կարողանում էր շատ բան
ափանդի (օտան. Թաղեռոյանի):

² Ե. Թաղեռոյանի «Հուշեր»-ի անտիկ տեքստից՝ Ե. վ. Վախարավոյի
«Վ. Դ. Պոլենով» գրքից:

³ Е. Е. Сахаров а, Василий Дмитриевич Поленов. Письма, дневники,
воспоминания, Госуд. издательство „Искусство“, 1948, стр. 288.



յուցահանդիսից էլ գնում է Ուսումնարանի դասատու, անվանի նկարիչ վ. Ե. Մակովսկին (այժմ գտնվում է Լինինգրադի Ռուսական պետական թանգարանում): Ինչպես տեսնում ենք, միայն Պոլենովը չէր, որ գնահատում էր երիտասարդ նկարչի գործերը: «Բոգորոսովում» պելզաժը նկարված է բնականից ու թիև էտյուդ է, սակայն իր ավարտվածությամբ լիուվին կարող է համարվել պելզաժային նկար: Թագեռոյանի դիմյան պելզաճնիրի համեմատությամբ սա մի քայլ է առաջ: Աշազությունը է գրավում երիտասարդ նկարչի վարպետության աճը, որը հիմք է տվել Պոլենովին վարպետության տեսակետից: Գուգազրկու նրան Ֆորուսնիի հետ:

«1893 թվականից Վասիլի Դմիտրիի ինձ մոտեցրեց իրեն, իր տան զուրբ բացեց իմ առաջ, աշխատանք հայլաթիւնց (Կաստորայի նահանգի Կողոքիվ քաղաքի Նեկեղցու լարանի համար՝ ըստ Ալեքսանդր Խվանովի էսքիզների), մուլտ ավեց, որ ազատ կրամուտ ունենամ նկարչության սուսանահանությունը: Այդ օրվանից էլ, օգտվելով նրա ցուցումներից՝ ու խորհուրդներից՝ ևս աշխատում էի նրա հետ: Բայցի ինձանից՝ ներգրավված էին նաև ուրիշ նկարիչներ, ինչպես Մալյուտինը, Ռոզանովը, Մեշկովը: Այսպիսով, նա զարդ էր ստեղծում Ուսումնարանում: Այդ շրջանը ամենաթանկարժին ժամանակն էր ոչ միայն ինձ, այլև ինձ հետ աշխատող ընկերներին համար: Հետագայում նա հաճախ էր համարվածը վերջիշում այդ ժամանակից: Հոռմից նա զրում էր ինձ: «Մեծ համուրակով եմ ես հիշում մեր աշխատանքը Կողոքիվից և Տրետյակովյան տոնի համար, սրանցնի ժամանակ էր»:

Վասիլի Դմիտրիիվը հենց սկզբից մանրամասնորեն իր աշակերտներին ծանոթացնում էր գույների փոփոխությունները նախանկերի (ըրյատ) ու օգի միացություններից... նա մեզ վարժեցրեց զգուշ վարպել ներկերի հետ: Մեր բոլոր հարցերին տալիս էր շոշափելի ու սպասիչ պատասխանները¹:

Այդ նույն ժամանակ է նկարված Ռ. Մ. Սուրենյանի դիմանկարը՝ երիտասարդ արինստագետի ամենավառ ստեղծագործություններից մեկը: Ավելի, քան կես դար է անցել զրա նկարվելուց հետո, բայց հիմա էլ այդ պրոտրեն աշքի է ընկնում ոչ միայն իր զմայլերի գոմանկարչությամբ, զգեստի արժաթագորշ, բայց կապույտ ու մանուշակադույն երանգների և զմմիքի նուրբ վարպագույնի զուգորդությամբ, այս այն չերծությամբ ու

¹ Ե. Թաղեռոյան, Հուշեր գ. Դ. Պոլենովի մասին (անտել):

արտակցությամբ, որ հառնում է գեղատի կնոջ կերպարանքից: Ակամա Հիշշում են Սերովի նշանավոր դիմանկարները՝ «Ալղջիկն ու գեղձեր» և «Արեկից լուսավորված աղջիկը», որոնք նկարված են գլանից, մի քանի տարի առաջ: Մյու ժամանակ երկուան էլ երիտասարդ սկսնակ նկարիչներ էին: Սերովի դիմանկարները հոչակեցին նրան, իսկ թ. Մ. Սովենյանի նկարը երկար ժամանակ մնաց անհայտ, որովհետև խսկուն տարվեց. Սովենյանների տունը, կախվեց նրանց բնակրանում՝ առանց երեսէ ցուցահանդիսում դրվելու: Եթե 1930 թվականին Հայաստանի պետական թանգարանը կազմակերպել էր Վարդգես Սովենյանի գործնիր հնտմանու ցուցահաններն և նրա նկարները որոնեն նպատակով են Մոսկվայում եղա Հ. Մ. Սովենյանի (նկարում պատկերված թ. Մ. Սովենյանի որդու և Վարդգեսի նդրու տղայի) բնակրանում, ապշեցի թե՛ նկարի արտասովոր թարգումիցունից, որը նրա գործության դիմավոր դադարնին է:

Մոսկվայից վերադարձին Թբիլիսում հնագիտակցի Թադեոսյանին և Հիացմունք արտահայտեցի այդ նկարի վերաբերյալ. նա կարծես թե նույնիսկ զարմացալ այն ապակորությունից, որ գործն էր ինձ վրա այդ դիմանկարը, և ինչպես թվաց ինձ այն համաժխութ չէր իմ բարձր գնահատականին: Հավանորին նկարելուց հետո անցած երկար տարիները հեղինակի մեջ մնացած պատկերացումը պիկել էին անհրաժեշտ հստակ կորիսնից ու որոշակիությունից: թ. Մ. Սովենյանի նկարը, առաջին անգամ ցուցադրվելով 1938-ին Երևանում կազմվերպված հնումանու ցուցահանդիսում, այնուշեակ թբիլիսիում և վերջապես 1939-ին Մոսկվայում հայ արվիստի տանօրյակի ատիլի կազմվերպված Հայաստանի նկարների ցուցահանդիսում, միշտ էլ ընդհանուր հայցմունք է առաջացրել: Եցեմ զա զարդարում է Հայաստանի պետական պատկերասրանի Թադեոսյանի սրահը: Հետագայում Թադեոսյանն նկարեց բավական շատ պրոտցեներ. ժամանակի ընթացքում զարձավ ավելի հասուն վառպետ, բայց հազիկ թի կարողացավ սոնհծել այնպիսի մի գործ ևս, որը ունենարգերով թարմության ու բացառիկ կենսականության այդ անշինչ կնիքը:

Մոտենում էր Ռուսունարանն ավարտելու ժամանակը: Թադեոսյանը 1893 թվականի ամառն անց է կացնում Հայրենի Էջմիածնում և Բյուրական գյուղում: Այդտեղ նա աշխատում է դիպումային նկարի վրա՝ արծաթի մեջ մեղալի համար: Նկարի թեման Աստվածաշնչից է՝ «Ախսարի

մա՞ր» (մինչ այդ Թագեռոյանն ստացել էր արծաթի երկու փոքր մեղալ մատիտանկարի և յուզաներկ էտյուղի համար): Այդտեղ՝ էջմիածնում, նա նկարում է իր բանաստեղծական շնչով տոգորված էտյուղը «Կոմիտասը էջմիածնի լճակի ափին»: Դա իհարկե զիմանկար է, այլ ավելի շուրջ՝ պեղպաժ, ուր և մարդ կա: Այդ ժամանակ ոչ ոքի հայտնի Սովորոն սարկավագը՝ ճետագայում նշանալիր կոմպոզիտոր Կոմիտասը պատկերված է նստած զիրբով, համարյա մեջքը գետի հանդիսատեսը, էջմիածնի լճակի ափին, որի մեջ էլ արտացոլվել է լճակը և վերող ծառերի տերեները: Վ. Գ. Պողնոսին դրած նամակում Թաղեռոյանն տուում է. «Եյտեղ ես նկարել եմ մի էտյուղ՝ էջմիածնի լճակը. պատշին պլանը ստվերի մեջ է՝ ափին նստած սարկավագով հանդերձ, որը իբրև սիրունա գծագրված է տատանվող ջրի թափանցիկ փոնի վրա. խնդիրը շատ հնարքաբարական է, չգիտեմ, թի Զեղ դուք կգա՞»: (նկարել եմ նաև մի կանացի գլուխ):

1893—1894-ի ձմռանը Թագեռոյանն ավարտում է Ռատունարանը՝ դիպլոմի համար ներկայացնելով վերոհիշյալ «Միսարի մա՞ր»: Նկարը շատ շանցած զնիվ և գտնվում էր Գերժանովսկայացի կոլեկցիայում: Մենք առիթ չենք ունեցել տեսնելու այդ նկարը. զրա էսթիզները չեն պահպել, այնպես որ այդ գործի մասին կարծիք հայտնելու հնարավորություն չունենք:

Ռատունարանն ավարտելուց հետո Թագեռոյանը Պողնոսի խորհրդով մեկնեց Պետերբուրգ՝ Գեղարվեստների ակադեմիան մտնելու մտադրությամբ: «Կարծում եմ, թե նա (Պողնոսիը) կշռագաւեց, որ երաժշտական նկարչի համար սկզբում գժվար կլինի առանց կողմնակի օգնության իր ապրուուր հողալ. մինչես այնտեղ կինի թոշակ, բայց զրանից՝ կրծիտածն ու այլ պատկերասրահներ: Ես մեկնեցի, սակայն Ակադեմիայի շմառա: Պողնոսիը մի հանձնարարական նամակ տվեց ինձ նկարիլ Մ. Պ. Բոտկինի անունով ու ասաց. «Գիտեցեք նրա Տանապր կոլեկցիան: Անհրաժեշտ է, որ դուք դիտեք Մեմբրանդի, Վան-Դեյկի, Ջուրբարանի, մանավանդ Մեմբրանդի նկարները, որոնցից էրմիտաժում շատ կանք: Սակայն իմ գեղարվեստական զարգացումն այնքան թույլ էր, որ Մեմբրանդը դուք չեկավ ինձ, և զրա մասին ել ուղղակի ասացի Վասիլի Գմիտրիկիշին: Նա զարմացած բացագանցեց. «Ի՞նչ եք ասում, եղիշե՛, պետք է ուսումնասի-

թել նրան»; Երբ Հետապայում ևս ման էի դալիս Եվրոպայի պատկերա-
սրահներում, հասկացա, որ մոլորված էի»¹:

Թագիսոյանի այդ տարիների գեղարվեստական ճաշակի բնութա-
գրման համար Հետաքրքրական է նրա ճիշտառակած դեպքերից մի ուրիշը
ևս վրայինի «Ծխանուշի Գրյուղա» պանով վերաբերյալ, որ ըստ Ճնդի-
նակի Էսքիզի՝ նկարել է Կորովինը Պոլենովի մասնակցությամբ: Երբ
Պոլենովը Թագիսոյանին կանչում է պանոն դիտելու, Վասիլի Դմիտրիի կիշի
քույրը՝ Ելենա Դմիտրիինան հարցնում է Թագիսոյանի կարծիքը պանոյի
մասին: Եղիշեն պատասխանում է. «Տաղանդավոր այլանդակություն»:
«Այդ ասելուց հետո,— զրում է Թագիսոյանն իր հուշերի մեջ, — զգացի,
որ աշնուամենայնիվ այդ զարծը ճնշում է ինձ, և սաստիկ ցանկացա
հրկորոդ անդամ էլ դիտել. ու նոր միայն հասկացա ստեղծագործության
ամբողջ վեհությունը»²:

¹ Ե. Թագիսոյան, Հուշեր Վ. Ֆ. Գոլենովի մասին (անտիոլ):

² Նույն տեղում:

ԷջՄԻԱԾՆԱԿՄ
(1894—1895)

Պետերուրդից վերադարձին Թագեռոսյանը կարճ ժամանակ մնում է Մոսկվայում և ապա մեկնում իր ծննդավայրը՝ Էջմիածին։ 1894 թ. աշնանը Թագեռոսյանը նկարչության գասատուքը Ճեմարտնում։ Սկզբում նաև նիմիադրում էր տեսնել Հարադատներին և շատ շանցած վերադառնալ Մոսկվա։ Սակայն, հանգամանքներն այնպես են դասավորվում, որ նասախպած է լինում մի տարի մնալ Էջմիածնում։ Ահա թե ինչ է գրում նաՊոլենովին, որ այդ ժամանակ գտնվում էր Հռոմում։ «Չնախատեսված հանգամանքներն ստիպեցին ինձ մնալ Էջմիածնում որպես հոգևոր ճեմարանի գասատու։ Հավանորեն այդ «Չնախատեսված հանգամանքները» նյոթական գֆլարություններն էին։ Նկարչության գասատուի պաշտօնքայինքն էլ ծանրաբեռնող չէր և չէր խանդարում երիսասարդ նկարչին՝ ստեղծագործական աշխատանքով դրադվելու, այնպես որ Էջմիածնում անցկացրած այդ մեկ տարին բավական արդյունավետ եղավ։ Պոլենովին։

¹ Նամակ Վ. Դ. Պոլենովին՝ 15-ին-95 թվակիբ։

զրած նույն նամակում նկարիչն ասում է. «Այս ձմռանը նկարեցի երեք կտավ. մեկը մի արշին երկարությամբ, կոշխում է «Փաստիարակություն» վանական ուսուցանում՝ և աշակերտներին։ Այս նկարը ցուցադրվեց մեր Արվեստասիրաց ընկերությունում. մյսս, երկու արշինանոց նկարը կոչվեց «Ֆեափի պանդսառվթյուն»։ — Հայրն ու տղան եկել են դերեցմանատում՝ հրամեցաւ տալու Հարավատաների շիրմներին, քիչ հեռու սպասում է մի հոգածի ձամփորդակառք. հերորդը՝ «Հոկտեմբեր», նկարի հմ արժեատանցից, ատակի պահանում տնակներ են, պարուներ, իսկ հետեւ պլանում՝ ձյունապատ չեն։ Հիմա ել աշխատում եմ մի խոշոր էտյուդի վրա՝ բնական մեծությամբ մի մուրացկան, մեջքը համարյաթի զիտապին գարձրած, խաչքար համբորելիս. ամբողջ պատկերը սղողված է արեի համանչներուն։ «Ֆեափի պանդսառվթյուն» և «Հոկտեմբեր» նկարները ցուցադրված են Սոսկվաչի նկարիչների ցուցահանդեսում։

Նկարչի այս սկզբնական շրջանի շրու գործերից այժմ հայտնի են միայն երկուսը. «Երկրպատկություն խաչին» (ավարտված է հնատագյում՝ 1901-ին) և «Հոկտեմբեր» պիեզաքանը (Հ. Ս. Սոլենյանի կողեկցիայում՝ Մոսկվա)։ Մյսս երկու «Ֆեափի պանդսառվթյուն» (եկել է Պ. Սիֆերովի կողեկցիայում՝ ելապատրիփա) և «Ըլանքի գլորոց» (եղել է Գ. Բորիսովի կողեկցիայում՝ Թրիլիսի) նկարների ճակատագիրն անհնայտ է։

Եթե մենք այժմ հնարամորություն չունենք կարծիք հայտնելու թագեռայանի վաղ շրջնի ալս երկու նկարների մասին, ապա դրանցից մեկի՝ «Ֆեափի պանդսառվթյուն» մասին բարեբախտաբար մնացել է նկարչունքի և. Պ. Պոլենովայի կարծիքը. Թագեռույանին դրած նամակում Պոլենովան ասում է. «Անյալ տարի շատ ուրախացա՞ Զեր նկարները տեսնելով. զրանցից մեկը շատ հավանելի թի՛ գունանկարչության, թի՛ կոսմոպիցիայի և թի՛ արտահայտության իմաստով։ Զափազանց անկեղծ և միաժամանակ խստապահանց մի մարդու, ինչպիսին է Ե. Պ. Պոլենովան, այս կարծիքը շի կարելի համարել որպես պարզ սիրալիբության արտահայտություն։

«Ֆեափի պանդսառվթյուն» և մի ուրիշ, մեզ բոլորովին անհայտ «Թագեռամների հետ» նկարները ցուցադրվել են 1896 թվականին, Երշիկների 24-րդ ցուցահանդեսում։ Վ. Պ. Պոլենովի արթուրով (Տրիայակովյան

1 Թագեռայանի ձեռքով կազմված գործերի ցուցահում այս նկարը նշված է «Կանքի գլորոց» անունով։

պատկերասրած) պահված է Երշիկների ընկերության ցուցահանդեսների վերաբերյալ կարացած ընդհանուր ժողովի 1896 թ. փետրվարի 3-ի արձանագրությունից մի քաղաքած, որի մէջ ըսրված է Թագեհոսանի վերոհիշյալ երկու գործերը ցուցահանդեսի համար ընդունելու աթիվ տեսքի ոճեցած քվարկության արդյունքը: Ընկերության՝ քվարկությանը մասնակցած 24 անդամից 20-ը քվարկում են հօգուտ «Թիզի պանդխառն թյուն» և 16-ը՝ հօգուտ «Բարեկամների հետ» նկարներն ընդունելու: Այդ նիստին Ընկերության անդամներից ներկա են եղել ու քվարկել Սերովը, Արխիպովը, Շիշչինը, Մյասունգովը, Կաստակինը, Սամիցկին, Ա. Վասնեցովը, Էկստանը և ուրիշներ:

Պատահական չէր, որ այդ տարիներին թագեհոսանը մասնակցում էր Երշիկների ընկերության, ինչպես նաև նրան մոտիկ կանգնած Սոսկվայի Արվեստականների ընկերության ցուցահանդեսներին: Իր երկրի գեղարվեստական նպատակասալցությամբ Թագեհոսանն, անկատկած, պատկանում էր «Երշիկների» ուղղությանը՝ ուղնանկարչական սրունակության հարելով նրանց երիտասարդ նկարիների խմբին, որի մեջ կային այնպիսի կարկառուն անուններ, ինչպես Սերովը, Էկստանը, Արխիպովը, Ա. Խվանովը, Նեստերովը, Ա. Կարովինը, Մալյուտինը և ուրիշներ:

Բացի այս ամբարտված նկարներից, նա, ինչպես իմանում ենք Վ. Գ. Պոլենովի մասին գրած Թագեհոսանի հուշերից, աշխատել է նաև «Քրիստոս և սատանան» նկարի վրա: «Մալարկեցի Հոռոմ» Վ. Գ. Պոլենովին, — գրում է նա այդ հուշերի մէջ, — շորս էսքիզ՝ «Փորձություն անապատման» թեմայով և խնդրեցի խորհուրդ տալ ինձ: Նա պատասխանեց անմիջապես՝ վերաբարձնելով էսքիզներն այնպիսի գործնական դիտողակիցաններով, որ ամեն ինչ պարզվեց ինձ համար: Նա գրում էր. «Յ-րդ և Դ-րդ էսքիզներում հավանում եմ սատանայի դիրքը: Դատելով Զեր նկարագրությունից՝ Գուք ավելի շուտ ուզում եք պատկերել զաւանցանք, քան թի հայտնացիք (զաւախարսություն), Գևանաբար Քրիստոսին շպատկերե՞լ արդյոք ուրվականին լսող ու ոչ թի նայող և միայն իր ներսում նրան տեսնող: Իմ այս խորհճուրդն իհարկե Գուք չպետք է ընդունեք որպես պարտադիր մի բան, այլ արեք այնպես, ինչպես ինքններ եք զգում: Բացց ահա

մի բան, որ հաստատապես խորհուրդ շեմ տալիս անել — լուսինը ճառանշափացի կամ լուսալսակի ձևով. զա շատ մտացածին կլինի...»:

Պողենովի այս նամակը պատասխան էր նկարչին՝ թևացի ճիշտ լուծման վերաբերյալ ունեցած տարակուզմների մասին: Ահա թե ինչ էր զրել Թարգեռույանը Պողենովին. «Ամենից առաջ կիսնդրեի, որ ուզզակի տանիք՝ արձե՞ վերաբարդին այլ գաղափարը և սին արժե, հապս ինչ ողի՞ս, ինչպես իմ էսքիններո՞ւմ է, թե մի այլ կերպ ևս: Այժմ ևս խիստ կարիք սմնեմ Զեր զիտողություններին և շեմ սկսի նկարել, մինչև Զեկանից օր ճնութիւնն չստանամ: Այս թեման պատկերացնում եմ ևս այլովեհ՝ Քրիստով երկարանի ծովագաճությունից հետո հոգնած զալիս է սովորական տեղը ու պատկում քննելու նա տաքություն ունի, տեղողի մեջ է և ահա սկսում է պատկերացնել մի շար սպի, որն ուզում է փորձության հնմարկել իրեն: Այդ ներքին, բարոյական պատքարն այլիս անկարող լինելով մնայ կապսնենքրի մեջ՝ պատկում է զրանցից և սկսում ստեղծել իսկական թշնամի հանձին սատանացի, և զրանով թիթեանում է նրա թախիծը, ինչպես, օրինակ՝ իր ծանրություն կա հոգուդ վրա, ապա խեղուում է թախիծը, և մինչեւ լաց վինես՝ չես հանգուանա: Հետեւար ևս ուզում եմ այլ տեսիլքը պատկերել որպես զգայախարեւթյուն: սատանան ներկանեամ է Քրիստոսին այլանդակ, տեղի կերպարանքով, և ևս ուզում եմ պատկերել նրան անորոց շրջագիրով. թեև Քրիստոսի համար սատանան պետք է լին միանդամայն հստակ պատկերացում և պետք է նկարվի որպահի շրջագիրով: Հիշում եմ, երբ գիշերօթիկ էի Թիֆիսում և մի անգամ հիվանդացաց, չերմի մեջ սկսեցին հայտնվել մի տասը սատանա, սատանաներն իմ աշքին երևացին որպիս այսանդակ զշլուներ՝ մինչեւ ծնկները հասնող երկար մավերով, և ուզում էին ինչ կերպ էլ լինի խեղզել ինձ: ամեն մեկը ձեռքում ուներ տասը արշինանոց պարան: Ես ծածկվեցի վերմակով, առավոտյան կողմն էր զա, բայց չհամարձակիվցի զուռալ. շուրջ քնել էին իմ զասընկերները: Մասցի այդ վիճակում, մինչեւ առ հնչեց վեր կենալու զանգը, և հենց որ ես լսեցի զանգը, բույր սատանաներն էլ չըլեցին: Այնպես որ կարող եմ ասել, թե որոշ պատկերացում ունեմ շարքերի ու սատանացի մասին: Զգիտեմ՝ հարմա՞ր է այս ձեռվ պատկերել այդ գաղափարը: Ես իհարկի նկատի ունեմ մարդ Քրիստոսը:

Եմ դիտմամբ եմ ուզում սատանային պատկերել ուրվականի ձևով, որպեսող ավելի ընդգծեած տեսիլքը: Այս գաղափարի համար այստեղի Հոգուրականությունը նախառառ է ինձ: Իմ էսքիզներում Քրիստոսը բարձրացել է արունենի վրա և զարժմացած է տեսիլքից: Մտածում եմ Քրիստոսին պատկերել այն զգեստով, ինչպես ձեր նկարներումն է, այսինքն՝ ներքեցից մի երկար, սպիտակ շապիկ, իսկ վերևից վրան քաշել գեղնաշագանակագույն մի աբա՛ վերժակի փոխարեն: Գեանի վրան ընկած լիինից ցուալը, դուց և արախին: № 1 էսքիզը ամենասկզբնականն է: բայց դրանից հետո նկատելով, որ Քրիստոսի զեմքը քիչ է երկամ, ուստի սատիճանարար փոփոխելով՝ նկարեցի № 4 էսքիզը: Սատանան, որպես մի կծկված արարած, պազել է ու մասնացաւցը է անում քարերը: Այսուհետ՝ Սրբելքում, բնդումված է արգան նստել: փողոցներում համար կտևնար պազած խոսում են ինչոր կարենը բանի մասին: Ես կարծում եմ, որ այդպիսի թեման չի կարել վերարտագրել փորբագիր, այլ սաժենային շափերով: Ինչպես եք Դուք կարծում: Եթե Զեզ համար գժվար չէ, խընդուամ եմ շուտ գրեք, որպեսզի ժամանակին անհրաժեշտ էալուրներն անեմ... Շատ և շատ շնորհակալ եմ Ձեր աված խորհուրդների համար. Հիշման ուղղությունը այլ կերպ եմ վերաբերում խոշոր նկարներին: Զափականց բարեկար ազդեցին ինձ վրա նվաճումի էսքիզները»:

Այս բոլոր հարցերին Պոլենովը պատասխանաց վերոհիշյալ նամակով. նրա գործնական ու գիպոմի գիտուությունները փարասեցին երիտասարդ նկարչի տարակույսները, և ինչպես նա է ասում՝ «ամեն ինչ հստակացավի իր համար: Այս մատաղզացումն այդպիսն էլ շիրագործից շափականց մտացածին ու իրականությունից հնառ էր այսուհն»:

Թագեռույանի Պոլենովին գրած նամակի այս հատվածում խիստ հատկանշական են նաև վերջին տողերը Ալեքսանդր Խվանովի անտվածաշնչականին էսքիզների վերաբերյալ: Չի կարել դրանք մեկնարանել ներ խնամատով, որովհետեւ գժվար է նշմարել Ալ. Խվանովի անհրաժեշտ աղքացությունը Թագեռույանի ստեղծագործության վրա: Սակայն երիտասարդ նկարչի վրա ունեցած նրանց աղքացության բարեկարությունն կաս-

1 Ե. Թագեռույանի նամակը Վ. Գ. Պոլենովին՝ ՅՈՒՆ-25 թվակիբ: «Խվանովի էսքիզները անելով՝ Թագեռույանը նկատի ունի իր ու Պոլենովի նամակը կառուծած նկարները նորիցքի վազաքը եկեղեցու համար՝ ըստ Ակեքսանգը Խվանովի էսքիզների»:

կածից գուրս է: Ամենահավանականն այն է, որ այդ ազդեցությունը եղել է կրկնակ: Առաջին, — և գա բավականին որոշակի նշում՝ է ինքը՝ Թագեռսյանը, — այնպիսի մի աշխատանք, ինչպիսին է իվանովի էսքիզներից մեծ կտավներ նկարելը, այն էլ Վ. Դ. Պոլենովի նման խոշոր ու փորձված նկարչի հետ, չեր կարող անցուշա սքանչելի կարոց վիճել երիասարդ նկարչի համար: Բայց կարծում ենք, որ զիմանիքն այս չեր, և բարեբար ազդեցություն գործեցին նաև Իվանովի էսքիզները, որպես այդպիսիք: Ի բնե գեղարվիստական ճիշտ հուսառությունը օժտված Թագեռսյանը չեր կարող զրանց մեջ չափանիկ ու չփառաւատել այն, ինչ իրենից առաջ տեսել ու գնաճատել էր սուսական արվեստի ականավոր պատմաբան մ. Վ. Սուսառովը. «...Համակված կենդանին զգացմունքներով ու բնավորություններով, ամենաբազմազան վիճակների ու հոգեկան շարժումների արտահայտությամբ — այս ամենը սաեղուամ է այնպիսի մեծ ու խորապես ծշմարտացի կազմե, որպիսին մինչև հիմա նկարչության մեջ չներ՝ հանդիպել ոչ որի մասու»¹: Այդ բարեբար ազդեցությունը կրել են նաև որիշ շատ նկարչներ, զրանց թվում Գին, Կրամսկոյը, Վրուբելը, թեև սրանց մոտ էլ զժվար է նկատել Ա. Խվանովի անմիջական ազդեցությունը: Այլի որդի է, անշուշտ, խոսել որ Իվանովի էսքիզները Թագեռսյանի համար նույնպես եղել են կոմպոզիցիոն վարպետության հիմնավի դպրոց:

Թագեռսյանի՝ էջմիածնում եղած ժամանակ Վ. Դ. Պոլենովի հնա ունեցած նամակագրությունից կարելի է տեսնել, թե որքա՞ն դժվար էր աշակերտական նատարանից ուղղակի էջմիածին ընկած երիասարդ նկարչի համար աշխատել այսպես՝ չունենալով այնպիսի մի մարդ, որը կարելի գեղարվում կարողանար տայ անհրաժեշտ խորհություն և որին կարելի լինել հաղորդակից դարձնել իր ստեղծագործական տարակույսներին, խորհուրդ ստանալ զուտ պրոֆեսիոնալ բնույթի այս կամ այն հարցում:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում այդ տարիներին էջմիածինը, որտեղ անց էր կացրել Թագեռսյանի իր մանկական տարիները և որտեղ ապրեց մոտ մեկ տարի ևս՝ 1894—1895 թվականներին: Մի քանի հազար բնակիչ ունեցող՝ քաղաքի ու ավանի բավական լուրացիք զուգորդումն էր նա: Նրանք, որոնք վանքի հետ չեին կապված, էջմնականում վրազվում էին

¹ В. Стасов, О значении Иванова в русском искусстве, Избранные сочинения, т. II, стр. 82. Изд. „Искусство“, 1952.

այսեպործությամբ, իսկ մյուս կողմից դա հայոց կաթողիկոսի աթոռաւունը էր և վանքը ուսումնական երկու հաստատությամբ՝ Հոգեոր ճեմարանն ու լաբարանը, հայերեն ձեռագրերի աշխարհահռչակ կոլեգիալյավ, մի փոքրիկ թանգարան՝ բացատիկ արժնք ունեցող մի քանի պատմական ու գեղարվեստական հուշարձաններով: Վերջապես էջմիածնում ու նրա շրջակալիքում կային հայ ճարտարապետության նշանավոր կոթողներ, ինչպես Մայր տաճարը, Հոփիսիմեի վանքը ու Զվարթնոցի ավերակները, որ այդ տարիներին զինևս պեղված չէին: Ճեմարանի պասախոսական կազմում կային բավական շատ կուլտուրական մարդիկ և նովինիկ խոր գիտնականներ, ինչպես Մ. Սենյանը, Հ. Ամայանը, Հ. Մանավանը և ուրիշներ, որոնց հետ շփվելը կարող է խիստ օգտակար լինել Թաղոսյանի համար, բայց իհարկե ոչ պրոֆեսիոնալ հարցերում: Ամենից ավելի մոտիկ հարաբերություններ ուներ նա բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի հետ, որին ծանոթ էր զինևս Մոսկվայից և որոշ շափով նրան էր պարտական Նկարչական ուսումնարան մոնելու համար:

Այստեղ՝ էջմիածնում էլ Թագեռույանը ծանոթանում է ու մտերմանում ականավոր կոմպոզիտոր Կոմիտասի հետ, և շուտով նրանց հաստատվում են բարեկամական սերտ հարաբերություններ: Կային և մի քանի ուրիշ մարդիկ Ճեմարանի գաստանական կազմից, ինչպես նաև զանիք միաբանությունից, որոնց հետ հարաբերելը աշխատացնում էր տաղոկալի կլանքը: Աշխատացնում էր միայն, որովհետև Թագեռույանը շատ էր հեռու այն ժամանակվա էջմիածնի իսկական «կյանքից», որ կազմված էր Տղմիմ փառասիրությունների, թափայամոլության ու գավերի պայքարից, որը արտաքին բարետնուության դիմակի տակ կրծում էր հայրապետական մայր աթոռի վանական սպասավորների միաբանությունը, էջմիածնի այդ «կյանքն» ուներ, իհարկե, իր բավական ուժեղ ոռոցիական տրամաբանությունը՝ կաթողիկոսի վրա ազգելու, եկամտարեր թիմեր, լավ պաշտոններ ստանալու տրամաբանությունը: Այս երեսությունները չէին կարող խորթ լինել երիտասարդ նկարչին, որ նոր էր թիվակունել գեղարվեստական ինքնուրույն գործունեության ուղին և ամբողջության ապրում էր իր արվեստի շահագրգություններով:

Էջմիածնում անցկացրած մեկ տարվա ընթացքում Թագեռույանը ու միայն աշխատում էր նկարների վրա, այլև էյցուդներ էր անում: Այդ շրջանի պեյզաժային էտյուդները ցուց են տալիս նրա, որպես նկարչի,

մեծ աճը: Դրանց մեջ Թագեսոսյանն արդեն հանդիս է դալիս որպես պետականի միանգութային հաստոն վարպետ: 1895-ին Թագեսոսյանը շրջադարձը է Գարալազյաղում (այժմ Ազգը եկուսի շրջան) և այնտեղից բերում մի քանի սքանչելի էտյուգների, որոնց ինչպես կը քանից քիչ առաջ կատարած վաղարշապատյան էտյուգների, մեջ բացահայտվում է բնության, նրա նուրբը, գեղանկարչական ընկալումը: Ապշեցուցիչ թարմությամբ է վերաբարձրված կանաչը էջմիածնի շրջակայքում կատարված գարնանացին և Գարալազյաղի ամառային էտյուգների մեջ, որոնցից առավելագույնը հաջող պետք է բնուանել երկուսը՝ «Արայի լեռը» և «Քոչը դետի տիփին»:

Թեև էջմիածնում արվեստագետների միջավայրի բացակայությունը, որ այնքան սուր կերպով զգում էր նկարիչը, ստիպեց նրան շուտով վերաբառնալ Մոսկվա, այնուամենայնիվ հայրենիքում լինելն, անկանած, ունեցավ նաև իր գրական կողմբ: Ապրելով այդտեղ՝ նկարիչը հնարավորություն ուներ դիտել հարազատ ժողովուի կյանքը և նյութեր, թեմաներ քաղել իր աշխատանքների համար, իսկ դա քիչ բան չէր, մանավանդ եթե նկատի առնենք այն աշխույժ հետաքրքրությունը դեպի կենցաղն ու բնությունը, որ նրա ամբողջ զործունեության ընթացքում այնքան հատկանշական է եղել: Եվ վաստակավորությունների այն պաշարը, որ ստացավ Թագեսոսյանն իր հայրենիքում, հանդիսացավ այն ազրյուրը, որ սնուցեց նրան հնատապ տարիներին Մոսկվայում աշխատելիս: Հստ նրա ասածի՝ որոշ նկարների սյուժեները (օրինակ՝ արդեն հիշատակված «Երկրպագություն խաչին», ինչպես նաև դրանից որոշ ժամանակ անց նկարված «Կեսօրյա ճաշ» և «Քարող ուղղագավաններին») անմիջականութիւն դիտված էին Հայաստանում:

ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄՈՍԿՎԱ

ԹԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆՑ Վ. Գ. ԵՎԼ. Ե. Գ. ՊԱԼԵՆՈՎՆԵՐԻ ՀԵՏ

1895-ի աշնանը թաղեռոյանը վերագանցում է Մոսկվա: Հաջորդ վեց տարիները, որ անց է կացնում նաև այդտեղ, նրա նախառովհատական կյանքի ամենալիարժեք տարիներն էին ոչ միայն այն պատճառով, որ իսկան արդյունավետ էին, այլև նրա համար, որ նա հնարավորություն ուներ ամբողջովին նվիրվել արվեստին: Թափեռոյանն արագ զասլամ է մոռկովան նկարիչների առաջին շարքերը: Դա ոչ թի պատահական հաշողություն էր, այլ հետևանք հիրավի մեծ ու արտասովոր տաղսնդի, որը վստահելիորեն հենված էր լուսը ու ինտենսիվ աշխատելու կարողության և այն խորհուրդների վրա, որ առլիս էին նկարչին տռանձնապես մոտիկ Վ. Գ. Պոլենովը և Ե. Գ. Պոլենովան:

Թափեռոյանը զառնում է Պոլենովների մտերիմ ու մշտական այցելուն: Նրանց տանը պատահում է ոչ միայն բազմաթիվ ականավոր ու անվանի նկարիչներ՝ Ռեպինին, Սուրբիկովին, Վ. Վասնեցովին, Լեփտանին, Ս. Մալյուտինին և ուրիշների, այլև երաժիշտների, արտիստների և

ընդհանրապես առաջակիր գոզարվեստական, երաժշտական ու արտիստական Մոսկվային: Այստեղ ի գևազ հիշատակենք, որ Վ. Պ. Պոլենովը ոչ միայն երաժշտության մեծ սիրահար էր, այլև ինքն էլ էր հորինուունական գրի: «Հեղափայի սրբականները» օպերան, որ բնմադրվեց կոնսերվատորիայում, բայց որում ինքն էլ ներկայացման ձևավորուն էր: Վ. Պ. Պոլենովի հետ ունեցած բարեկամությունը այնպիսի նշանակայի տեղ է գրավում ն. Թագինոսյանի կյանքում, որ չի կարիվ կանգ չառնել գրագրա: Նրանց մտերմական հարաբերությունները, որ սկիզբ էին առել Թագինոյանի նկարչության ստուդիանում տիվուրերու վերջին աարիներից, այժմ վերածվեցին ամենաակնեղջ բարեկամության: Սակայն, ամբողջ ժամերմանիւմ հանդերձ, Պոլենովը Թագինոսյանի համար միշտ մնաց այս ինչ մենք՝ հայերն անվանում ենք «վարպետ», իսկ Գրանսիացիները՝ «միթր»: Վարպետը ոչ միայն ուսուցիչ է բարի ուղղակի իմաստով, այլ ամելի լայն հասկացություն է, վարպետ է նաև, ով հասնելով իր արժեստի, արհեստի կամ գիտության՝ գաղափին՝ գառնում է ոչ միայն իր սկզբունքների, այլև կիսնական վեճ կանոնների և զրանց միջոցով էլ կյանքը պահանջական իմաստության մատացողը: Դրա համար էլ «վարպետը» նաև և առաջ էթիկական հասկացություն է: Որովհետեւ այդ անունը կրելու արժանի ժամանքը ոչ միայն և ոչ պարզապես ուսուցիչ է, այլև մի վեհանձն ընկեր: Ահա ացգափիսի վարպետ էր նդիշել Թագինոսյանի համար Վ. Պ. Պոլենովը, մի վարպետ, որի անունը երախտագիւղ աշակերտը սիրող սրտով ու մտքով արատբերում էր միշտ երկուութածությամբ, որի հայտացրներն ու զատողությունները գերազուն շափանիշն էին արվեստի ու կյանքի մեջ:

Եվ պետք է յարծանին հասուցել Պոլենովին. շատ բան տվեց նա իր երասմեկ բարեկամին, ավելի թերեւ ամենապլիսավորը՝ աշխարհազգացողության անհերերություն, սաստիկ հետաքրքրություն ոչ միայն աշխատանքի, այլև այն հոգին երկուութիւն կատամամբ, որը կոչված է կյանք: Ազգափիսի գտակը չին մոռացված և ոչ միայն պարտավորեցնում էն, այլև ողջ կյանքում բարեկամացնում: Վ. Պ. Պոլենովի հետ ունեցած ամեն մի հանդիպումից հետո Թագինոսյանը առն էր վերադառնում բարոյապես ու մտավորապես հարսացաց: Իսկ նոր Թիֆլիս փոխազդեցիւը պոկեց նրան բարեկամին հաճախակի հանդիպելու հրձանքից, ապա դրան փոխարինեցին նամակագրությունը և ամառային ուղևորությունները Պոլե-

նովի «Թորոկ» գաստակերտը՝ Տարուայի մոտ, Յկայի ափին: Այդ ուղևառություններից Թագեռույանը բերում էր ոչ միայն նոր գործեր ու մտահղացումներ, այլև զաղափարների ու պատկերացումների թարմ պաշար մարդկային գիտելիքների ու գործունեության գրեթե բուրը մարդկային որոշներու առաջադիմությանը անխոնչ հետեւում էր ծերացող ուսուցիչը: Պալենովը ոչ միայն խոշոր նկարչ էր, այլև հասարակական մեծ գործիչ: Նրա այս հատկությունը առավել ևս հարգանք էր ներշնչում աշակերտին: Թագեռույանը հիացմունքով էր խոսում Պոլենովի՝ Մոսկվայում՝ Հիմնած Ժողովրդական տան մասին, որին արփած էր նկարչի անունը, սիրով էր Հիշում, թե որքան շատ բան էր արել Պոլենովը շրջակա զյուղացիների համար, ինչպիսի պատրաստակամությամբ էր օգնության հասնում նրանց՝ գործուն խորհուրդով, կարեկցությամբ, նրանց երիխաններին հոգ տանելով: «Մի անգամ կարգով գնում էինք կալվածքը, և ես զարմանորով տեսա, որ Վասիլի Դմիտրիկից շավասելով գեմից եկող զյուղացիների բարեկին, ինքն էր գտակը հանում և բարձրաձայն ողջունում: բարեկ»¹:

Պոլենովի զաղափարականությունը, նպատակամնեսությունը և անմիշականությունը հրապարակում էին Թագեռույանին, որովճառե ապշեցուցիչ ճշմարտությամբ արձագանքում էին նրան սեփական հոգեկիցներին: Եվ ով թեկուզ մի քիչ ճանաչել է Թագեռույանին, նրա այնքան սրտառուակնածանքով գոած ճուշերը կարգալուց հետո, Վ. Գ. Պոլենովի ակամա կտեսնի մի ուրիշ՝ աշակերտի պատկերը, որ իր շատ կողմանու այնքան նման էր ուսուցիչ բարեկամին:

Թագեռույանն ինքը բացահայտուեն գիտակցում էր, թե որքա՞ն շատ պարտական է իր ավագ բարեկամին և երբ 1924 թվականին Մոսկվայում տոնում էին Պոլենովի 80-ամյա հորեւանը, և կառավարությունը պարզեատրեց նրան ժողովրդական նկարիչ բարձր կոչումը շնորհելով՝ Թագեռույանը գիմեց նրան հետեւյալ պատառու տողերով:

«Ես կուզենամ, որ Զեր Մեծ տոնին իրականանան Զեր բուլոր երազները Ռուսի հմ, որ հասարակությունը վերջապես արթնացավ ու հիշեց Զեզ: Իսկ մենք՝ Զեր ապերախտ և ամեն կողմ սփուլած աշակերտներս, հանցավոր ենք, որ մինչև Հիմա ոչ մի անգամ չենք կարողացել մհծարել Զեզ... ես, Զեր կրտսեր աշակերտներից մեկը, համակված հմ Զեր հան-

1 Ե. Թագեռույան, Հուշեր Վ. Պոլենովի մասին (անտիպ):

գեալ սիրով ու ակնածալի երախտագիտությամբ, որովհետև պարտական եմ Զեղ ոչ միայն նկարչության վերաբերյալ տված Զեր խրատների, այլ դրանից շատ ավելիի համար, պարտական եմ Զեղ բարոյական դաստիարակության, Զեր անձնական օրինակի համար: Քանի՛ նըշանիկ տարիներ եմ ևս անցկացրել Զեղ հետ, Զեր զեկավարությամբ: Ամենի համար սրտանց ու հավիտյանս շնորհակալ եմ: Համբուրում եմ Զեր աչ ձեռքը, որն այնքան շքնաղ բաներ է ստեղծել»¹:

Անկարելի է պատկերացնել, որ բարոյական այսախիս ազգեցություն գործած Պոլենովը որպես նկարիչ ևս ազգած Ալիներ Թագեռույանի վրա: Բայց ինչպէ՞ս և նշչի՞ մեջ է արտահայտվել դա: Ամենեւին էլ դա չի նկել աշակերտի ընդօրինակումն իր ուսուցչից: Չի կարելի այդպիսի բան նշմարել անդամ Թագեռույանի վաղ շրջանի գործերում: Յակայն այդպիսի ազդեցություն վիճելու ամենավակներկ օրինակ են Թագեռույանի այն գործերը, որ նկարել է նաև Պոլենովի հետ Եղիպատոսում, Պաղեստինում և Սիրիայում 1899 թվականին: Դրանց զուգագրումը ցուց է տալիս, թե որքան ասրբեր ձևով էին երկու նկարիչներն ընկալում այդ վայրերի բնությունը: Պոլենովը իր ամբողջ սեալիկմով ու վարպետությամբ այդ վայրերը՝ արևախանձ պեյզաժները վերարտադրում էր, ասես, ծխապատ ապակու միջով, մեղմացնելով գուների խիստ, կոնտրաստային գուգորդումները: Բոլորովին այլ են Թագեռույանի պեյզաժները: Կատարման վարպետության իմաստով զիշելով իր ավագ բարեկամին՝ Թագեռույանն ավելի մոտիկից էր զգում այդ վայրերի երանգը, որոնք շատ բանով համամատն էին իր հայրենի Հայաստանի պեյզաժներին: Այս կողմից Պոլենովը, որպես նկարիչ, անմիշական ազգեցություն չուներ Թագեռույանի վրա նաև հետաքայլամ, երբ սա լիովին ձևավորվեց ու գրանորեց իրեն:

Պոլենովի ազդեցությունը Թագեռույանի վրա արտահայտվեց այլ բանում: Թագեռույանի ստեղծագործական պատկերի մի քանի գծերը և ամենից առաջ հետևակաները՝ գաղափարական նպատակասացություն, ձշմարտության ամենազոր ձգտում, գեղարվեստական շահագրգություն, ազմագագանություն, թեմատիկ դիապազոնի լայնություն, առաջավոր սուսական արթեստի այս բնորոշ գծերը, որ հատկանշական են՝ Պոլենովի արվեստի համար—անկասկած ուսուցչի՝ աշակերտի վրա

1 Ե. Թագեռույանի նամակը Վ. Գ. Պոլենովին՝ 10-IV-24 թվակիր:

գործած ազգեցության հետևանք՝ ևս: Կարելի է բերել նաև թեմատիկայի ընտրության մեջ արտահայտված ազգեցության առանձին, կոնկրետ օրինակներ: Օրինակ, Պողենովի՝ ավետարանական թեմատիկայով «Հավատակալվելը արտացովիկ» է Թագենույանի ժողովականի մուա նրա «Քրիստոս և փարիսեցիներ» նկարում: Ու թե Թագենովի կերտած կերպարից, այնամենայնիվ նրա, որպես քարոզչի, հիմնական մեկնաբանումը, որ բխում է է, Իրենանի այդ աարիներին մողագական զարձած զրիֆ, Թագենոյանն ընկալի է Պողենովի նկարների միջոցով: Նրա ազգեցությամբ Թագենոյանը վարժվել է նկարի փարբածավալի հայութացին պերցամներ, ինչպես նաև Հետաքրքրությունի է կատարման տեխնիկայով, նոր արվեստամբ քիչ սավորական միջոցների, հատկապես բնական խիճերից սահեղվող մողագակայով: Մողարկացի մի քանի այգափիսի գործեր ոճի Թագենոյանը՝ «Ծննդնանկար» (1907), «Վոլլա Նասրեդդինի յոթը էշերը» (1896) և «Կատուն» (բուլարու համար, 1896):

Վեցերու Յ. Վ. Սահարավան հայունց ինձ հետեւյալ հատվածը վ. Պ. Պողենովի իր բույզը գրած նամակից: «Ակրագարձնում ենք Եղիշեին: Նա կարծես թի չի զանգավաճմ, բայց եկ տես, որ, ի միջի ալլոց, գարձել է հիանալի խճանկարից, կերտել է մի զարմանալի պատկեր (Մոլլա Նասրեդդինի յոթը էշերը – ծան. Յ. Ա.), ես նրան առաջարկում եմ ապագա խճանկարչական արվեստանոցների պիբեկաորի պաշտոնը կրկնակի սոճիկով: Ես էլ հավատակալված եմ նշել այդ գործով... Մենք՝ արվեստագետներին՝ հանդիսական է պեսր աշխատանքը բազմազանելով. այն, ինչ կորցնում ես բնակապես, վերագրածնում ես որակապես» (Բորոկ, 1896, հոկ. 5):

Արվեստի մյուս տեսակներից, որոնց մեջ կարող էր երևան գալ Պողենովի ազգեցությանը, կարելի է նշել երաժշտությունը, որը Թագենոյանը ոչ միայն սիրում էր, այլև փորձում հորինել՝ ամենայն հավանականությամբ անմիջականորեն հետեւյով ուսուցչի օրինակին:

Բայց որքան էլ բազմաթիվ ու բազմապիսի լինեն այդ ազգեցության օրինակները, այնուամենայնիվ դա չի հանգել ընդօրինակության, և կրելով զա՝ Թագենոյանը հիմնականում մնացել է միանդամայն ինքնուրույն նկարից: Խուզնիսկ Թագենոյանի այնպիսի, թեմայի ու գաղափարական իմաստով, պողենովիան նկարը, ինչպես «Քրիստոս և փարիսեցիները» թե՛ կոմպոզիցիոն, թե՛ գեղանկարչական տեսակետից լուծված է բոլորու

մին ինքնուրույն: Խակ եթե Թագեսոսանին զիտանք միայն սրպիս նկարիչ: միւլուծենք նրա որոնումներն այդ ասպարեզում, գուշնի ու հրանդի նրա զգացողությունը և այն, այսինքն նրա հիմնական գունանկարչական հատ՝ կությունները, ապա այսաեղ Պողենովի ազգեցության փոքր ի շատել նկատելի հատքեր երեան հանելու հնարավորությունը հարկ կլինի բացառված համարել:

Այդ տարիներին էլ շափականց բարեկամական հարաբերություններ են հաստատվում Եր. Թագեսոյանի և Վասիլի Դմիտրիինիշի քրոջ՝ Ելենա Դմիտրիինա Պոլենովայի միջեւ: Այդ բարեկամությունը տևեց մինչև նկարչությունը (1898): Թագեսոյանը Ելենա Պոլենովայի հետ ծանոթացել էր գետես 1893 թվականին, առկայն մտերմացել էր միայն 1893-ին: Մուսկվա վերադարձին, հջոմածնում մի տարի մնալոց հետո: Թագեսոյանը յան տարով փոքր էր Եր. Պ. Պոլենովայից, որն այդ տարիներին արգեն ձեւագործած նկարիչ էր: Պոլենովայի ազգեցությունը նույնական մեծ է եղել Թագեսոյանի վրա: Նրա մասին Թագեսոյանի գրած հուշերը թույլ են տալիս ոչ միայն զնահատելու Եր. Պոլենովայի հետ ունեցած բարեկամության անկիցնությունը, այլև արժեքավոր նյութ են տալիս հասկանալու Թագեսոյանի որպես նկարիչ ձեւագործինուուրը և ամենից առաջ այն, թե այս տեսակինից որբան պարագական էր նա այս նկարչություն:

Աշա թե ինչ է Թագեսոյանը գրում Եր. Պ. Պոլենովայի մասին իր հուշերում: «Ես այնքան շնորհակալ եմ նրան, նա իմ միակ բարեկամն էր, որին հագործում էի մտքերս: Ես շատ բանի նկատմամբ բացեց աշխարհ: Ես ամբողջություն հավատում էի նրա սահմանումներին: Նրա ասությունները միշտ էլ անկեղծ ու համոզիչ էին, ամեններն ու տափակ: Եր. Պ.-ն ասում էր, «Արվիստը խանդսու է, նա պահանջում է, որ ամբողջ էությամբ նվիրվելս նրան և ոչ մի շեղում ու գավաճանություն չի հանգուրժում: Հենց որ մի քիչ զավաճանեցիր, այնպիս կձագկի քեզ, որ երկար ժամանակ ուշի շեմ զա...»: Չուդովակի նրափողոցում, Զիստին Պրուդիից քիչ հետու, Ելենա Դմիտրիինայի բնակարանում ևս ծանոթացան նաև նկարիչ Ա. Յա. Գուլիսինի հետ, որ ինձնից առաջ սկսել էր լինել ախտելու ու աշխատելու: Ես միացա նրանց: Սահղօթեց ընդհանուր արժեստանոց: միասին թեյում էինք, միասին զնում համերգ, ամուսնն էլ՝ Կենդանաբանական ալգին: Ա այն: Ելենա Դմիտրիինան հետևում էր մեզ ինչպիս դայակը երեխաներին: Նա մեղանից մեծ էր, ինձանից շատ ավելի փորձված: Եվ այնպիսի

տաղանդով, առանց դասի առաջնորդում էր գեղի նորանոր մտքեր՝ բազմազան աշխատանքներում: Գոլովինն արտակարգ հեշտ էր յուրացնում նկարչական տեխնիկան. Ելենա Դմիտրիինան շատ էր գնահատում այս հատկությունը: Գոլովինն էլ մեծ էր ինձանից: Նկարչական ուսումնարանն էլ ինձանից առաջ էր ավարտել և, իհարկե, ավելի փորձված էր: Երեք տարի մենք համարյա մշտապես ապրում էինք Մոսկվայում և գրեթե ամենօր տեսնում իրար... Ելենա Դմիտրիինան ու Գոլովինը հաճախ էին եղել Արևոտքում: Իսկ ես այդ ժամանակ նվորպան չեմ ճանաշում: Ինձ համար իմաստ հետքրքրական էին նրանց պատմություններն՝ արևմտյան արվեստի մասին: Ես սաստիկ ուզում էի անձամբ, իմ աշքով ամեն ինչ տեսնել տեղում: Մեր ընկերությանը միացավ նկարչութիւ Վիլյամսը, որի մոտ հավաքվում էինք երեսն՝ օգտվելով նրա սիրավեր հյուրընկառաթյունից: Սակայն, ամենից ավելի հանդիպում էինք Ելենա Դմիտրիինայի ընակարանում: Չուդովակի նրբափողցի նրա տանը կից կար մի պարտեզ մի քանի ծառով: Գարնանն ու ամռանը նույնիսկ կարելի էր այդտեղ՝ բացօթյա նկարել Այդ պարտեղում Գոլովինն ինձանից մի էտյուտ նկարեց ընդունի սպիտակ ապարագուլ, միայն թե զլուխը պրոֆիլ (Ելենա Դմիտրիինայի խորհրդով): Մի խոսքով այնքան սքանչելի շրջան էր դա և այնքան արդյունավետ էր ընթանում, որ մոռանալ շեմ կարողաւ:

Ելենա Պոլենովան լինելով «օդողովդական» ցուցահանդեսներին կաղմակերպիչներից մեկը, դրանց մասնակցելու էր Գրամբիրում նաև Թաղեռնայանին: Ժողովրդական ցուցահանդեսներ կազմակերպելու միութքը հղացել էր Նկարիչների մոսկովյան ընկերությունը: Մրագիրը կազմել էին ասավածաշնչային և ռուսաց պատմության այլօնեներից: Ելենա Դմիտրիինան Պոլենովան այդ գործի մեջ ներգրավվեց նաև իր եղբորը, Սերովին, Մայուստինին, Գոլովինին և ուրիշների: «Փեկ այդ միտքը բոլորին էլ ոգևորում էր, սակայն իրականում պարզվեց, որ մեղանից շատերի գրստանը չի ներում այդպիսի մեծ ծախսեր կատարել, քանի որ ենթադրվում էր նկարել բավական մեծածավալ նկարներ, անշաւշտ ենթաշրջանակներով, ապա կտավներն ու ներկերը պահանջում էին գումար, իսկ որտեղի՞ց գտնեինք դա... Զնայած Ելենա Դմիտրիինայի հռանդին ու հնարամտությանը, այդ ցուցահանդեսները կազմակերպելու ճանապարհին պատա-

1 Ե. Թագեռութան, Հուշեր Ե. Դ. Պոլենովայի մասին (անտիպ):

Հում էին լուրջ, գլխավորապես նյութական, խոշընդուներ, և այդ նախաձեռնությունից բան գուրս չեկավ: Հաջողվեց կազմակերպել միայն էսքիզների ցուցահանդես:

Բայս երկույթին, հատկապես այդ ցուցահանդեսի համար է Ե. Թադեոսյանը նկարել «Նոյել անիծում է Քամին» (1895) և «Հարուստ ու աղքատ Զաղարոսի առակը» (1897) էսքիզները:

Ելենա Դմիտրիինան շահարդռեց Թադեոսյանին նաև աշխատելու պարագաների ասպարեզում. «...Ես տեսա, թե ինչպես էր նա զարդանկար կազմում. «Փորձեցեք, խիսա գրավիլ է նախշ կազմելը, — ասաց նա, — մերցըք մի որեւէ տարր և կրկնեցեք ուղիղ ու հակառակ դիրքով»: Փորձեցի և տեսա, որ գորս է գալիս Հափշառակելիցի դրանով, և նա հետադայում էլ բազմաթիվ արժեքավոր ցուցումներ տվեց ինձ: Ես զարդանկարուի լորի մի ամբողջ ալբում: Բայց հետաքրքրականն այն էր, որ Ելենա Դմիտրիինայի բոլոր զարդանկարները ուսական ոճով էին ստացվում, իմ իմը՝ արևելյան: «Ձեզ թվում էր, — ասաց Ելենա Դմիտրիինան, — որ զարդանկար չկ կարելի հորինել, որ մարգու մեկը արդեն հորինել է դա. Աս էլ առաջ ալդաս էի կարծում»: Ես ասացի. «Նկարիչ Սովենյանից հմանկալել զարդանկարները հին հայ ձեռագրերից ընդօրինակելու եղանակը»²:

Ելենա Դմիտրիինայի վաղաժամ մահը մեծ հարված էր Ե. Թադեոսյանի համար: Նա որբացած զգաց իրեն: Վերհիշեց Պերովի «Գեղշկական հումարկավորություն» նկարը. «Կարծես ես դադար կը որող որբերից մեկը լինեի՞»³:

Հայաստանից Մոսկվա վերադառնալուց հետո, հաշորդ երկու-երեք տարիների ընթացքում, Թագեոսյանն զբաղված էր էջմիածնում մտահղացած երկու կտավները նկարելով՝ «Կեսօրյա ճաշը» և «Քարող ուզգադաշտաններին»: Այս երկու, ինչպես նաև էջմիածնում նկարած «Վանքի դպրոցը» և «Օտարության մեջ», նկարների սյուժեն Թադեոսյանն անմիջականորեն դիտել էր Հայաստանում անցկացրած ամիաներին: Երկու նկարն էլ ցուցադրվելով Մոսկվայի արվեստասերների 1898-ի կոնկորսում՝ արժանացել էին մրցանակի. առաջինը Ն. Ս. Մալուգինի, երկրորդը՝ Ռեպինի:

¹ Ե. Թադեոսյան, Հուշեր Ե. Պոլենովայի ժառքն (անտիպ):

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

ու Պուենովի մրցանակին՝ ազատ ժամկի համար: Միաժամանակ նույն նկարչին երկու մրցանակ տալը ու միայն ուշագություն հրավիրեց: Եւ Թագեռավանի վրա, այլև արվեստագետների շքանակում շատ խոսակցությունների անդիք ավեց: եղան նաև այդ որոշումից դժու՞՞ մարդիկ: թեև Թագեռավանի նկարները պարզեատրած հանձնաժողովը կազմված էր այնպիսի ականավոր նկարիչներից, ինչպես Վ. Պոլենովը, Վ. Սերովը, Կորովինը, Ա. Արխավովը և արդիշներ: «Մոսկովսկին վելումուտի» թիրթի 1899 թ. հոնվարի 1-ի համարում տպված էր «Նամակ Հայուարակչն», որի մեջ Արվեստասերների մուսկովյան ընկերության տասերեք անդամների ստորագրությամբ հայտնվում էր, որ համաձայն չեն հանձնաժողովի որոշմանը: Բացի նկարիչ Գ. Մյասուելովից, որ այդ բողոքի նախաձեռնողն էր և ստորագրություններ էր հավաքել Ընկերության անդամների մեջ, այդ ստորագրությունների թվում չենք գտնում շատ թիւ քիչ ականավոր նկարչի կամ արվեստի գործիք անուն: Գրանք ինչ-որ սակավահայտ նկարիչներ էին և այն ժամանակ, իսկ Հիմա բոլորովին մոռացված էն: Թագեռավանի պարզեատրված նկարները բազմաթիվ վեճեր առաջացրին նաև Արվեստասերների մուսկովյան ընկերության XVIII պարբերական ցուցահանդեսի այցելուների մեջ: Նկարները լուսված շմատնեց նաև մամուլը: Մոսկովյան լրագրուում, ցուցահանդեսի ժամանակ տպված ունեցել են գիտական կարծիքով հատկապես աչքի էին ընկենում երկու թիրթ՝ «Մոսկովսկին վելումուտին», «Բոււտիկին վելումուտին», որոնք առանձին հոդվածներ նվիրեցին դրանց: Ի պաշտպանություն Թագեռավանի, արտահայտվեց «Կուրիքիր» թիրթը որտեղ XVIII պարբերական ցուցահանդեսին վերաբերու նեցենդիայի մեջ զգալի տեղ էր հայտացված մրցանակի արժանացած նկարներին: Իսկ ինչո՞ւ պետք է բացարել այն ամբողջ հարահարոցը, որ ըստ «Մոսկովսկին վելումուտի» հոդվածադրբե՞ բորբոքվեց Թագեռավանի պարզեատրված նկարների շուրջը: Արզուք իսկապէ՞ս սիալ էր թույլ տվել այնքան հեղինակավոր հանձնաժողովով:

Կարելի՞ է ենթադրել, որ հանձնաժողովը օրէիկամիշ չէր եղել, և կոնկրետին ներկայացված գործերի մեջ կային մրցանակի ավելի արժանավորներ: Այդ կոնկուրսի մասնակիցներից, բացի Թագեռավանից, մեկ հայանի է միայն մեկը՝ Ի. Գրաբարը: «Իմ կյանքը» վերտառությամբ ինքնակենսաւդրության մեջ նա հիշատակում է իր մասնակցությունն այդ կոնկուրսին:

բայց ոչ մի անհամաձայնություն չի արտահայտել Հանձնաժողովի որոշ-
ման դեմ՝ եզ վերջապես կարելի՝ է արդյոք պարզեարված գործերի
շուրջն առաջացած ասելուները բացատրել միայն այն բանով, որ այդ-
աել վերավորվել էր կոնկուրսի մի քանի մասնակիցների ինքնասիրու-
թյունը, և այդ վերավորվածներն չեւ աղուկ բարձրացրին Թագեռայանի
նկարների շուրջը՝ փորձելով զրանով էլ վարդարեկել Հանձնաժողովի որո-
շումը: Կոնկուրսի առանձին մասնակիցների այդ վերաբերմունքն, ի՞նչ արկե,
կարող էր լինել, սակայն ամեն ինչ Հանդեցնել զրան՝ սխալ կլիներ ան-
շոշած, և Թագեռայանի նկարների շուրջը ծագած զիսկուսիան նախ և առաջ
սկզբունքային բնույթ ուներ:

Կես դարից ավելի է անցել այդ օրվանից և շատ փափոխություններ
են առաջ եկել Ռուսաստանի արվեստի զարգացման մեջ թե՛ ՀԽ գարի
վերջի երկու և ՀՀ դարի առաջին երկու տասնամյակներում, և թե՛ մանա-
վանդ սովորական տարիներին: Այդ տարիների ընթացքում մեր արվեստն
անցել է զարգացման մի բարդ ուղի: Եզել են և շեղումներ սեալի զմբից,
և տուրք է արված «արվեստ արվեստի համար»-ին, անցել է տարրեր
«իզմ»-երի միջամ և զանց կեմ պայքարելով ու զրանք Հաղթահարե-
լով՝ հասել է սոցիալիստական ռևոլյուցիոնի: Այս պատմական ասպեկտով
Հնարավոր է զանումը տալ Թագեռայանի նկարների ձիշան զնա՞ւառականը
և որոշել, թե ով էր իրավացի՝ զրանց մրցանակ պարզեած ժյուրին, թե՝
նրանք, այդ որոշման գեմ բռնորդները: Ձիշան է, այժմ մենք հնարավո-
րություն շահնենք այդ նկարների մասին զատել ըստ Հենց զրանց, որով-
հետեւ մեկը՝ «Անսորյա Հաշը» նկարիվ լուց մի քանի տարի անց փառվեց,
իսկ մյուսը՝ «Թարու ուղղագավաններին», որ պատկանում էր Ս. Տ. Մորո-
զովին, կորել է չփառես ուր և տեղն այժմ հայտնի չի: Չեն պահպանվել
և զրանց լուսանկարները: Բայց փոխարենը ունենք այդ նկարների փոր-
րածավալ կրկնությունները, որ արել է Թագեռայանը թեն զգալիորեն
ուշ, 1924 և 1925 թվականներին, գուցե և ավելի էսքիզային ձևով: Եթի
այդ պատճառով էլ բավական զժվար է տալ պարզեարված նկարների
բազմակողմանի զնա՞ւառականը, ապա, այնուամենայնիվ, միանդամացն
Հնարավոր է պատասխանել այդ բանավիճի հիմնական հարցին: Դի-
մենք նախ և առաջ այդ նկարներին:

¹ И. Грабарь, Моя жизнь. Изд. «Искусство», 1937, стр. 140.

«Կեսօրյա ճաշը» կենցաղային մի հուզիչ պատկեր է 1896-ի տաճկական գաղանություններից Հողովրած և էջմիածին ապահովանած հայ գաղթական մասնուկների կյանքից: Առջևի պլանում գետնի վրա պատկած է Հենց նոր ընկած ու լաց եղող մի գաղթական աղա, որ ընկնելիս կոռորել է քիչ հեռու նստած և ուսելիք սպասող քաղցած երեխաններին տարած կերակորով լի ամանը. Կոտրված ամանի ու նրա թափված պարունակության շորջը հավաքվել են վրա հասած մի քանի հավի: Աշա ալդ նկարի բովանդակությունը, որ իր գաղափարական նպատակասլացությամբ, անկասկած, մոտ է «Շրջիկների» նկարներին: Իսկ ինչ վերաբերում է նրա գեղանկարչական լուծմանը, ապա զա մոռիկից առնչվում է «Շրջիկների» նկարիչների երիտասարդ սերնդի այն խմբակի նկարչությանը, որ հանգես հկալ անցած դարի 80-90-ական թվականների վերջին և բնորոշվում է այնպիսի անուններով, ինչպես Ս. Սրբիսովը, Ս. Իվանովը, Ս. Կորովինը, Թյառուշկինը, Մ. Նեստերովը, Կ. Կորովինը, Ս. Մալյոստինը և ուրիշներ (Հիշենք, որ այս նկարիչներից մի քանիսը Թագեռոսյանին մրցանակ տված ժողովի անդամ էին): Նկարն ամբողջովին ողողված է հարավի կիզիչ արևով երեխաններից ընկնող կոնտրաստային ստվերներով: Այն ուշադրությունը, որ դարձել է նկարիչը գեղանկարչական կողմին, ամեններն ինչ վնասում բովանդակությանը և նույնիսկ այս էսքիզային կրկնության մեջ տրված է իրեն և իր ընկերներին ճաշից զրկած տպայի հուզիչ պիշտը:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ՝ «Քարոզ ուղղադավաններին» նկարին, ապա եթե բժաննդրություն շանենք նրա անհաջող անվան համար և տեսնենք այն, ինչ եղել է նկարչի առաջադրած հիմնական խնդիրը, ապա կվերանան Թագեռոսյանին արվող մեղադրանքները: Նկարիչը ցանկացել է միերարտադրել գեղանկարչական տեսակետից իրեն հետաքրքրած մի տեսարան, որ դիտել է նա հին երեսնում—լուսնի լուսով լուսավորված մզկիթի ներսը ու աղոթունների խումբը: Նրանցից մի քանիսը գտնվելով խավարի մեջ՝ երեսում են որպես մոլի սիլուտաններ, մինչդեռ մյուսները, որոնց վրա լուս է ընկնում, աշքի են զարկում որպես լուսավոր թծեր: Նկարը կատարված է կապույտի ընդհանուր երանգավորմամբ—մուգ կապույտից աստիճանաբար վերածվում է զբեթ սկի: Արծաթաթուլը երկնադրունով տրված են լուսնի լուսով լուսավորված տեղերը: Հետին պլանում շաղայավոր կահայք մտցնելը, նկարչի խոսունկանությամբ, արված է

Դեղանկարչական նկատառումներով՝ մութ ֆոնի միօրինակությունը մի քանի լուսավոր բծերով աշխուժացնելու ցանկությամբ: Ե. Թագեռոսյանը կարողացել է լուծել գեղանկարչական տեսակետից դժվարին մի խնդիր՝ ուղև հարավի ամռան գիշերվա զգացողությունը:

Ժամանակը միշտ եղել է լավագույն դատավորը: Այժմ, անցած տասնամյակների լույսի տակ, պարզ է, թե ով էր իրավացի այդ դիսկուսիայում: «Անհանդուրժելի» նորությունը և նույնիսկ «անկումայնության» անձիմն մեղադրանքները, որ նետում էին թագեռոսյանի հասցեին, ցուց էն տալիս այն մարդկանց պահպանողականությունն ու հնամուրությունը, որոնք ընդունակ չեն հասկանալ տրորված ճանապարհով շընթացող որեւէ նոր բան: Ժյուրիի անդամները թագեռոսյանի նկարին երում տեսնում էին կյանք, ճշմարտացիություն, նկարչի տաղանդի թարմություն ու անմիջականություն, և գա էլ եղավ նրան մրցանակ շնորհելու հիմքը:

1895 թվականին Մոսկվա վերադառնալուց քիչ հետո, հեակաբար և այս երկու պարգևատրված կտավներից մի փոքր առաջ Թագեռոսյանը նկարեց «Հովհաննես» ու «Հովհան», որ գտնվում է Մոսկվայում Ե. Ռեկալվայի կողեկցիայում: Այս նկարի համար նա օգտագործեց «Ոչխարի Հովհաննից», եզմիածնի շրջակագրում կատարած էտյուդը: Հետագայում նկարչը մի քանի անգամ վերադարձավ այս թեմային:

Վառ ու արագ շոշափողաց Ե. Թագեռոսյանի աստղը Մոսկվայի լայնարձակ հորիզոնում: Նկարչի մասին մնաց հասել է Վոլուքելի կարծիքը, որ շատ տարիներ անց լսել է նա Վ. Դ. Պոլենովից: «Մի անգամ նկարիչների շըրշանում, —պատմում էր Պոլենովը, —Վոլուքելն ասաց, «Ուշադրություն դարձրեք թագեռոսյանին»:

Մոսկվայի ցուցահանդեսներում թագեռոսյանի հաճախակի հանդես դարձ նրա վրա գրավեց ոչ միայն նկարչական աշխարհի, այլև ոռու ինտելեկտիվիայի ավելի լայն շրջանների ուշադրությունը: Հատկանշանական է, օրինակ, որ Անդրեյ Բելին հուշերի իր գրքում, խոսելով XIX դարի վերջի գեղարվեստական կյանքի մասին՝ հիշատակում է թագեռոսյանին այն ժամանակ առնենց ավելի ականավոր երիտասարդ նկարիչների շարքում: Են աննիատելիորեն արդիականացնում էի մորս ճաշակը՝ ընդհուպ մինչև ոկրուբելի դեկորացիաները հասկանալու ներշնչումը. դիտում էինք ցուցա-

¹ Ե. Թագեռոսյան, Հուշեր Վ. Դ. Պոլենովի մասին (անտիպ):

Հանդեսներ, որտեղ նույնպես աննկատելի ձնշամով հակամ էի նրան գիպի լեիտանը, Նեստեռովը, Թագեոսյանցը, Կորովինը»¹:

Եվ իրավամբ Ե. Թագեոսյանի նկարները պետք է գասկեն Սոսկվացի նկարչական կյանքի այն երևոյթների շարքը, որոնք նշան էին նոր ձրգառամների, նոր որանուաների: Դրանց մեջ միաժամանակ կար սեփական վերաբերմունք գեղի պատկերվածը, այլ կերպ ասած՝ զրանց մեջ երեսն էր գալիս նկարչի անհասականությունը: Զուր չէ, որ զրանցից մեկը «Քարոզ ուղղագավաններին» այդ հատկություններով կարողացավ ցուցյալ իրեն նույնիսկ ութ տարի անց, Փարիզում, որտեղ ցուցադրված էր 1906 թվականին Դագիեի կազմակերպած ոստական «Աշնանային Սալոն» ցուցահանդեսում:

Ցուցադրվելով այնպիսի ժամանակակից ծանրակշների գործերի հետ, ինչպիսիք են Ռեպինը, Սուրբկովը, Սերովը, Լիխտանը, Արխիպովը, այդ նկարը աննշմար շմնաց և ճիմք ավեց Թագեոսյանի բարեկամ, այդ ժամանակ Փարիզում գտնվող նկարիչ Շերվաշիձեին՝ շնորհավորել նրան հաջողության համար. «Թու նկարը հիանալի տպավորություն է թողնում և ամենակին նման չէ ոչ մեկի գործին. այնպես որ բարի միջից աշքի է ընկնում»:

Եթե այսպես էր կրկում Թագեոսյանի նկարը 1906 թվականին, ապա նրա տպավորությունը շատ ավելի ուժեղ պետք է լիներ զրանցից ութ տարի առաջ, երբ ցուցադրվեց կոնկորսում, այնուհետեւ էլ Արվիստաների մոսկովյան ընկերության ցուցահանդեսում:

¹ А н д р е й Б е л ы й, На рубеже двух столетий.

ԱՐՏՈՒՐՈՎՈՅԻԹՅՈՒՆՆԵՐ
«ԵՐԿՐՈԱԳՐԻԹՅՈՒՆ» ՆԿԱՐԸ

Մրցանակ ստանալը և մրցանակատրիված նկարների ծախվելն անմիջապես բարելավեցին Յ. Թագեռոյանի նյութական գրությունը: Դա հնարավորություն այլն նրան ընդունելու վ. Պ. Պոլենովի առաջարկը՝ միասին մէկնել Պաղեստին: Պոյենովի ուղևորության նպատակն էր՝ պեյզաժների մէջ դրոշմել Քրիստոսի ուղին ավետարանական թեմա ունեցող նկարաշարի համար:

1899-ի գարնանը նկարիչները մեկնեցին Մոսկվայից Հետեւալ ուղեղով՝ Օդեսա, Կոստանդնովպոլիս, Աթենք, Զմյունիա, Կահիրե, Պորտ-Սայիդ, Երոսալեմ: Թագեռոյանից բացի, Պոլենովին ուղեկցում էին նկարիչ Ա. Ա. Կիսելյովը և սիրող լուսանկարիչ Կանդավորովը: Պոյենովի հետ ճամփորդելը խիստ հնատաքքրական էր Թագեռոյանի և մյուս ուղեղորների համար: «Ամենուրեք, որտեղ լինում էինք, Պոյենովը պատմում էր այդ վայրերի ու գրանց տեսարժան տեղերի մասին, այդ ամենը նոր էր ու հետաքրքրական»: Այդ բոլոր վայրերը բաշահայտ էին Պոլենովին Արեկելում կատարած առաջին (1881-82) շրջադաշտությունից: Բացի այդ,

Յուենովը ահապին բան գիտեր դրանց մասին Աստվածաշնչից: Երուաս-
գնուում կարավան կազմեցին գնալի Տիբերիական լիճը, Տյուրոս, Սիդոն,
Բեյրութ: Սակայն Թագեռոյանը շղմանալով շողին՝ Տիբերիական լիջից
մեկնեց Բեյրութ՝ մի կողմ թողնելով Տյուրոսն ու Սիդոնը և այստեղ սպա-
սեց Պոլենովին ու նրա երկու ուղեկիցներին:

Այս առաջին ուղեկորությունից Թագեռոյանի Հիշովության մեջ վառ
տպագորվեցին մասնավորապես Աթենքն իր Ակրոպոլիսով: Ուղեկորության
արդյունքը եղավ 34 էտյուրից բաղկացած շարքը: Վարպետության և մա-
սնավանդ գումանկարչության տեսակետից դրանք զիջում են նկարչի հե-
տագա էտյուրներին, բայց հետաքրքրական են նրանով, որ Թագեռոյանը
գրանց մեջ բոլորովին ինքնուրուցն է և Պոլենովի անմիջական ազդեցու-
թյունից զերծ: Սա առավել ևս արժե նշել, որ ուսուցիչն ու աշակերտը
ապրելով ու աշխատելով կողք կողքի՝ հաճախ նկարում էին նույն վայրե-
րը: Էտյուրների մեծագույն մասը, ըստ Թագեռոյանի սովորության, պեյ-
զած են, սակայն պատահում են և զիմանկարներ: Վերադարձին նկարիշ-
ները Կոստանդնուպոլիսից մեկնեցին Վիեննա և այդուղից արդեն վերա-
դարձան Ռուսաստան: Վիեննան առաջին արևմտանկորպական քաղաքն
էր, որ Թագեռոյանը տեսնելու առիթ էր ունենում: «Եղանք, իհարկե, թան-
գարաններում: Այստեղ ամենով ավելի ապշեցրեց Տինտորետոն»¹:

Վերադառնալով արտասահմանից Թագեռոյանը մեկնում է Հայաս-
տան: Ամռան մի մասն անց է կացնում Սևանա կղզում՝ աշխատեկան
պեյզաժների շարքի վրա: Ինչ-որ ընդհանրություն կա այդ էտյուրների և
Արևելքում կատարած շրջագայությունից բերածների միջև. ըստ երեսու-
թին արտահայտվել է Հայաստանի ու Պաղեստինի բնության որոշ գծերի
ընդհանրությունը, ինչպես նաև այն, որ էտյուրների մի շարքը մյուսից
բաժանված է խիստ կարճ ժամանակամիջոցով: Սևանից հետո Թագեռոյ-
անը փոքր ժամանակով գալիս է էջմիածին, որտեղ նկարում է Խրիմյան
Հայրեկին և կրոնական բոլվանդակությամբ մի քանի պատվեր է ստանում
վանքից («Ակոնթք բաժան հետացնելու մասին», «Գրիգոր Լուսավոչի տե-
սիլքը»), որից հետո վերադառնում է Մոսկվա:

Ողջ չէր արդեն Ելենա Դմիտրիենա Պոլենովան. խղճեց երեք նկարիշ-
ների բարեկամական միասնությունը:

¹ b. Թագեռոյան, Հուշեր Վ. Դ. Պոլենովի մասին (անտիպ):

Պաղեստինի ուղևորությունից Մոսկվա վերադառնալուց հետո Թագեռոսյանի նկարած գործերից ամենանշանակալին «Երկրպատություն խաչին» է: Այս նկարը, որ սկսել էր էջմիածնում դեռևս 1894—1895 թվականներին, զրել մի կողմ և հիմա նորից ձեռնամուխ լինելով՝ ավարտեց 1901-ին:

«Երկրպատություն խաչին» նկարը, որ այժմ գտնվում է Երևանի պետական պատկերասրահում, Թագեռոսյանի սկզբնական ժանրային նկարներից միակն է, որ չի ոչնչացել և չի կորել մասնակիոր կուեկտիաներում, հասել է մեզ, ուստի և շափազանց կարևոր նշանակություն ունի նրա այդ շրջանի ստեղծագործությունն ուսումնասիրելու համար: Հինավուրց խաչքարի առաջ երկրուղածարար խոնարհվել է մի ժեր գյուղացի: Զույգ բաղուկները, ձեռքբերը բաց, զրոված են քարին: Տերութիւն համարյա թե մեջը դարձել է դիտողին, երևում են նրա ալեհեր ծոծուակը, ճաղատ գլխի մի մասը և թիկունքը: Սյդ անգետ գյուղացին իր միամիտ հավատով եկել է երկրպագելու այդ հնագարյան քարին՝ հուսալով արժանանալ «աստվածային ողորմության»: Այսպիսի պատկերներ Հայաստանում ամենուրեք կարելի էր տեսնել այդ տարիներին: Թագեռոսյանն այս կտավը նկարել է անձնական զննումների հիման վրա: Կա և զրա էտուգը: Ոչ բարդ սյուժե ունեցող այս նկարի մեջ զերիշ է մարդկային այն խոր զգացումը, որ գրել է Թագեռոսյանն այդ ժեր գյուղացու պատկերման մեջ: Մի որոշ սյուժեային նմանություն կա Վ. Սուրենյանի «Քրված կինը» նկարի հետ (1899, Հայաստանի պետական թանգարան), որից տարբերվում է նրանով, որ ժեր գյուղացու փոխարեն, Սուրենյանը պատկերել է աղքային տարազով մի զեռատի հայ կին, որը ծնբազրում է տաճարի պատի մեջ փորագրված Աստվածամոր պատկերաքանդակին: Սակայն թեմատիկ նմանություն ունեցող Թագեռոսյանի այս նկարում կան և քաղմաթիվ ոչ նման գծեր: Թագեռոսյանի մոտ կենտրոնականը գյուղացու պատկերն է: Ու թե՛ն նա նկարված է թիկունքից, բայց ձեռքերն ու ծոծրակը այնքան արտահայտիչ են, որ դիտողը ամենից առաջ գրանց վրա է պահում իր ուշագրությունը, մինչդեռ Սուրենյանի նկարում պատկերաքանդակին երկրպագող աղջկանց կենտրոնական տեղ չէ տրված:

1900-ի ամռանը ստանալով Ելենա Պոլենովայի անվան թոշակը, որ հաստատել էին եղբայրները իրենց քրոջ թողած գումարի տոկոսներից, Թագեռոսյանը մեկնեց Փարիզ՝ Համաշխարհային ցուցահանդես: Արտա-

Համանյան այս երկորդ ուղևորությունը կատարեց նա նկարչուհի է. Կրուգլիկովայի հետ: Փարիզի ճանապարհին որոշ ժամանակ մնացին Մյունիսնում, որտեղ ժանովացան զիմանիրապես թանգարաններին:

Այս ուղևորությունը մեծ իրազարձություն էր Թագեռույանի կյանքում: Համաշխարհային ցուցահանդեսը և մանավանդ կուլյը արվեստի իր գանձերով ուժեղ տպավորություն գործեցին երիտասարդ նկարչի վրա և ընդլայնեցին նրա գեղարվեստական տեսագաշաբ:

Հին վարպետներից բացի՝ Թագեռույանը կուլյում հնարավորություն ունեցավ ժանովանալու արևմտանիրովական նոր արվեստին: Նրա ասածով՝ ամենամեծ տպավորությունը գործեցին երկու ֆրանսիացիների՝ իմպրեսիոնիստներին մասիկ Անրի Մարտենի և Բուտո զը Մանվելի, այնուհետեւ նույնանցացի Տոորոպի, շվեյցարացի Հոգլերի ու շվեյց Յորնի գործերը: Իսկ իմպրեսիոնիզմի ճանաչված ուրազգություններն այն ժամանակ շնորհականացին նրան:

իրեն արված առաջարկեր՝ լինել Թիֆլիսում՝ նոր բացված Առևտլական ուսումնարանին նկարչության գասառուն: Այս պաշտոնը Թագեռոյանին տալու էր ոչ մեծ, սակայն կայուն վաստակ և զրանով խիլ ապահովիլու: Էր երիտասարդ ամուսինների համհատ, անզավակ գոյությունը: Գա առավել ևս հրապուրիչ էր, քանի որ նկարների վաճառքից եկամուտ ունենալը հարցական էր: Միջնակարգ գործոցի նկարչի դասառուի աշխատանքն ինքնին հազիվ թե հրապուրիչ լիներ Թագեռոյանի համար. նույնը կարող, իշարեկ, զիտակցել, թե իր արվեստի համար ինչպիսի՞ լուրջ խոշնություն պիտի լինել ուսուցիչ պարտականությունը: Միիթթարում էին միայն ամառալիքն եռամսյա արձակուրդները, որ նա կարող էր ամբողջություն նիմիրել ստեղծագործական աշխատանքի:

Թիֆլիս փոխազդրվելուն անկասկած առաջացել էր հայրենիքին մոտիւ լինելու ցանկությունից: Վրաստանի մայրաքաղաքում, որն այդ ժամանակ վարչական կենտրոն էր և որտեղից Ռուսաստանը կառավարում էր ամբողջ Կովկասը, ապրում էին բազմահազար հայեր՝ արհեստավորներ բանվորներ, մանր, միջակ ու խոշոր բուրժուատներ: Բացի դրանից, Թիֆլիսը ներկա դարի սկզբին, ինչպես և ամբողջ XIX դարի ընթացքում, արեգելահայության կովառութական կյանքի ճանաչված կենտրոնն էր: Վեցշապերեղությունը՝ Թագեռոյանը հնարավորությունը կունենար համայստինի լինել Հայաստանում, մասնավորապես էջմիածնում, որի հետ կապված էր շատ բանով, այդուղի էին ապրում նրա ծնողները, այնաև էին անցկացել մանկական տարիները: Այս բոլոր հանգամանքները արամագրում էին հօգոսությունը Թիֆլիսի: Եվ ընտրությունը կատարվեց. 1901-ի ամսանը Թագեռոյան փոխազդրվեց Թիֆլիս, որտեղ և անցավ նրա ամբողջ հետագա կյանքը: Սակայն այդ ընտրության հետ կապված հյուսերից շատերը շարդարացան, և հետագայում հաճախ Թագեռոյանն ափսոսում էր որ հեռացավ Մոսկվայից:

Միանգամայն բնական է ենթադրել, որ այն սյուժետային-թեմատիկ գիծը, որով ընթացել էր Թագեռոյանի զարգացումը մոսկվան տարիներին, հիմա ոչ միայն հշարունակվի, այլև կընդանիլի: Ապրելով Թիֆլիսում՝ նա կարող էր ավելի հաճախ ու ավելի երկարատև լինել իր հայրենիքում, զարգացնել ու խորացնել թեմաների այն շրջանակը, որը ոգեշշում էր նրան նկարչական գործունեության արշալուսին:

Այսպես կարելի էր ենթազրել, քայլ ստացվեց բոլորովին այլ կերպ

Թիֆլիս փոխազրկելուց հետո թագեռոյանի նկարած կտավների թեման
նկատելիորեն փոխվլում է ընդհանուր մինչև 1912 թվականը: Հայ ժողովրդի
կյանքից քաղված սյուժեներով ռեալիստական նկարներին, ինչպես եղել
էր մինչև Հիմա, փոխարինում են այժմեականությունից հեռու թեմաներ
և նույնիսկ բարարմին վերացական բովանդակություն ունեցող նկարները
(«Ֆիդիան ու Զիար», «Անքարիստ», «Անուշընկրից մեկը,
«Vox pacis» — Զայն խաղաղովիյան), իսկ այն ժամանակ, երբ նկարիչն
ընտրում է մի սեալ թեմա կամ թե քա իրական դրության շունչ ունի, ապա
դրա մեկնաբանումը հեռացնում է իրականությունից («Զան-գյուղում»,
«Առնետ», «Հանճարն ու տարրություն»): Այս տեսակներից հատկանշական են
նաև նկարների անունները:

Ինչպես և ինչո՞վ բացառիկ թագեռոյանի ստեղծագործական ուղ-
ղության այս փոփոխությունները, որ անդի ունեցան թիֆլիս փոխազրկե-
լուց հետո, ինչի՞ հետեւնի են դրանք: Ինքնին համարնալի է, որ պետք է
մերժել առաջին հայացքից ծագող այն բացառությունը, թե այդ փոփո-
խությունների պատճառն այն նոր պայմաններն էին, որոնց մեջ ընթա-
ցավ նկարչի կյանքը թիվլիսում: Անվիճելի է անշուշտ, որ այդ պայման-
ները ստեղծագործական աշխատանքի համար սակավ նպաստավոր կամ
նույնիսկ պարզապես աննպաստ էին: Մանկավարժական աշխատանքը
խորու էր թագեռոյանի լավագույն ժամերը և ստեղծագործության համար
ժամանակ չէր թողնում: Դրա ակնարկություններին համախ ենք պատա-
հում Վ. Գ. Պոլենովին դրած նրա նամակներում: Սակայն այս հանգաման-
քը կարող էր միայն բուլացնել թագեռոյանի նկարչական դրձունեու-
թյունը, որ նմանապես առկա էր, բայց այս պատճառները չեին կարող
ազդել ստեղծագործության բնույթի, նրա գործարական ուղղության
վրա: Այդ փոփոխություններն առաջացրած պատճառներն այլ են, և դրանք
պետք է փնտրել ոչ թե նկարչի անձնական կյանքի պայմաններում, այլ
այն սոցիալ-քաղաքական իրադրության մեջ, որ ստեղծվել էր այդ ժամա-
նակ ցարական նուսաստանում:

Կապիտալիզմի զարգացումը նուսաստանում XIX դարի վերջին և
XX դարի սկզբին սրելով դասակարգին պացքարը՝ Հանգեց 1905 թ.
սեպտեմբերին: Անուլուցիցին նկառված պատճառները հաջորդած սեակցիան ար-
տացոլվեց արիստոթ ու զրականության մեջ: Ի հակազտություն գաղափա-
րական ռեալիզմի այն գծին, որն իշխում էր անցած դարի 60—90-ական

թվականների ուսուական արվեստում և նրա առաջավոր, գհմողաբառական ձգութեանների արտահայտությունն էր, արդեն զարի վերջում երևան և կան շմաբոր արվեստ», «արվեստ արվեստի համար» նշանաբաններն առաջ բաշխ հոսանքներ: Այդ զիրքափառաման ասացին զրաբուժը՝ «Միբ իսկուսավա» («Արվեստ աշխարհ») ամսագրի հիմնումն էր 1893-ին, արի շորջը հավաքված էր նկարիչների մի խմբակ: 1905 թ. սեպտեմբերի պարտությանը հաջորդած սեալիցիայի տարիներին իրականությունից հոսանքը դառնում է ե՛լ ավելի ակներե: Արվեստի և մանավանդ գրականության մեջ երեսում են սիմվոլիզմով, միատիկայով տողորդած երկեր («Էկեսի» ամսագրը, «Երկնագույն վարդի» և «Աւելենիզմի ցուցահանդեսները»): Այլ գեղքերսում արվեստի մեջ երեսն են զալիս ֆորմալիստական հոսանքներ (թմբքեսիրնիզմ, գեկորատիվիզմ, սեղանիզմ, կուբիզմ և այլ «փոքր»-եր): Այս հոսանքներն իրարից տարբեր լինելով հանդերձ՝ կապված էին մի ընդհանուր հատկանիշով — «արվեստ արվեստի համար» նշանաբանով: Սովորական արվեստաբանությունը բավականաշատ պարզոր բացահայտել է այս նշանաբանի բուն իմաստը, իսկ 1907—1917 թվականների մասին Մ. Գորկու աված զնա՞ւտական՝ «ամենաապաշնորդ տասնամյակը առասական ինտելեկտնցիայի պատմության մեջ» ամբողջովին վերաբերում է նոն այդ շրջանի սուսական արվեստին:

Ահա ինչու մոռկովվան տարիների զարգացման առաջավոր, սեալիստական զծից Թագեսուանի հոսանքը, որ համբնկում է թիֆլոս տեղափոխութելու շրջանին, չի կարող բացարկվել այլ կերպ, եթե ոչ նույն աղդակների ներգործությամբ, որոնք արտացոլվեցին շատ սուս նկարիչների արվեստում և նկատելի ազգեցություն գործեցին նաև այդ ժամանակ ստեղծաթիվ հայ նկարիչների վրա: Կասկածից դուրս է, որ եթե Թագեսուանը այդ տարիներին մնար Սոսկվայս, ասու նրա ստեղծագործական սովոր կենթարկվեր նույն փոփոխություններին: Դրա ապացուցն այն է, որ նրա արվեստի սկզբնական զծից հոսանքը առանձին նշանները նկատվեցին դեռևս մոռկովվան տարիներին: Օրինակ՝ նրա ստեղծագործության ըեկման համար այնքան հատկանշական «Անուբաններից մեկը» և «Հանձարն ու ամբողջը» նկարների էսքիզներին արել էր նա առաջինը 1896-ին, երկրորդը՝ 1898-ին, այսինքն՝ Թիֆլոս տեղափոխվելուց առաջ:

Բաղեռոյանի Թիֆլոս փոխադրվելը զուգադիպեց այն դեպքին, որը

մտել է այդ քաղաքի պատմության մեջ որպես արժանահիշատակ թվական. 1901 թ. ապրիլի 22-ին (Հին տոմարով) Թիֆլիսի պրոլետարիատը ի. գ. Ստալինի գլխավորությամբ կազմակերպեց մայիսի 1-ի առևմբուցուցից՝ հավաքելով երեք հազար բանվոր և Կովկասում առաջին բաց մարտը տալով ցարական իրավակարգին: Լենինյան «Խոկրան» անմիջապես բացահայտեց տեղի ունեցածի պատմական խոր իմաստը. «Այն իրադարձությունը, որ տեղի ունեցավ ապրիլի 22-ին (Հ. ա.) կիրակի օրը, Թիֆլիսում, պատմականորեն նշանակալից է ամբողջ Կովկասի համար, ոյլ օրվանից Կովկասում սկսված է բացահայտ ուսուլուցիոն շարժում»¹: Այդ նշանավոր օրն արձագանք կտավ տեղական անլեզակ մամուկում ու Բուլցիկներում:

Թիֆլիսի պատմության համար բեկումնային այդ մոմենտը, որը նշանավորում էր անդրկովկասյան բանվորների՝ գործադուկներից զենքի ինքնակալության գեմ ուղղված քաղաքական բացահայտ ելույթներին անցնելը, նախապատրաստված էր քաղաքի նախորդ մի քանի տասնամյակների զարգացման ամբողջ պրոցեսվ, որը 90-ական թվականների վերջին նկատելիորեն փոխել էր քաղաքի տեսքը: Թիֆլիսը, որ գեռնս 1886-ին ուներ զննամենը 78 հազար բնակիչ և աստիճանավորների ու զինվորականների, ժաման արհեստավորների ու բուրժուաների քաղաք էր, նոր գարի և կղզին դարձել էր, ըստ տեղի ու ժամանակի, 200 հազար բնակիչ ունեցող մի կենտրոն: Քաղաքում եղած առևտրական ու արդյունաբերական հաստատությունների թիվն անցել էր 5000-ից, իսկ գրանցմեջ զրազված բանվորների ու ծառայողների թիվը՝ 20 հազարից: Այս դա էլ այն սոցիալական բազան էր, որի վրա հենվելով արիասիրա բուժիկ ուսուլուցիոնները ի. գ. Ստալինի գլխավորությամբ ցարական իշխանության ու կապիտալիզմի դիմ մարտի տարան Թիֆլիսի, նրա հետև և անդրկովկասյան պրոլետարիատին՝ ներդրավելով ուստաստանյան պրոլետարիատի ընդհանուր ուսուլուցիոն պայքարի մեջ:

Կենսական ուժերով ու խիստավումներով լի ուսուլուցիոն Թիֆլիսին հակադիր կալին պատմությունից հավասարապես դատապարտված երկու սարից Թիֆլիս՝ ուսումա-բուրժուատական, մեծապետական Թիֆլիսը, և նացիոնալիստական Թիֆլիսը, ավելի ճիշտը՝ նացիոնալիստական-կալ-

1 „Այսկրա“, 1901, № 6.

վածատիրականը վրացական և նացիոնալիստական-բուրժուականը՝ Հայկական հատվածում: Եթե 1904—1905 թվականների գեղքերի մուսատանի կալվածատիրական, բուրժուական և բուրժուա-ինակիդենտական շրջաններում առաջարիստ սարսափը մղեց նրանց զաշինք կնքելու ցարիզմի հետ և երբ ուհակցիայի միացյալ ուժերով հաջողվեց ձնշել ուստական առաջին ուսուլուցիան, անդրկովկասյան կալվածատիրերն ու բուրժուանները այդ գործարքին անհմասնակից շմնացին: Անդրկովկասի պահմաններում զա պատմականնորեն առավել ևս օրինաշափ էր, քանի որ տեղական «վիրերաց» հոսանքները՝ թե՛ բուրժուական լիբերալ, թե՛ կալվածատիրական լիբերալ, մասամբ արգեն 90-ական թվականներից, բոնհցին ինքնակալությանը և խոշոր կապիտալին ծանայիլու ուղին:

Ցարիզմը, մոմենտը որսալով, գաֆանորեն վրեժ է լուծում Անդրկովկասից, որպես ուսուլուցիոն պայքարի մի կարևոր կենտրոնից, և ցանկանալով պրոլետարիատին շեղել ուսուլուցիոն պայքարից՝ անդրկովկասյան մի ազգին գրգռում է մյուսի գեմ, որի հաւանանքն են լինում Հայ-թաթական ընդհարումները Բարքում, Թիֆլիսում, Գանձակում, երեանում և այլ քաղաքներում:

Ամենաընդհանուր զծերով այսպես էր Անդրկովկասի և առաջին Հերթին Թիֆլիսի քաղաքական ու սոցիալական իրազրությունն այդ տարիներին:

Արդյո՞ք լիովին պարզ էր դա Հենց նոր Թիֆլիսում բնակություն հաստատած թագեռույանի համար: Այս ճարցին միայն մի պատասխան կարող է արվել. երիտասարդ նկարիչն ընդունակ չէր քաղաքական սուր վերլուծման կամ առավել ևս քաղաքական ներդորություն ինքնազրսկութման համար: Դրա լավագույն ապացույցը այդ շրջանի նրա գործերի քաղաքականապես շեղող թեմատիկան է: Բայց եթե ճարցն այլ կերպ զնենք, եթե հարցնենք՝ «մասնակից հետ նկարիչն իր սրավով՝ պայքարի ելած աշխատավոր ժողովրդի», թե այդ պայքարը խևդպողների հետ — ապա պատասխանն այլ կերպ կլինի, որովհետեւ մեծ ու զգայն էր եղիշե Թագիույանի սիրտը, այն մարդու սիրտը, որ իր էությամբ իսկ ձգտում էր գեսի այն ամենը, ինչ լուսավոր էր, առաջավոր ու մարդասիրական: Եվ նրա սիրտն այն մարդկանց հետ էր, որոնք այդ տարիներին այնքան արիարար վեհ պայքարի զրոյ քարձրացրին հանուն սոցիալական առաջադիմության: Այդ մարդկանց կողմն էր մղում թագեռույանին նրա շերժ սերը դեպի այն:

ամենը, ինչ հարազատ էր, և ամենից առաջ իր հարազատ ժողովրդի կուլտուրայի սերը: Եթք ինձ հետ պրոցելիս նկարիչը վերջիշում էր այդ տարիները՝ միշտ էլ սասափի գծկամությամբ էր խսում նրանց մասին, ովքը ինկլիզ ցարական իշխանության ներկայացուցիչներն Անդրկովկասում՝ վարում էին անհետիթորեն ունակցիոն աղքային քաղաքականություն կամ լավագույն գեղում հաշտվում էին դրս հետ:

Թագեռոյանի ուղին տարբեր էր Թիֆլիսի հայ առևտրականների ու ձեռնարկատերերի նայինալիստական-բուրժուական ուղուց, որոնք կյանքի ամբողջ իմաստը տեսնում էին պրիմիտիվ մեթոդներով ու անզուսպ կերպով վաստակի հնատամուա լինելու մեջ: Հայ բուրժուազիան էլ իր հերթին բարյացակամ չեն նկարչի հանդեպ: Բավական պերճախոս է այն փաստը, որ Թիֆլիս ապրելու առաջին տասնհինգ տարին Թագեռոյանը ոչ մի նկար չծանեց, եթի չհաշվինք նրա բարեկամների հաշողեցրած մի բանի պատահական պատվիրները: Թիֆլիսի բարյացած, կիսակիրիթ, երրեմն էլ գեղարվեստական տեսակետից անկիրթ բուրժուազիաի համար Թագեռոյանի արինստը անհասկանալի էր: Դա, իհարկե, միայն Թագեռոյանի վիճակը չէր: Այդ տարիներին Թիֆլիսում ապրում էին մոտ քանի նկարիչ՝ հայ, վրացի, ուսև և այլ ազգությունների, և նրանց մեծ մասի գործոցներ ավելի լավ չէր, հաճախ էլ ավելի փառ էր, քան Թագեռոյանինը, որն, այնուամենայնիվ, մշտական վաստակ ուներ գասատուի իր աշխատանքից: Խոկ հատուկենոտ երջանիկները, որոնք «առաջադիմում էին», որոնց նկարները գնվում էին, ապա զանուզությամբ էին համարում գուան ստիպված էին, ի հաճույս սպառողի տափակ հաշակի, իրենց արվեստը փոխել «սալոնային» պատկերների, արվեստը դարձնել արհեստ, պիտակցարար փնտրել «պահանջի» ու «առաջարկի» որակական համապատասխանություն: Թագեռոյանը չէր կարող հարմարվել դրան: Չա՛տ էր խստապահանջ իր հանդեպ: Դրա համար էլ ստիպված էր կարեսրել Առևտրական ուսումնարանի իր պաշտոնը, իսկ զա նշանակում էր իր լավագույն ժամանակը, նկարչին կենսականորեն անհրաժեշտ ցերեկվա ժամերը տալ սալ սակավ բավարարով զբաղմունքին: Թե որքան էր զա ճնշում նրան, մենք իմանում ենք Վ. Գ. Պոլենովին զբած մի նամակից: «Հիմա համարյա թե չեմ նկարում»: Երկու տարի հետո զբած մի նամակում ասում է: «...անհամատեղելի բան է դասեր տալ և աշխատել արվեստի համար,

և եթե բախտու ժակտա, ապա նորից երջանիկ կլինեմ, կարծէս կհարհա՞յի մեռելոց։¹

Բայց եթե Թիֆլիսում Թագեսոյանի ստեղծագործական աշխատանքի համար նյութական բազա չկար, ապա այնուամենայնիվ կար ինտելիգենտ մարդկանց թեկ սեղմ, սակայն նրա արվեստը գնահատելու ընդունակ մի շրջան։ Ինչպես մինչ այդ Մոսկվայում, այստեղ՝ Թիֆլիսում ևս, Թագեսոյանը իր մարդամուս ու բարդացակամ բնակության շնորհիվ ձեռք բերեց տեղական արվեստակիցներից շատերի ու միայն սերն ու բարեկամությունը, այլ հարգանքը՝ որպես նկարչի։ Միաժամանակ հնուով լինելով ազգային սահմանափակությունից, նա գրավում էր թե՛ վրացի, թե՛ ուսա, թե՛ այլ ազգության պատկանող նկարիչներին։ Առանձնապես մտերիմ էր նկարիչ Փանոս Թերլեմելյանի հետ, որը մի քանի տարով բնակությունը, այլ հաստատել Թիֆլիսում, նկարիչ Գ. Շաբրարչյանի հետ, որն օգտվում էր նրա նորհուրդներից և կարծեն նրա աշակերտն էր, նկարիչներ Բ. Ֆուգելի, Գ. Գարաջիլու, Ա. Մըկիչյիլու², քանդակագործ Նիկոլաձենի, այնուհետև Թիֆլիս փոխագրված ե. Լանսերեի ու Ի. Շառիմանի հետ։ Նկարիչների այս շրջանակում Թագեսոյանն իրավամբ գրավում էր առաջին տեղերից մեկը։ Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին ոչ միայն նրա ու նկարիչների հետ, այլև հայ կուլտուրայի առաջավոր շատ ներկայացուցիչների՝ գրողների, արակաների, երաժիշտների հետ։ Սրանցից շի կարելի առանձնապես չիշշատակել Հ. Թումանյանին։ Ղ. Աղայանին, գերասան Ալիխանյանին։ Սերա բարեկամությամբ էր նաև կապված մանավանդ Կոմիտասի հետ, որի հանգիպում էր էջմիածին գնալիս, կամ էր Կոմիտասն էր լինում Թիֆլիսում։ Վաղեմի բարեկամությամբ կապված էին Թագեսոյանն ու Հովհաննիս Հովհաննիսիցանը, որին նկարիչը ճանաչում էր մանուկ հասակից՝ կազարցան ճեմարանում ուսանելու տարիներից, և որը նույնպես ապրում էր էջմիածնուո՞ր Թիֆլիսում ապրող ուսւ ինտելիգենցիայի սակավաթիվ ներկայացուցիչներից

¹ Ե. Թագեսոյանի նամակը Վ. Գ. Պունովին՝ 27-1 V-1906 թվակիր (Մասկովյական թատրոնի պատկերասրանի արխիվ)։

² Ա. Մըկիչյիլուն Թագեսոյանը ճանաչում էր գետես նկարչության ուսումնաբան Դամարյան նույն տարիներին։ Թագեսոյանը շատ մտերիմ էր նրա հետ և պատրաստվում էր հուշեր գրել նրա մասին (Ծ. Դրամբյանին դրած նկարչի նամակից)։

Թագեռոսյանը առանձնապես մոտ էր բանաստեղծ ու պրոֆեսոր Յուրի Վերխովսկու հետ:

Թագեռոսյանը 1907-ին մանում է Թիֆլիսում կազմակերպված «Եկար» համակնող անոնը կրող զրա-գեղարվեստական խմբակը: Այդ խմբակի կազմակերպումը տեղական արձագանքն էր այն էսթետական-մոդեռնիստական հոսանքների, որոնք զարգանալով նույսաստանի մայրաքաղաքների զրա-գեղարվեստական շրջաններում՝ առանձնապես զրութեալցին այսպէսէլ 1905 թվականի ռևոլյուցիայից հետո Անցած տասնամյակների պրիզմայից միջացով գիտեիս, մեզ համար այժմ պարզ է, որ այդ մոդեռնիզմը իմպերիալիզմի զարացրանի կազմակերպության հասարակության ապրած հոգեւոր ճպնաժամի ծննդն էր: Դրա հորձանքը հասակ է Թիֆլիս: Եվկար» խմբակն իր էությամբ, ասենք, տեղական մոդեռնիզմի ոչ այնքան առեղծագործական կազմակերպության էր (զրա համար բավականաշատի լիարցուն չէր), որքան տարբեր տիպի մոդեռնիստական հոսանքների պրոպագանիզմաբ: Այս թե ինչո՞ւ «Եկարի» կազմում, զրուցիչից, նկարիչներից, երաժիշտաներից բացի, կային բոլոժուական ինտելիգենցիային պատկանող, բայց զրականության ու արվեստի հետ անմիշական առնչություն չունեցող բավական մարզիկ: Այդ պատճառով էլ «Եկարի» գործունեալիքունը զլխափորապես երեսկոներ, համերձներ, զեկուցուներ կազմակերպեն էր, ըստ որում կարգում ու կատարում էին դիբազանցորեն արևատյան ու սուս մոդեռնիստաների գործերը: Իսկ ինչ վերաբերում էր տեղական արվեստին, ապա զրա ցուցազրումը հազվագեց էր խմբակի պրակտիկայում: Դրանցից մեկը Թագեռոսյանի էտյուդների ցուցահանդեսն էր, ավելի ճիշտ՝ դիտումը «Եկարի» անդամների նեղ շրջանում:

Թագեռոսյանը առողջ, հիմնականում ռևոլյուստական իր աշխարհապացությամբ շեր կարու ընդունել խորապես էսթետական այդ խմբակի ամեն ինչը: «Եկարի» հետ նրան կապում էր այն հանգամմանքը, որ զրա անդամների մեջ կային բավական թվով կուտուրական, արվեստին լրջութեն վերաբերվող, գնահատել կարողացող մարդիկ, իսկ դա թիշ բան չէր Թիֆլիսի այդ ժամանակի պայմաններում:

Վերեւունշվեց, որ Թագեռոսյանի, որպես նկարչի, բնորոշ գծերից մեկը սովորվածական դիապազոնի լայնությունն է: Թէ Հիրավի որքան բազմազան էին նրան հետաքրքրող թեմաները, զրա մասին բավականա-

շափ պատկերացում կտա Թագեսոյանի նկարած ու սկսած գործերից ցուցակը պարզապես աչքով անցկացնելը: Այդուհեղ պատահում ենք և՛ հայ ժողովրդական սովորույթներից ու ավանդություններից վեցըված սովորեների, հոնական դիցաբանական նյութերի ու առասպեսների, և՛ լիրիկական-սիրային թեմատիկայի, որն ընդմիջվում է ալլարանական, սիմվոլիկ ու հերիաթային-ֆանտաստիկական բովանդակությամբ: Ըստ որում ստեղծագործական դիապազոնի լայնությունը երեան է զալիս ոչ միայն թեմատիկանի ընթացան, այլև թե՛ կոմպոզիցիոն լրտեսմների, թե՛ գեղանկարչական կերպերի բազմազանության մեջ: Այս անսակեակից Թագեսոյանը իր ժամանակակիցների մեջ համասարշ չունի: Դիտելով այդ ժամանակամիջոցում նկարած նրա գործերի ցուցակը՝ տեսնում ենք, որ տասնչորս տարվա ընթացքում (1901—16) նա նկարել է ընդամենը 2 պահո, 5 նկար և գեղային պատճեն էլ մնացել է անավարտ կամ էսքիզային վիճակում: Ավելի քան համեստ մի համբազումար, ևթի հաշվի առնենք, որ Թագեսոյանի համար, տարիքի իմաստով այդ այն արքիներին էին, որոնք սսկըսարար համապատասխանում են նկարիչների ստեղծագործական առավելագույն ակտիվության շրջանին: Այն փաստը, որ այդ արքիների գործերի կեսը մնացել է անավարտ կամ նույնիսկ էսքիզային վիճակում, բայց երկույթին, պետք է բացարձի զիմանշապատճեն մանկավարժական աշխատանքով ծանրաբեռնված լինելով:

Թագեսոյանի արամագրության տակ թեև մնում էին ամառային սրածակության արջանին: Այն փաստը, որ այդ արքիների գործերի կեսը մնացել է անավարտ կամ նույնիսկ էսքիզային վիճակում, բայց երկույթին, պետք է բացարձի զիմանշապատճեն մանկավարժական աշխատանքով:

1903—1907 թվականներին կատարված պեցածները կրում են իմպրեսիոնիզմի աղդեցությունը: Այսպիսով, նույնիսկ պեյզաժի բնագավառում Թագեսոյանը, ճիշտ է՝ շատ կարճ ժամանակ, հարկադրված է եղել գերի գառնալ իր ժամանակակիցներից այնքան շատերին վարակած հոսանքին: Բայց սրա մասին մանրամասնորեն կիսունքը պեյզաժին վերաբերող զիմում:

Թիֆլիսում նկարված գործերից էր «Էն անուգչներից մեկը», որի էսքիզը, ինչպես ասել ենք, արել էր նաև գեղարվաց Մոսկվայում: Բուն նկարը կատարվեց երեք տարվա ընթացքում (1902—1905): Տեմպերայով նկարված

մուկովլյան էսքիզից նկարը տարբերվում է գլխավրապես նրանով, որ սրա կոմպոզիցիայի մեջ մացված է երկու մարդ, որոնք պետք է ավելի սյուժե-տային բնույթ տային նրան, թեև ճիշտն ասած՝ չնա փոխում նկարի հիմ-նական պիշտացման բնույթը: Բայց դա ոչ թե որևէ կոնկրետ վայրի, այլ մացածին պիշտացման բնույթը: Ավելին, ոչ միայն մատացածին է, այլ մի պիշտացման մեջ չկա: Հիրավի դա իրականություն չէ, այլ անուրզ: Մի բարձր ու խուզ շրջապարասի ետևը, բրակի վրա բարձրանում է չղիտես բարից, թի հում ալյուսից շինված տարօրինակ ճարտարապեսովովն ունեցող, արենեան կավաշին կառուցվածքներ հիշեցնող, սակայն արդիա-կանացրած մի շենք: Հայտնի չէ բնակելի տուն է, թի մի այլ բան: Ենթի երկու կողմերում ու ներ ետևը կան նույնպես անորոշ տեսակի ծառեր, որոնց թափ, կանաչ սաղարթից ծածկում է երկնիք զդալի մասը: Շագող տրեփի ճառապայմբները լուսավորում են շենքը, պատերն ու ծառերը: Ներքեցից ապառաժ բարակոշտերի միջով ձգվող շավիզը տանում է զեպի շրջապա-րիսը: Շավիզի ծախ կամում գտնվող ավագույց հուսում է մի ադրբյուր: Շանապարհի մոտի քարերից մեկին նստած է խոր մտածումքի մեջ թաղ-ված մի կին, իսկ շրջապարասի մուտքի ետևը կանգնած է մի այլ էակ: Խաղաղություն, լուսիւն, անզորը ու ինչ-որ սրտաճմիկ թախիծ է հառ-նում այս նկարից: Պեղամի զեկորատիվ կտարումը համապատասխա-նում է անիրական սյուժեին: Ալդափիսի ընդհանրացված բնույթ ունեն եր-կու մարդեկ:

Ի՞նչ էր ուզում առել Թագեսոյանն այս նկարով: Դրա անունն իսկ տա-լիս է այս հարցի պատասխանը: Անուրջներից մեկն է դա: Գուցի և այս նկարի մեջ մարմնավորված է լոկ որևէ երաւու: Այս մտքին տեղիք է տալիս զետեյլ հանգամանքը: Թագեսոյանն ուներ մի ալբում, որի մեջ «գրի եր առնում» իր երացները: Այդ ալբոնի մեջ կա քանինեկ երազի «գրառում», բոլորն էլ շրաներկ ուրվանկարներով վերարտադրված: Կերպարների հըս-տակությամբ, ձեռքի պլաստիկությամբ, թիմայի բանաստեղծականու-թյամբ ու պատկերայնությամբ զբանք այնպիսի երազներ են, որոնք միայն նկարիչը կարող էր տեսնել: Իրական ու ֆանտաստիկ պիշտացմներ, իսկ ավելի հաճախ իրական ու ֆանտաստիկ զուգորդող պիշտացմներ. զրանց մեջ շատ են ճարտարապետական պիշտացմները, ըստ որում գերա-կշռում են հայկական ոճի հուշարձանները: Հիշողության մեջ մնում է լոկ բներից ու մերկացրած արմատներից կաղմանակած հինավորց ծառերի

լարիբինթում: Ալբոմում կան նաև Հառարակ զարդաշրջանակներ՝ վի-նկեսներ և ծաղիկների էպուտներ՝ նրանց մեջ ստղոսկով օձով, և մռայլ երանգներով արված բարդ կոմպոզիցիաներ: Ուրպականներից մեկը պատկերում է մոնումենտալ սանդուկքներ ու ծանր սցուներ անհետոց անցքերի լարիբինթու: Այսներից շղթայով կապված են գաղաններ, վագրեր, հովազներ: Եվ կամ մի հովայական աշտարակ, մամուսպաա, վայրի մի ժայռ, մի տձե լեռ և մի մարդ էլ բարձր պատուհանից գուրս նետված՝ ընկում է: Երբեմն էլ այդ երազները նույն օրվա ապրումներն են՝ կերտանը իր վերջին, մերձիմա՞ս օրերին՝ ամբողջովին սկալպեսա, ու մորուքով, իսկ շուրջը՝ թիթե, բաց գույնի զգեստներով աղջիկներ:

Թագեռոյան այդ «երազները» պատկերազրդել է իր ալբոմի մեջ Մոսկվայում ապրած տարիներին: Երազներն այսպիս ուրվանկարելը առաջացնում էր հիշողության, ներվիր ու աշքերի մեծ լարում և հասցնում նրան հիվանդագին գրության: Բանը վերջացավ նրանով, որ բժիշկը նկարչին արգելեց գրադիլ այդ յուրահասունկ «ժանրով»:

Թագեռոյանի «երազների» ուրվանկարների ալբոմում չկա ոչ մեկը, որ թեկուր հեռավորապն հիշեցնի «Անուրջներից մեկը»: Բաց որանով չի վերջում վերեկ մեր ենթազրությունը, որ այդ նկարը Թագեռոյանի երազներից մեկն է, սրովհետեւ խիստ հավանական է, որ 1896-ին նկարված դրա էսփիզը երազի վերաբարպությունն է, քանի որ որոշել էր գարձնել զա նկար, ապա ալբոմի մեջ չի մտցրել: Արդարի այգամն էր, թի ու համենայն դեպս խիստ հատկանշանական է, որ Թագեռոյանը այդ կտավը նկարելուն ձեռնամուխ եղավ իշխ ժամանակ անց և հատկապի այդ տարիներին:

Նկարչի փոխված ուղու բնութագրման համար տիպական է «Զանցովում» պանոն: Սրա սյուժեն թեև իրական է՝ ծաղիկ հավաքելու տոնից, որ այդ տարիներին գեռւու կար պատկան միջավայրում որպիս ժողովրդական հինավորոց սովորությ, սակայն Թագեռոյանի մեկնարանման մեջ զա ստանում է բոլորովին այլ բնույթ, որ իրենք նման չեն իրականում եղածին: Զանցովումը երիտասարդության տոն է՝ հարսներ ընտրելու տոնը: Աղջիկները ծաղիկ են համարում զաշտում, իսկ տպաները ձիավարժությամբ և այլ խաղերով ցուց են տալիս իրենց բաջաթյունը, ճարպիկությունը ու ուժը:

«Զանցովումը», որ ներթափանցված է մեծ բանաստեղծականու-

թագեսույանի բոլոր կոմպոզիցիոն-սցուժենաւալին գործերից ամենալիրիկականն է, ամենից առաջ գերում է իր այս կողմով՝ միանդամայն ներդաշնակիլով ժողովրդական տոնի բնույթին։ Սակայն առնի հիմնական նոտան կյանքի հրձվանքն է, և հենց այս էլ չկա Թագեսույանի այս նկարում։ Բոլորովին այլ, Հակաղիր զգացմունքներ ու տրամադրություններ է առաջացնում գա։ Առօչի պլանում պատկերված հինգ աղջիկները դանդաղ, ասհուն սիթմով քայլում են լայնարձակ դաշտերի ֆոնի վրա։ Թափիծ և նույնիսկ վիշտ է Հառնում նրանց գեմքերից, որոնք խոսում են ավելի շուտ ամենայն աշխարհիկից հրաժարվելու, քան թե կյանքի հըրձվանքի մասին, որով թիվում է, թե պարարած պիտի լինին նրանց պատերը։ Պանոցի այբ գաղափարական մուահղացման ամբողջականությունը շմախակու համար ձիարշավում մրցող տղաները նկարված են խորրում, և չնշին տեղ է Հատկացված նրանց։ Աղջիկների ճնամենի զգեստների նորքը, աղտոտացրած, ներդաշնակորեն բնարված բաց վարդապուն, բաց մանուշակագույն ու կանաչավուն ներկերն ել համապատասխանում են նկարչը ընդհանուր մտահղացմանը։ Հիշում ես նեստերովի կոտավների կանացի պատկերները, որոնց հետ ընդհանուր գծեր ունեն Թագեսույանի պանոցի աղջիկները։ Պանոն նկարված է ցանցառ քաթանի վրա, առանց հնթաներիկ, և գա գործենի տեսք է տալիս նրան։

Գաղափարական այլ բովանդակություն է տվել Թագեսույանը «Հանձարն ու ամբոխը» նկարին (1909)։ Ի տարրի բություն «Իմ անուշըներից ժեկը» նկարի և «Զան-գլուխում» պանոցի՝ լիրիկական տրամադրություն ունիցող գործերի, որոնց մեջ իրականությունից հեռանալն-արտահայտված է երազկուս մտահայեցությամբ, անդորրավետությամբ, «Հանձարն ու ամբոխը» նկարը համակված է բոլորովին այլ տրամադրություններով։ Այսուղեղ հիմքում դրված է ականավոր անձնավորության («Հանձար») և շրջապատի («ամբոխ») ողբերգական կոնֆլիկտը։ Սակայն, Թագեսույանի նկարում «ամբոխը» բնավէ ժողովորդը չէ, այլ այն քարացածն ու բութը, որ ընդունակ է միայն ծաղրուծանակի և ննթարկել նրանց, ովքեր բարձր կանգնած գոկհիկ, քաղենի աշխարհից։ Թագեսույանի նկարի «ամբոխը» այն «բարձրաշխարհիկ խաժամուն» է, որի մասին մեծ բանաստեղծն ասել է.

«Ծալը ու լուսանք թող որ թափվեն քո գլխին».

(Պուշկին. «Պոետին». թարգմ. Հովհաննիսյանի):

Այս տեսակետից նկարի պլիավոր իմաստը՝ դռեհիկ միջավայրի մերկացումը, վկայում է մտահղացման առաջավոր առաջադիմական հիմքը։ Բայց և այնպես այս գործի մեջ էլ նկարիչն ընթացել է սխալ ուղիով։ Իր նկարի համար փոխանակ ընտրելու իսկապես տեղի ունեցած մի որեւէ դեպք կամ թեկուզ պատկերվածը բացահայտելու կոնկրետ միջավայրում (իսկ այդպիսի օրինակներ կարելի եք շատ զանել թե՝ անցյալում, թե՛ իր նկարելու օրերին), Թագեռոյանը գերադասել է իր մտահղացումը լուծել մի վերացական իրազրության մեջ՝ ժամանակից ու տեղից զուրս։ Հայտնի չէ, թե ե՞րբ և որտեղ է տեղի ունենում զա։ Ճիշտ է, նկարիչն իր «Հանձարին» տվել է այնպիսի զիմապիծ, որը մի քիչ թեթևովենին է հիշեցնում, բայց և թեթևովենին պատկերող նկար չէ։ Նույնպես էլ քիչ կոնկրետ է շամբովից», որտեղ մի՛ բան է աներկրա՞ զրանք իշխող զասակարգերին պատկանող մարդիկ են։ Հանձարի ու ամբովի միջեւ եղած կոնֆլիկտը նկարիչը լուծել է անհատին միջավայրին հակազդելու պլանով։ «Հանձարը» փախում է «ամբովից», որը ծաղրում է նրան ու սուլում։ Թագեռոյանի ընտրած նկարչական տեխնիկան, որ պուանաելիսականն է հիշեցնում, որտեղ մարդիկ ու ֆոնը նկարված են իրար հակադիր գույներու ունեցող առանձին հատվածների եղանակով։ Ե՛լ ավելի են նպաստում նկարի ստեղծած ապավորության վերացականությանը։

Նարեկի է ենթազրել, որ այս նկարի մեջ արտացոլվել են նաև նկարչի անձնական ապրումներն ու զգացումները։ Դրա համար որոշ հիմքեր կան։ Հօգուս այդ ենթազրության է խոսում այն, որ Թագեռոյանը դրա առաջին մտահղացումն ունեցել է գենես 1899 թվականին, այսինքն՝ «Կեսօրյա ձաշ» և «Քարոզ ուղղագավաններին» նկարների համար մրցանակներ ստանալուց հետո, որոնք ուրախության հետ միասին այնքան զանոնթյուն պատճառեցին նրան՝ մրցանակների առթիվ որոշ շրջաններում թյուր կարծիքներ հայտնվելու կապակցությամբ։ Թագեռոյանն իր էսքիզը թողիւ էր մի կողմ և նկարի վերածեց 8—10 տարի հետո միայն։ Այդ լրված թեմային նկարիչը թերեւ վերաբարձավ այն վերաբերմունքից զրդված, որ ցուցաբերեցին նրա նկատմամբ Թիֆլիսի պաշտոնավայրում։ Վ. Գ. Պոլենովին զրած նամակներից մեկում Թագեռոյանն ասում է, որ ուզում է մեկնել Թիֆլիսից, այն աստիճան թունավորել է կյանքը իր պաշտոնավարած ուսումնարանի պետերի կովախնդիր վերաբերմունքը։ Պոլենովի խոր-

Հըրդով, որի կարծիքը թագեռոյանը շատ էր հաշվի առնում, նա այդ բայլը շարեց:

Երբ թագեռոյան ավարտում էր «Հանճարն ու ամբոխը» նկարը, արդեն հղացել էր մի նոր թեմա: «Սոնետ» նկարի (1909) խիստ ընդհանրացված է համամարդկային ու հավերժական թեմային՝ սիրո թեմային: Սակայն, այս միանդամայն ունեալ թեման վերաբարպահված է ամենայն երկրայինից կորլած, հեռացած: Դրա համար էլ նկարիչը սիրահար զույգին նստեցրել է անսահման ծովի վրա լողացող մի փոքրիկ գոնդով մեջ՝ շոշապատված միայն ջրով ու երկնօրով, և ոչ մի բան ցուց չի տալիս մարդկանց ներկայությունը, այն, ինչից կազմված է երկրային կյանքը: Երիտասարդը զութակ է նվագում, իսկ ազշկելով փարած նրան՝ լուսմ է «հաղթական սիրո երզը», ինչպես կուպինալիք անվանել այդ նկարը: Նկարն սմի երկու տարրերակ, որոնք զանազան նվազ են գլխավորապես սերդածով, որին այստեղ զգալի տեղ է հատկացված: Մեկուն (մեծածավալի մեջ) ծովը խաղաղ է ու երկինքը ջինչ, հորիզոնի վրայի թիթե, ծխանման ամպերում անդրագարձել են մայր մանող արևի վարդագեղին ցոլքերը: Մյուս՝ փոքրածավալ տարրերակում զորիզոնը ծածկված է ամպերով, մոտ է փոթորիկը, ջրի վրա փրփրակատար ալլահենքը կան: Ինչպես կարելի է եղանակացնել աղջկա ու տղայի հագուստներից՝ գործողությունը վերաբերում է անցյալին: Ռուսենու ու Զուլիենաւն են դրանք, Պետրարկան ու Լաուրան: Թի՞ պարզապես այդ մատնանակների մի սիրահար զույգ: Նկարչի արտեղ առաջարկած խնդիրը ոչ միայն այն է, որ սաստիկ սիրո ամբողջ ուժն արտահայտի հենց սիրահարների միջոցով, ինչպես արվում է նման դիմքերում, այլև թագեռոյանը ցանկացել է շրջապատի բնությունն էլ դարձնել սիրո այդ տեսարանի ակտիվ մասնակիցը: Ահա թի ինչու այդքան հագեցած են պեղածի գույները: Հալած ոսկու պես բոցավառված է գոնդովի վառ նարնջագույն կողը, որի վրա ընկել են մայր մանող արևի ձաւման ները և կոնտրաստ ստեղծում ծովի մանուշակա-երկնագույն ու կապույտ երանդների հետ, իսկ սրանց էլ հակագրված են երկների զբարությունը, բաց կանաչ-երկնագույնի փոխանցվող ներկերը:

Եթե նախորդ նկարում պուանտելիստական նկարելակերպն ավելի շուտ արտաքին ձևի նշանակություն ուներ, քան թի ըստ էության օգտագործությունը կազմակերպում էր, ապա «Սոնետ» նկարի ծովային պեյզաժի նկարման մեջ կազմակերպությունը կազմակերպում էր:

րելի է նշանաբել իմպերսիոնիզմի որոշ ազգեցություն, որին Թագավորականը տուգաք է տվել մասավորապես այդտարիներին նաև բնականից նկարած իր պելագաժային գործերում։ Այստեղ նա որոշ չափով օգտվում է փոխադարձաբար իրար լրացնող գուցների վերաբերյալ իմպերսիոնիստական դրայթից։ Մյուս տարրերակում, որտեղ պատկերված է մատական փոխորիշը, կազարագույն թուխ ամսերը և ալերախությունը նույնակեռ նկարի ակտիվ կոմպոնենտ են։ Գեղանկարչական տեսակիտից այս վերջին տարրերակն ավելի հաջող է, այստեղ երանդային թեման ավելի նուրբ է լուծված։

Հեթանօտին, ազգաբանական, սիմվոլիկ բովանդակություն ունեցող նկարներից բացի, Թագեռուսանին հրապարակում են հետավոր անցյալի թեժաներ՝ դիցարանական նյութերն ու առասպեկտները։ 1901 թվականին նա նկարել է մի պանո հին հույն նկարիչների Զեբսիսի և Պարագիասի հայտնի առասպեկտի թեմայով։ Թագեռուսանը դժո՞ն մնաց այդ գործից ու ոչընչացրեց։

Դարձալ հին աշխարհից է վերցված մի այլ թեմա՝ «Ֆիդիասն ու Զեսը» (1909)։ ըստ լեբենզի՝ Զեսը հայտնվում է Ֆիդիասին, երբ սա քանդակում է աստվածաշնոր հոչակալոր արձանը։ Նկարը մնաց անավարտ։ Հետաքրքրին այն է, որ հին հույնական դիցարանության ու առասպեկտների մեջ աշխարհաս գանձարանից Թագեռուսանն ընարել է նախ ոչ թե այսպիսիներ, որոնք հանրահայտ էին ու բազմիցս օգտագործված, այլն կանգ է առել այնպիսիների վրա, որոնց սյուժեները առնչվում էին արվիստականներին։

Մեկ տարի հետո, 1910-ին, Թագեռուսանը մտահղանում է մի նոր նկար, որի սյուժեն նույնակես որոշ չափով վերաբերում է արվիստին, զա «Vox pacis» կամ «Sonata mortuorum»-ն է։ «Այսնքը կարծ է, արվեստն անմահ», առա այդ այլարանական նկարի իմաստը, որից պահպանվել են մի քանի էսքիզ և մի անավարտ կտավը։ Նկարի առաջին պլանում, գեմուղմը կանգնած են ուղղաձիգ, մերկ փիգուրներ՝ արվեստի տարրեր տեսակների մարմնավորումը, իսկ նրանց միջև, կենտրոնաց, գերանդին բռնած՝ կանգնել է մահը, որ անզոր է ոչնչացնել նրանց։ Թագեռուսանն այս նկարը մտահղացել է 1910-ին, «Հանճարն ու ամբոխը» ավարտելուց հետո, որի և հակագործթյունն է։ Եթե առաջին նկարում արված է ականավոր անձնավորության՝ արվեստի մարդու վիճակը կենդանության օրոք, ապա այս գործի մեջ նկարիչը այլարանորին փառարանում է մարդու

Հանձարով ստեղծվող արիթմատի բարոր տեսակների անժամկեցյանը: Այս
նկարը Թագեսոյանի ամենալիբրացական և մաշածին գործն է և տար-
օրինակ չէ, որ նկարիչն էլ ստուգ նրանից, թուղեց բոլորովին անալիար:

Թագեսոյանի բարոր գործերի մեջ առանձնակի տեղ է գրավում «Աս-
լան աղան»: Սրա թևան չին հայկական այն առասպեճն է, ըստ որի մահ-
վան հրեշտակը գալիս է, առնելու աղայի Հոգին: Պատկերված է աղայի
ու հրեշտակի գոտինմալոր: Եթի հունական առասպեկլաբանությանը դի-
մելիս նկարիչն ընդհանրացնելու նկատառումով, այնուամենայնիվ, հրե-
նականում ունելիսորեն լուծեց գրանք, ապա «Ալան աղան» նկարել է
միջնադայան հայ մանրանկարչության նմանողությամբ ոճավորելու պլա-
նով: Թագեսոյանի հրամարվում է տարածական լուծումից, ոճավորում է
հրեշտակի, աղայի, ձիու պատկերները: Արտափոր են նաև նյութը և
նկարչի տեխնիկական պրիմուներն այս գործի մեջ: Թագեսոյանն «Ալան
աղան» անվանել է որմնանկար: Եթի նույնինի արտաքին տեսքով «Ալան
աղան» որմնանկար է հիշեցնում, ապա ունի նաև էական տարրերություն:
Նկարված է ոչ թե անմիջականորեն պատի վրա, ինչպես պետք է լինի ըստ
որմնանկարչության, այլև տարրերվում է այսուղ գործածված նյութով
(զիսոս) և հենց կատարման եղանակով՝ տարրեր գույնով ներկված զիս-
ոսի կտորները կարկասին փակցնելով, որով է մտանում է խճանկարին:
Հետապայում Թագեսոյանը զգիմեց այս տեխնիկային, սակայն շարանա-
կեց հետաքրքրվել պատկերման տեխնիկայի նոր եղանակներով:

Թագեսոյանի անապարտ նկարներից հն նաև հնուելաները՝ «Հոգե-
հայ» (1910), «Թուշտանների Համերգը», «Ծաղկիների սիմֆոնիան» (եր-
կուսն էլ 1912-ին): «Հոգեհացը» ունի նաև երկրորդ անուն՝ «Երտաշեսի
մահը» (նկատի ունի Սրբաշխ Բ. Բագավորին): Բայց և այնպիս երկուսն
էլ հրեշտ չեն: Ինչպես կարելի է կրակացնել նկարից՝ այնող պատկեր-
ված է ոչ թե վախճանված արքայի համար արված հոգեհացը, այլ նրա
մահվան առասպելը, որ բավական արածված է հայ ժողովրդական մի-
ջավայրում: Նկարը մնացել է անավարտ, թեև հիմնական կոմպոզիցիոն
մտահղացումը լուծված է: Այսուղ պատկերված է վին նվազով ու հնա-
դարյան առասպելը երգով մի գուսան: Առչեի ամբողջ պլանը գրավել է
երգիշը, իսկ խորբում էսքիզի ձևով պատկերված է հանրահայտ երգը լսող
ժողովրդը: Ամբողջ նկարում գերիշխում են մուգ կապույտ երանդները:
Մյուս երկու նկարների՝ «Թուշտանների Համերգի» և «Ծաղկիների սիմ-

ֆոնիալի» անունները կարող են մոլորով լիան մեջ դցել: Թագեսոյանը նախատել չի ունեցել պատկերել իրոք գոյություն ունեցող թաշունների աշխարհը կամ իրական ծաղկների այս կամ այն տեսակները, ինչպես XVII դ. Հոլանդական ու ֆլամանդական արվեստագետներն էին նկարում: Սրանք Թագեսոյանի լուսորինակ ֆանտազիան են թռչունների ու ծաղիկների թևմայով, որովհեան չկա ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսների կոնկրետ պատկերում:

«Հոգեհացը», «Թոշունների համերգը» և «Մազիկների սիմֆոնիան», ըստ ժամանակի, վերջին թեմատիկ-կոմպոզիցիոն դորժերն են, որոնց մեջ արտահայտվել է նկարչի հեռանալն իրականությունից:

Թեև այն նկատելի փոփոխությունները, որ տեղի ունեցան Թագեսոյանի ստեղծագործության մեջ Թիֆլիս տեղափոխվելուց հետո՝ 1904—1912 թվականներին, վկայում են նրա հեռանալը անմիջական շրջապատի իրականությունից, այնուամենայնիվ դա կատարյալ խզում չեր: Այդ տարիներին նկարված այնպիսի գործեր, ինչպիս «Հանճարն ու ամբոխը», «Սոնետը» և մանավանդ Թիֆլիսում նկարված առաջին «Թան-պյուլում» պանոն վկայում են, որ նկարչին իրականությանը կապող ոչ բոլոր թերերն էին կտրված, որովհետև զրանց վերարտադրումը թեև շատ տեսակներից անընդունելի է, բայց և այնպիս սրուժեները վերցված էին կյանքից կամ կյանքի շռն ունեն: Թագեսոյանի այդ տարիների գործերը ժամանակի տորքին էին: Խիստ ամոր էր նկարչի մեջ նստել սեալիստը, որպեսզի նրա արմատ գցած սկզբունքներն իրենց դգալ շտային: Եվ շատ շանցած դրանք երեան եկան:

1913 թվականից սկսած Թագեսոյանի ստեղծագործության մեջ տեղի է ունենալ մի նոր բնելում, որի հատկանշական զինը է նկարչի վերաբերձը գեսի իրական կյանքի սյուժեները: Գեռևս մի քանի տարի առաջ, 1908 թվականից, Թագեսոյանի արվեստի մեջ նկարված է իմպրեսիոնիզմից հեռանալը և նորից սեալիզմի ուղին ուղը: Սակայն վերաբերյալ այս պրոցեսը կատարված է ոչ թե մեկ անգամից, այլ մի քանի տարիա մեջ և Հիմնականում ավարտված է 1915-ին, բայց իմպրեսիոնիզմի ազդեցության ռեցիդիվները Թագեսոյանի մոտ պատահում են որբեմն հետագայում էլ, ընդհուպ մինչեւ Հոկտեմբերյան Մհծ սկզբուցիւմից առաջին տարիները:

Թագեսոյանի՝ զարդարման ռեալիստական ուղիներից հեռանալու և

իրականությունից կտրվելու կարճատևության հանդամանքը պետք է բացատրել այն բանով, որ նրա արվեստն ուներ ոհալիստական հաստատուն ու առողջ հիմք:

Կատարված բեկման առաջին նշանները կարելի է նկատել այն մի քանի կոտավեմբում, որ նկարել է Թագեռոյանը արտասահմանյան ուղևորությունների ժամանակ և Հայաստանում արած չափուղներից: Այդ նկարներն են՝ «Թերութիւն ծովափին» (1913, Պոսկվա, Տրետյակովյան պատկերասրահ), «Ճամփորդներին սպասիլիս» (1913, Հայաստանի պետական պատկերասրահ), «Երախ գետը» (1917), «Թերութիւն նախահանգիստը» (1917, վերջին երկուսը կենինականի թանգարանում): Եթե այս երկուսն ըստ էության մնում են պեյզաժ, ապա առաջին երկուսը պետք է դիտվեն որպես ժանրային, թեև զրանց մեջ էլ պեյզաժին զգալի տեղ է հատկացված:

Առանձնապես ուշագրավ է «Թերութիւն ծովափին» նկարը: Լուսնկա զիշեր է, ափի երկայնքով ընթացող շոգենավի տախտակամածի վրա հազվիկ են նշմարվում կամբջակային երկու ուղևորների սիրուետները, որոնք լուսավորված են ծովի մակերեսից անդրագարձող լուսնի լուսակ ցոլքրուվ: Շատ լավ և ոչ շարլունային ճեռվ վերարտարված են լուսնի լուսակ անդրագիրի վեհութեանները: Ուղևորների գեմքերը գրեթե չեն երևում, բայց զրանք շրնեն ստաֆագի նշանակություն: Նկարիշը կարողացել է ստեղծել որոշ տրամադրություն: Ովքե՞ր են զրանք, ո՞ւր են գնում: Ակամա մա վիրհիշում են թագեռոյանի վաղ շրջանի «Փեափի պանդխոռովիյուն» նկարը: Այս ճամփորդներն ել այն մյուսների նման հայրենիքը թողած և պանդխոռովիյան մեջ ապաստան որոնող տարագիրները շե՞ն արգուք:

1914 թվականի իմակերպիթստական պատերազմը պայմելիս թագեռոյան արտասահմանումն էր: Այդտեղից Մոսկվայի վրայով Թիֆլիս վերադրձին Վ. Գ. Պոլենովին գրած նամակն արտացոլում է այն թախիծը, որ առաջացրել էին պատերազմն ու նրան կու գնացող զոհերը: «...Ուղում եմ Հաղթաշարել, մոռանալ, բայց հնարավոր չեմ: Սարսափը պատում է, եթե մտածում եմ այդքան մարդկանց կորուսի մասին...» և առաջ, «Փիտնականներն ասում են, որ գա բնության օրենքն է, որ որոշ տարիների միջնադարից հետո անհրաժեշտ է այդ արյունահղությունը. գուցե և նշիշ է դա, բայց զարհութելի է, ու անշանակում է կուբուրայի կատարյալ մնանկություն, քաղաքակրթության անկարողություն,

կոշմար...»¹: Գիտնականների և «բնության օրենքի» վկայակոչումն, ի՞արեկե, խիստ միամիտ է հնչում, ուստի և զարմանալի չէ, որ նկարչի մեջ ի ժագում համաշխարհային այդ սպանդի իսկական հանցափրներին փնտրելու հարցը:

Մոտ երկու տարի հետո, 1916-ին, Վ. Դ. Պոլենովին գրած մի այլ նամակում արտացոլվել են նկարչի ապրումներն ու ավայտանքները Արևմտյան Հայաստանի բնակչության թյուրքերի ձեռքով կատարված զաղանային շարդիքի առթիվ: «Հայ արվիստագետների միության անոնցից շնորհակալության ուղերձ առաքելով Պոլենովին «Միությանը» նվիրած նկարի համար՝ թագեռուսանը գրում է. «Ծնորհակալ են նրանք Զեր ընժայի համար, մանավանդ այսպիսի ժամանակ, երբ բախտի հարվածներից կործանվում է մեր ժողովուրդը մարդկացին զաֆանության պատճառով: Կարենցությունը մեծ հրավանը է մեզ համար, ուստի և Զեր կարենցությունը մեզ համար մի կայծ է, հույս, որ աշխարհը գեռես այնքան սարսափելի չէ: Մեզ համար եկել է մի ժամանակ, երբ մենք սկսել ենք համագույն մարդկաների, ո՛չ բարեկամների, ո՛չ մերձավորների, ո՛չ խոսքի և ո՛չ էլ գործի: Եթե իմանալիք, թե որքա՞ն հմ ատուապում ես մեր հայրենիքի, անարդված ու վիրապոված ներայինների ու քուրերի համար Կուղենացի, որ մեծ կայսրության, մեծ ժողովրդի բոլոր մարդիկ թնկուզ անկ ժամով, մեկ բոպեռով լինենին մեր գերում, մեր տեղը, մեր վերքերի հնատ: Օ՛, որքա՞ն սրտակենք կարտասվին նրանք: Իսկ մենք՝ նկարիչներս, թաքցնելով մեր արցունքները, ջանանք մեր արվեստով միխմարել մեր մնացած նըրայիններին²: Մենք տեսնում ենք, թե որքա՞ն էր վշասցել նկարիչը, որքան սաստիկ էին նրա հոգեկան տանջանքները իր հարազատ հայ ժողովրդի ողբերգության առթիվ: Բայց ինչպես նախորդ նամակում, այսուել էլ թադեոսանը հարց շի տայիս իրեն՝ ինչի՞ց է առաջանում «մարդկային զաֆանությունը»:

1915 թիվականին Թիֆլիսում կազմակերպվում է «Հայ արվիստագետների միություն», որն ընդգրկում է ոչ միայն Թիֆլիսում, այլև ուրիշ քաղաքներում ապրող հայ նկարիչներին: Հիմնադիրների թվում էին այդ տարիներին ժամանակակիցրապես Թիֆլիսում ապրող Վ. Սուրենյանը, Փ. Թեր-

¹ Ե. Թագեռոյանի նամակը Վ. Դ. Պոլենովին 28-Ն-15 թվակիր:

² Ե. Թագեռոյանի նամակը Վ. Դ. Պոլենովին 14-Խ-16 թվակիր:

լեմնովանը, Մ. Սարյանը, քանդակագործ Հ. Գյուրջյանը: Ե. Թագեռոսյանն
էլ է մասնակցում ընկերության կազմակերպմանը և ընտրվում առաջին
նախագահը: Ընկերության գործունեությունն արտահայտվում էր զվարաց-
րապես ցուցահանդիսներ կազմակերպելով, որոնց հրավիրվում էին մաս-
նակցել նաև Թիֆլիսում ապրող այլ ազգությունների նկարիչները՝ Մ. Թո-
քածեն, Բ. Շողելը, Օ. Շմելինը, Վ. Գուգիաշվիլին, քանդակագործ
Յ. Նիկոլաձեն և ուրիշներ: Թագեռոսյանը ներգրավեց նաև իր ուսուցիչ
Վ. Գ. Պոլենովին, որ ընտրվեց ընկերության պատվավոր անդամ:

1917—19 թվականներին Թագեռոսյանը նկարում է երկու պատկեր «Հո-
վիվն ու Հոռը» (Մոսկվա, Արևելյան կուլտուրաների թանգարան) և «Հով-
վերգություն» (Ենինգարագ, Ռուսական թանգարան), որոնք ավելի որոշա-
կի ցուց են տալիս նկարչի շրջադարձը գեղի իրականությունը: Թագեռ-
ոսյանը գենուս 1895 թվականին մի նկար էր նկարել «Հովիվն ու Հոռը»
թեմայով, և մենք կարծում ենք, թե պատահական չէ, որ գեղի իրակա-
նությունը վերագրանալը նկարչին տարավ հին սյուժեների օգտագործ-
մանը: Մենք առիթ չենք ունեցել տեսնել 1895-ի նկարը, սակայն այն հան-
գամանքը, որ Թագեռոսյանն իր գործերի ցուցակում 1917-ի նկարը չի ան-
վանել կրկնություն, հիմք է տալիս հնամարդելու, որ մենք գործ ունենք մի
նոր նկարի հետ, որը նկատելիորեն տարբերվում է դրանից ավելի, քան
քան տարի առաջ նկարածից: Այս թեմայի նոր տարբերակում, ինչպես
մենք ենք կարծում, արտացոլվել են այն ապրումներն ու զգացմունքները,
որոնք հուզում էին նկարչին հայ ժողովրդի ծանր փորձությունների տա-
րիներին: Որքա՞ն թախիծ կա այդ ամսամած, իրիկնապահ պատկերոց
այնքան արիթի հայկական պեյզազում: Մրտաճմլիկ արտօնություն է հառ-
ում այդ ամսայի պեյզազից, ովհարներ հնու միայնակ կանգնած հով-
վից: Թիկնոնքը դիտողին գարձած հովիվը սրինգ է փշում, և կարծես,
թի լուս ու նա շուրջը տիրող լուսությունը խանգարող նրա սրտազեղ մելոդիայի
թախծոս հնչումները: Նկարը համակած է տիսոր տրամադրությամբ, և
առ էլ, ինչպես նաև առաջ նկարած «Զամա-զյուլում» պատոն, Թագեռոսյանի
ամենալիրիկական ու բանաստեղծական գործերից: Երկրորդը, որ նկա-
րիչն անվանել է «Հովվերգություն», թեև նախորդից պակաս թախծոտ է,
սակայն պարունակում է ինչ-որ տաղնապալի տրամադրություն, որն առա-
ջանում է խավարի մեջ սուզվող պեյզազից, որտեղ թեթևակի նշմարում
ևս խորքում կանգնած սիրահար գույգին:

Այդ տարիներին նկարած թագեռույանի մյուս գործերից նշենք մի քանի «Տիրամայրեր» (1911—1914), որոնցից մեկը մանրանկարչական շափսի է; Թագեռույանի մոտ տիրամոր կերպարի մշակումը զերծ է որևէ կրոնականությունից և բառ էության մայրության պատկերումն է: Նկարից մեզ է նայում երեխային կերակորող մի դեռատի գեղջկուճի՝ հայ կնոշ ցայտում գիմագծերով:

Անդրկովկասում ու մասնավորապես Վրաստանում՝ Առլիտական իշխանություն հաստատվելուն անմիջականորեն նախորդած տարիներին Թագեռույանը մտահանում է իր կապիտալ գործերից մեկը, որի վրա աշխատեց ուղիղ տասը տարի և, նրա կարծիքով, էլի անավարտ մնաց: Գա՞քիստու և փարիսեցիները նկարն է, որի սյուժեն ավետարանի «Վա՛ ձեզ, փարիսեցիները տերսոն է՝ Քրիստոսի ու փարիսեցիների ընդհարումը: Ավետարանական սյուժե ըստոքնու մեջ չի կարելի շտեսնել Վ. Պոլենովի ազգեցությունը, որ Թագեռույանից շատ առաջ աշխատել էր Քրիստոսի կյանքին վերաբերող նկարաշարի վրա: Սակայն այս թեմայի գույափարական ուղղվածունք հասնում է Ալեքսանդր Խվանովին, որը ուսական նկարչության մեջ ամենից առաջ Քրիստոսին մեկնաբանեց որպես բարոյապես կատարյալ, մարդկային անձնավորություն: Իվանովի այս մեկնաբանությունից էլ ենում էին Գեն, Կրամսկովը, Պոլենովը, Վերեշչագինը և որդիները: Ալեքսէն է նաև Թագեռույանի նկարի գաղափարական հիմքը: Սակայն Թագեռույանի նկարի սյուժեն իվանովյան չէ. նկարչին հուզում էին Քրիստոսի դրամատիկական խոր կոնֆլիկտը որոշ շերտի հետո: Այս նկարի մեջ չի կարելի շտեսնել հին թեմայի նոր լուծումը. ևս ակնարկում եմ նրա «Հանճարն ու ամրությա» նկարը: Միայն թե այստեղ «Հանճարը» չի փախչում «ամրությօց», ինչպես այստեղ էր, այլ հակադրվում է նրան: Թագեռույանի մոտ Քրիստոսն «աստվածորդի» չէ, պատիկերված է առանց կրոնական համապատասխան հետ քաղցրմեղցրության և հանձին փարիսեցիների ու դպիրների՝ խարազանում է այն ամենը, ինչ քարացած է ու բութ: Այս մեկնաբանությունն իր հետ բերում էր հրաժարումն միտոհիկայից, շինծու հուզմունքից, էքստազից, օրհներգային մոնումենտալությունից և ազոթթային խանդաղաւորունից՝ հօգուս այն ոհալ-պատմական իրազամի, տարապի, կենցաղային մանրամասների և այն ազգապահական հշգրտությունից: Թագեռույանի ըստորած դրամատիկական մունքնուն ինք-

նին մարտակոչ է Հեղության, սիրո, ամեն ինչ ներելու քրիստոնեական պատվիրաններին:

«Ես ուզում եմ պատկերել Քրիստոսին այն միակ պահին, երբ նա անձնատուր եղավ զայրուցին», — ասում էր Թագեռոսանը:

Եվ ընարեց այն րոպեն, երբ Քրիստոսը համակված էր բուռն զայրուցին ու բողոքով ընդդեմ փարիսիցիական կեղծավորության: Քրիստոսի գեմքից ցասում է ժայթքում, շրթունքները դողում են, ու աշբերում ինեւանեղ կայծեր են շողջաղում, ևս նետած իրանից սւլիլ անկյունով և նկարի հարթության նկատմամբ ուղղահայաց պարզված ձեռքը կարծնա վայրկենական ձգումով շամփիում է թշնամիններին: Քրիստոսի պատկերն իսկ, որ նկարիչը մոտեցրել է Հայկական տիպին, տրված է եռանդուն, կանոնական վեհության հետ որեւ ընդհանրություն շռանցող երանգներով՝ զիմազճերը խոչըր են, գրեթե կոպիտ: Քրիստոսի տրագիտոն, արիստոկրատական նրբակազմություն և պասսիվ Հայկասարականությունը ունեցող կերպարի փոխարեն առողջ կոպտություն և վառ զինամիկա, ասես, փիզիկական աշխատանքին ծանոթ ամրակուտ բազուկ: Ամբողջ կոլորիտը ներդրութուն՝ աշքերը սև, մաղերը խիտ ու կպրագույն, որը նրբերանգում է գեմքի առողջ գույները, շրթունքները վառ մարշան, լայն, ասես, բորբոքված: Այս ամենը հեղ «աստվածորդություն» ինչ-որ մարտական, երկրային, մարմարական, ոճալիստական բան է տալիս: Կենտրոնական անձին համապատասխանորեն՝ ամբողջ քրչապատն էլ, փարիսիցիներն ու ժողովուրդը, պատկերված են կոպիտ, նյութեղն կերպարներով, ընդգելած են ունալիստորեն: Խալուածամուկ — խոնացած, մաշված զգեստների կույսեր, արնակալած աշքեր, անասոնական, վանող զեմքեր՝ կատաղած քարացածության, Հոգեկան խավարի ու սուտ բարեպաշտության կենդանի մարմնացումն իր մարտական խոյընթացության մեջ: Միայն ժողովրդի զավակ եղող մտախոն երիտասարդի և պատշական հանդիսատես, գրեթե երեխայական հասակի, ազշկա գեմքերը պատկերված են մողելի հանդես տածված քնքուց սիրով, ըստ որում նքանց զիմազծերում նշանարկում է նկարչի ազգային տիպը:

Ինչպես ասացինք՝ նկարը մնացել է անավարտ, թեև Թագեռոսանը շատ երկար է աշխատել զու վրա, ինչպես իր ո՛չ մի գործի վրա: Այնկարի համար արել է բազմաթիվ էտյուդներ: Պահպանված էսքիզները ցույց են տալիս, թե որքա՞ն ժամանակ նկարիչը որոնելիս է եղել կոմպո-

զիցիան և աստիճաննաբար է ստեղծել: Բուն նկարն արված է երեք տար-
բերակով, որոնք զանազանվում են մանրամասներով:

1926 թվականին այս նկարն ինձ ցուց տալիս, նա ասում էր, որ-
իրեն դուք չի գալիս Քրիստոսին ամենից ավելի մոտիկ գտնվող փարիս-
ցու գլխի լուծումը: Զգացվում էր, որ զրա վրա թափած շանքով նկարիչն
արդեն սպառել է իրեն: Մի անգամ էլ նույնիսկ ասաց, թե դա Համարում-
է իր ստեղծագործության ավարտը: «Վերջացնեմ թե չէ՝ վրձինը ցած-
կդնեմ ընդմիշտ»:

Վրձինը ցած զնել չկարողացալ

Հայաստանում ու Վրաստանում Սովետական իշխանության հաս-
տառվելու տարիներին նկարիչը թեև երիտասարդ չէր, բայց լի էր ուժով:
Թագեռուսական տեսավ, որ Սովետական իշխանությունը ոչ միայն փըր-
կություն բերեց իր ժողովրդին, ոչ միայն հնարավորություն տվեց վերա-
ծնվել սոցիալիստական վերակառուցման նոր սկզբունքներով, այլև նա-
տեսավ, որ մինչ այդ որոշ անձանց նեղ շրջանակի պատկանելիությունը
համարված արվեստը ամեմ դարձել է հոծ զանգվածների սեփականություն,
և ինքը, որպես արվեստագետ, պետք է նշանակալի տեղ գրավի հարա-
զատ ժողովրդի կուլտուրայի այդ նոր կերտման գործում: Եվ այս ամենը
չէր կարող շղանալ այն խթանը, որը նոր ուժեր ներարկեց ծերացող
վարպետին:

ԹԱԳԵԱՍՅԱՆԸ ՍՊԵՏՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1921—1936)

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեզուլտատիան և երեք տարի
հետո Սովետական իշխանության հաստատվելը նախ Ադրբեջանում, ալ-
նուհետև Հայաստանում ու Վրաստանում արմատական հեղաշրջում՝ առա-
շացրին անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու
կովտորական ամրուց կյանքում: Մինչ այդ առանձնապես ծանր էր Հա-
յաստանի դրույթունը. «Ճանշված ու բազմաշրջար, Անտանտի ու գոշ-
նակների ողորմածությամբ սովի քայլայմած ու գաղթի մատնված Հա-
յաստանը, — բոլոր «քարեկամների» կողմից խարված այդ Հայաստանը
այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովե-
տական երկիր: ...Միայն Սովետական իշխանության զաղափարը Հա-
յաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավո-
րություն»:¹

Որքան էլ Թագեսոյանը քաղաքականությունից հեռու կանգնած մարդ
լիներ, այնուամենայի չեր կարող իր հայրենիքը սիրող ամեն որի հնա-

¹ Ի. Գ. Սամակյան, Երկեր, հ. 4, էջ 458:

շգիտակցել ստալինյան խոռոչքի մեծ ճշմարտությունը: Այդ օրվանից ավելի սերտ է գտնում Թագեռույանի կազմը Հայաստանի հետ: Նա գործոն մասնակցություն է ցուցաբերում Սովետական Հայաստանի կառավարության սկսած գեղարվեստական ձեռնարկումներին և ընդհանրապես երկրի արվեստին, ցանկանալով իր ուժի ներածին շափ օգնել Հայքինիքին: Համաձախակի են գառնում Թագեռույանի ուղերությունները Հայստան: տարվա մեջ մի քանի անգամ մեկնում է այդպես ու երկար մնում Երևանում: Թագեռույանը մասնակցում է Երևանում նկարչական ստուգիա զավաճակելուն ու ծրագիրը մշակելուն և թիրոր ցուցահանդեսներին: Շարունակելով Հիմնականում ապրել Թիֆլիսում՝ Թագեռույանը հնույն չի մնում Վրաստանի նկարչական և գեղարվեստական ուսուցման կյանքից: Նա նշանակվում է Վրաստանի նոր կազմակերպված Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր և Նիկոլաձեի, Գ. Գաբաշվիլու, և. Խանոսերեի ու Շառլեմանի հետ կազմում մանկավարժների Հիմնական կորիգը: Թագեռույանը իր մանկավարժական գործունեության մեջ հետևում էր ուսուցչի՝ Գ. Պոլենովի ավանդներին, աշխատում նրազգագացությամբ մոռանալ իր աշակերտներին և ոչ միայն օգնել տիրապետելու նկարչական պրոֆեսիոնալ վարպետությանը, այլև այնպիսի ուղղություն տալ, որ բացահայտվի նրանց մեջ նիբած շնորհը: Թագեռույանի աշակերտներից են Սովետական Վրաստանի այժմ ականավոր նկարիչներից շատերը՝ Ապոլոն Քութաթեաձեն, Կ. Մագարաշվիլին, Կ. Սանաձեն, Պ. Բենիքինը և արիշեներ, իսկ Հայերից՝ Գ. Նալբանդյանը, Հ. Գրիգորյանը, Կ. Մինասյանը: Գեղարվեստի գործոցից ձեռք բերած մանկավարժական փորձը, խոշոր վարպետի հեղինակությունը և վերջապես իրատասարդության հանգեց ունեցած արտակարգ բարյացակամությունը ապահովիցին ապագա նկարիչների սերը: Հիմա էլ, Թագեռույանի մահվանից շատ արիներ անց, ուսուցչի անունը չերմությամբ են հիշում աշակերտները: Աջա թե ինչ է գործ Թագեռույանի մասին ԱՄՓՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, նկարիչ Գ. Նալբանդյանը. «Ակադեմիայում սովորում էի պրոֆեսոր Ե. Մ. Թագեռույանի՝ Պոլենովի աշակերտի գեղանկարչության գաղանականում: Թագեռույանը ծանոթացնում էր մեզ ուսւն նկարիչներին, Ռեպինի, Սուրբիկովի, Ա. Խվանովի, Պոլենովի և ուրիշների գործերին: Ես հաճախ էի Թագեռույանի հետ գնում հայուղներ անելու: Նա տեղաման էր բացահայտում ու բացահայտում էր ինձ համար բնության գեղեցկությունը:

Ֆլ բառացիորեն ամեն անգամ ավելի էին բացվում իմ աշքերը, հետզհետեւ ավելի խորապես էի սիրում ևս բնություններ»¹:

Այդ տարիներին Թագեռույանի ստեղծագործության մեջ զգալի տեղ է գրավում դիմանկարը: Այդ շրջանում նա կերտեց Հովհաննես Թումանյանի (1931), Ալ. Շիրվանդաղի (1929), Հակոբ Հակոբյանի (1934) և իր բարեկամ կոմպոզիտոր Կոմիտասի (1931—1935, որ մնաց անալիք) և մի քանի այլ դիմանկարներ: Թագեռույանը թողել է նաև երկու ինքնանկար՝ մեկը լուսապատճեների (1933), մյուսը փայտաքանդակ (1925): Թագեռույանի դիմանկարացին գործունեությանը նվիրված հատում գլխում մենք ավելի մանրամասնորեն կանգ կաւանենք նրա գործերի վրա, իսկ այստեղ նշենք, որ հայկական պորտրետացին նկարչության մեջ նախահոկտեմբերյան և սովորական շրջանի հայ գրականության ու արվեստի գործիչների ոչ հարուստ պատկերասրահը, ալպինոլ, ճոխացավ ոչ միայն բանակապես, այլև որակապես:

Եթե Անդրկովկասում Սովորական իշխանության հաստատման անժիշտականորեն հաջորդած տարիներին նկարիչը, ինչպես նշել ենք արդեն, թիւ էր աշխատում պեյզաժի ասպարեզում, ապա սովորական տարիներին նորից նշանակալից անել գրալեց պեյզաժը նրա գործունեության մեջ: Առաջվա պես պեյզաժի վրա աշխատելուն Թագեռույանը հատկացնում էր պլիտավորապես ամռան ամբիոնները: Սովորական տարիներին նա նկարել է ավելի քան հարյուր հիսուն կտորության պեյզաժ, որոնց զգալի մասը հայկական են: Բացի այնպիսի վայրերի պեյզաժներից, որ հաճախ էր նրա վրձինը գործմել կտավի վրա, ինչպես՝ Պոլենովը (1924, 1925), Մրիլիսի շրջակալրը (1923—1939), Էջմիածին (1927, 1930), Սևան (1934), կան և նոր վայրերի պեյզաժներ՝ Լոռի (1926), Կիւտովոսկ (1928—1929), Սուզակն ու նրա շրջակալրը (1934):

Էտյուդ-պեյզաժներից բացի, Թագեռույանն այդ տարիներին տալիս է նաև պատկեր-պեյզաժներ: Նա ավարտում է գեռևս 1890 թվականին սկսած, ապա մի կողմ զրած պատկարապատի մեր փողոցը» (1921), որտեղ ժանրացին մոտիվներն էլ զգալի տեղ են զրավում: Փա ավելի շուտ սկսէ իրականության մի կտոր է, որը նկարիչը ցանկացել է վերարտա-

¹ Мастера советского изобразительного искусства. Составители П. М. Сысоев, В. А. Шквариков, Дмитрий Налбандян, стр. 346. Изд. «Искусство», 1951.

դրեւ իր ամբողջ առօրեականությամբ: Սպիտակ շագրայով երկու կին, շայդ տարիներին հայ կանացին էլ այդպիս էին ծածկվում) զնում են տափակ կտուրով, կավաշեն, փոքրիկ տնակներով, մեջբնդմեջ էլ խուզ պատերով եղերված նեղ փողոցի մեջտեղից: Մի տան շեմքի մոտ նստած է մի ծերունի (նկարչի պապը), ձյունասպիտակ մորուրով զլուխը թեքած, ամբողջովին թաղված իր մտքերի մեջ: Մայր մտնող արևի ձառապայիննը ըստ լուսալորի են հորենական տան պատի վերնամասը և տիկ-տեղ պատերից վեր բարձրացող ծառերի մուգ կանաչ սալարթի և հարավային կապուտ երկնիքի հետ հակապատկեր են կաղմուով փողոցի ու տների դորշ մանուշակագույն երանդին, աշխուժացնում պելլամբը:

Նկարիչը կարողացել է այս պելլամբի մեջ վերաբատապեւ արդ տարիների էջմիածնի՝ արևելյան գավառական գյուղաբազարի բնորոշ պատառիկը:

Բնության հետ մարդիկ պատկերով նկարների այս շարքում պիհոք է դպակ նաև «Հուգանք Սլքետկա գետում» (1930): Նկարված է սա բնականից, ավելացված են միայն լողացող կանայք: Թաղենոյանը կարողացի է պահպանել ընկալման այն թարմությունը, որ հաճախ կորցնում էր էտյուր պատկերի վերածելիս: Թայր և այնպես այստեղ էլ, ինչպես սովորական շրջանում նկարած մի քանի այլ գործերում, դեռևս պահպանվել են իմպեսիոնիզմի ազգեցության նշույները: անհամովիչ է վարզագույն գետափը:

Սակայն այս առանձին սեցիդիվները շեն փոխել նկարչի հիմնական ռեալիստական ուղղությունը, նրա վերադարձը դեպի սեալ իրականությունը: Այս տեսակետից խիստ հատկանշական է, որ Թաղենոյանը սովորական տարիներին ավարտեց մուկովայ շշանի ռեալիստական բնույթի մի քանի հին գործերը, ինչպես, օրինակ՝ «Վաղարշապատի մերժուցը» նկարը՝ հիշողությամբ, փորբածալու կրինեց մրցանակների արժանացած «Կեսօրյու ճաշը» և «Թարող ուղղագավաններին» նկարները:

Թաղենոյանի ստեղծագործական դիապազոնի լայնությունը, որ արդեն նշել ենք, առանձնապես երեան եկալ սովորական տարիներին: Նաև իրեն փորձեց նաև որպես մանրանկարիչ, նկարեց «Արշակ Բ և Փառանձեմ», «XII դարի հայ աղջիկ» մանրանկարները: Այս բնագավառում կատարած փորձերը հնտաքրքրական էին Թաղենոյանի համար որպես այլ տեխնիկայի կիրառման հնարավորություն, իսկ պատմական սյուժեներ ընտ-

բելը պայմանավորված էր ոչ միայն էֆեկտավոր տարագների արտաքին պնդագնելությամբ, այլև անցած դարերի ոճը վերաբռադրելու ցանկությամբ:

Նկարչի բազմակողմանիության և շահագրգռությունների լայնության տեսակետից հետաքրքրական են նրա քանդակագործական տարրեր փորձերը: Բացի «Խնդրագանգակից» (1924), Թագեռոսյանը փայտից քանդակում է մի փոքրիկ էկ առյօն (1931), գիպսից, իրեն էսքիզ, իր հոր և մոր պատկերաբանդակները (1927), նկատի ունենալով՝ հետագայում մեծածավալ փոխազդել քարի վրա՝ նրանց տապանների համար: Թանդակում է «Եինն ու երեխան» փոքրիկ արձանը (1928) և օգտվելով Գեղարվեստի ակադեմիայի արհեստանոցից՝ ձևում է որպես խեցի (Կերամիկ), փղոսկրի մի ոչ մեծ կտրից քանդակում է մեղակիոն՝ կնոշ զիսի պատկերով:

1934 թ. գարնանը Հայաստանի պետական թանգարանի Գեղարվեստական բաժնում (Պատկերասահ) կազմակերպվեց Թագեռոսյանի էտյուդների ցուցահանդես, որ ընդգրկում էր ստեղծագործական աշխատանքի գրեթե կես գար և մոտ 450 գործ: Ինձ գրած նամակով Թագեռոսյանը ցանկության էր Հայաստան ցուցահանդեսը նվիրել Վ. Գ. Պոլենովի հիշատակին: «...Նրա հետ են նկարել եմ 40 էտյուդ, — գրում էր Թագեռոսյանը, — կուզենացի այգանք անել նաև այն պատճառով, որ Պոլենովը էտյուդների ցուցահանդես կազմակերպում առաջին նկարիչն էր Մոսկվայում: Նա Հայշտակված էր այդ ցուցահանդեսներով»¹:

Թագեռոսյանը ոչ առանց տատանվելու համաձայննեց կազմակերպել այդ ցուցահանդեսը, մինչ այդ հրապարակութեն երբեք չեղ ցուցագրել իր էտյուդները և իր պանճ էլ ցույց էր տալիս ոչ ամենքնն: Ցուցահանդեսը բացվելուց քիչ առաջ ինձ գրած մի նամակում Թագեռոսյանը իր տարակուսանքներն էր հայտնում դրանք ցուցազրելու վերաբերյալ «Հիմա, երբ մոտենում է ցուցահանդեսը բանալու ժամանակը, ես սկսում եմ անհանգստանալ: Զգուհեմ՝ կհասկանաթ Դուք ինձ, թե ոչ, որովհետեւ ցուցագրելով իմ բոլոր էտյուդները (որոնք Հաղվագեալ եմ ցույց տալիս մարդկանց), որ արել եմ ավելի քան 40 տարիս ընթացքում, կարծես թի շրջում՝ եմ իմ ներսը ու ինտիմ կողմս ցույց եմ տալիս դեռևս կենդանության ։

1 Յ. Թագեռոսյանի նամակը՝ 21-IV-33 թվակիր:

օրոք: Ամիտանը կվրդովեր այդ փաստից: Բայց ահա հարց է ծագում՝ կբավարարվե՞ն իմ ցուցահանդեսից, քննադատությունը կհասկանա՞ արդյոք, որ սրանց քառասուն տարի տուաշ ինձ համար կատարած գործերը ենթակա չեն ժամանակակից խիստ պահանջներին»¹:

Ձուր էին նկարչի տարակույսները: Թագեռոյանի ցուցահանդեսը հսկայական հաջողություն ունեցավ: Զխոսելով արդեն լայն հասարակության մասին, նշենք, որ անգամ նկարիչների դրանում այս ցուցահանդեսը կատարյալ իրադարձությունը էր, միաժամանակ և հայտնություն գրանցից շատերի համար, որոնք երբեք չեին տեսել այդ գործերը և զգիւտեին, թե պելզամի ի՞նչ հիմնայի վարպետ է Թագեռոյանը: Այս ցուցահանդեսը վնասատեց նաև քննադատությունը: Մամուլում լրայս տեսած նյութերից աչքի է ընկուսու և թագեռոյանի գործերը հանգամանորեն բնիւթյան անոնք նկարիւ Գ. Դյուրյանի հոդվածը:

Ցուցահանդեսի հաջողությունը մեծապես հուզեց և ոդերեց Թագեռոյանին: Երիտասարդ տարիներին Մոսկվայում ունեցած հաջողություններից հետո սա Թագեռոյանի առաջին ու լայն հանաշումն էր:

Թրանից չըստ տարիի հետո, 1938-ին, երեանում նորից կազմակերպված ցուցահանդեսը արվելով Թիֆլիսի՝ մի անգամ ևս ամրապնդեց Թագեռոյանի ակնառու տեղը ժամանակակից հայ արվիստում: Այդ ցուցահանդեսում, պելզամներից բացի, որոնց թիվը ավելացել էր 150-ով, կային նաև նկարչի այլ գործեր:

Կյանքի վերջին տարիներին Թագեռոյանը ժամանակ էր գտնում նաև գրական աշխատանքի համար: Պոլենովների ընտանիքի խնդրանքով հուշեր գրեց Վ. Դ. Պոլենովի մասին «Ալկադիմիա» հրատարակչության ծրագրած ժողովածուից համար: Այն ժամանակ զրանք չըրատարակվեցին, սահելայն բավական հետո մի մասը լուս տեսալ եւ. Սախարովայի «Պոլենով» դրամա: Այնուհետև, արդեն սեփական նախաձեռնությամբ, մահվանից թիւ առաջ գրեց «Հուշեր ե. Դ. Պոլենովայի մասին», որը, եղբարից հետո, ուստի նկարիներից ամենամոտիկն էր նրա համար: Այս «Հուշերը» արժեքավոր շատ բան են պարունակում նաև իր մասին, որ մասամբ օգտագործել ենք մենք, բայց և այնպես սպասում են լրիվ հրատարակվելուն:

1927 թվականին Թիֆլիսի օպերայի և բալետի թատրոնում Թա-

¹ b. Թագեռոյանի նամակը՝ 1934 թվակեր:

դեռևանը ձեւավորեց Սեն-Մանսի «Սամսոն և Դավիլա» օպերան՝ տալով հետաքրքրական էսքիզներ, որոնք գժրախտաբար ժամանակին բավարարացնելու համաշափ չգնահատվեցին:

Բացի պելլումաժյին բնույթի սովորական էայուգներից, Թագեռոյանը 1931-ին նկարում է ժանրային բնույթի մի ուշ մեծ էայուղ՝ «Աղոցարանի ժողով», որից ենթագրում էր Հետազայում նկար նկարել:

Թագեռոյանի թղթապանակներում պահպանվել են մի շարք էսքիզներ այն նկարի համար, որ մտահղացել էր նկարել ըստ «Խնձոր կրծեմ...» երգի (1930):

Սակայն որբան էլ Հետաքրքրական ու արժեքավոր լինեն Թագեռոյանի ակր բուրու գործերը, այնուամենայնիվ նրանից, քան թի սովետական սուաշին տարիների մի ամ հայ նկարչից, կարելի էր սպասել նոր բովանդակություն ունեցող, սովիտական դարաշրջանի ուր դաշտավարախոսությամբ տողորված նկարներ: Չէ՞ որ Թագեռոյան անցյալում տիել էր տուաչավոր զաղափարախոսությամբ տողորված մի շարք թեմատիկ-կամպովիցին նկարներ: Որպեսն ինչո՞վ բացարձել զրանց պակաս սովորական ապրիներին: Որոշ շափով զրա պատճառը եղել է նկարչի խստապահանջությունն իր նկատմամբ, որ ավելի էր աճել ժամանակի ընթացքում: Մենք գիտենք, որ անցյալում էլ Թագեռոյան յուրաքանչյուր կտավը նկարում էր մի քանի տարի, նախօրոք բազմաթիվ էսքիզներ անելուց հետո: Կար և մի ուրիշ հանգամանք, որ խանգարում էր նկարչին աշխատելու նոր թեմայի վրա: Նա ուղարկ էր ինչ զնով էլ լինի ավարտել դեռևս նախառուկուցիցն տարիներին սկսած վերոնշշալ օթրիստոս և փարիսեցիները» (Վայ ձեզ, զպիրներ կ փարիսեցիներ): Այս կտավն ավարտելու աշխատանքը զանգակ էր ընթանում, որովհետև նկարն արդեն չէր բավարարում արվեստագետնին, նա, ինձարկի, չէր կարող չգիտակցել, որ իր ընտրած թեման հնացել ու ժամանակավիճակ է: Սակայն զրա վրա թափված հսկայական չանքերը մղեցին նրան շարունակելու աշխատանքը: Վերջին հարկ նզակ թերի թողնել դա, և զրան թափված համարյա տառնացյա աշխատանքը ոչ մի բան չմտցրեց Թագեռոյանի, որպես սովորական նկարչի, ակտիվի մեջ:

Սովորական Հայոստանի կառավարությունը նկատի առնելով Ե. Թագեռոյանի խոշոր ծառայություններն արվեստի ասպարեզում, թի՝ անցյալում, թի՝ սովիտական տարիներին, 1935 թվականին արվեստի վաստա-

կավոր գործի կոչոմ շնորհեց նրան: Թագեսայանի արժանիքների այս ձևնաշումը, ինչպես նաև այն ուշադրությունը, որ նրա արվեստի նկատմամբ ցուցաբերեցին գեղարվեստական հասարակախությունը և մեր հասարակության լայն շրջանները, ծերացող նկարչին ներարկեցին նոր ուժ՝ կերտելու մեր գարաշրջանի համար այժմեական նոր գործներ:

Մահանալուց մեկ տարի առաջ Թագեսայանը մտահղացավ մի նկար, որի թեման ի. Վ. Ստալինի հայտնի խոսքն էր. «Արիշի հողից ո՞չ մի՛ թի՛ չենք ուզում, բայց մեր հողից էլ ո՞չ մի վերջող չենք տա»: Այս թեման ընտրելը ցուց է տալիս, որ նկարիչը վճռական շրջադարձ էր կատարել դեպի սովորական ակտուալ թիմատիկան: 1934 թվականից սկսված ի թաղնուայնի մահից հետո էսքիզ մնացած այս գործի մեջ նկարիչը հաշողությամբ է գեղարվեստական պատկերի վերածել իր Հայրենիքը պաշտամաներու պատրաստ ժողովրդի կամքը: Նկարի գաղափարական առանցքը — Սովորական Միության աշխատավոր հոծ զանգվածների աննկան կամքը՝ պաշտպանելու Մեծ Հոկտեմբերի նվաճումներն ու իրենց Հայրենիքը — արտահայտված է ի դեմս հրացանը բռնած երկու կարմիրբանակայինների, իսկ նրանց հետեւ երկում է անթիվ մարդկանց զլուխների ծովը. անսասան պատճեղի նման կանգնել են նրանք ուսպնիկների հաւել, որպեսզի պաշտպանեն Հայրենի երկիրն ու նրա հարստությունները, ֆարիկաներն ու զործարանները:

Նկատելի նախապատրաստական աշխատանքը՝ էսքիզներ անկել՝ հաճախ աճապին ժամանակ էր խում նկարչից: Աստիճանաբար միայն, հաճախ մեծարանակ էսքիզներ անելուց հետո, մի էսքիզ մյուսին անցնելով՝ լիովին բացահայտվում էր նկարչի մտահղացումն այն ձևով, որը կարող էր բավարարել նրան և թույլ տալ ձեռնամեռվա լինելու րուճ նկարին: Այս անգամ Թագեսայանի մտահղացումը հորդեց անմիջապես մեկ և վերջնական էսքիզով՝ թանի որ Հայրենիքի պաշտպանության գաղափարը մարմնավորված է նախ և առաջ հանձին երկու կարմիրբանակայինների, որոնք, ասես, Սովորական պետության հղորության ու մեր մարդկանց անհողողությամբ կամքի մարմնացումն են, ապա նրանց կերպարները մնալով կոնկրետ՝ զուգորդվում են այստեղ միանդամայն անհրաժեշտ որոշ հանրացման հետ:

Մահմ զօրախոտարար հնարավորություն չտվեց նկարչին ավարտելու նկարը, և մտահղացումը մնաց էսքիզային վիճակում: Սակայն կարեռն

այն է, որ կատարվեց շրջագարձը գեպի նոր թեմատիկան: Թաղեռույթանը վաղաժամ վախճանվեց, բայց և այնպես տեսավ այն օրը, երբ ժամանակին հայ բարժուազիայի կողմից չճանաչված նրա արվեստը գնահատվեց Սովետական Հայաստանի ու Սովետական Վրաստանի լայն շրջաններում:


Մի թուրքիկ հայացք նկարով նկարչի ամբողջ ստեղծագործական ուղուն՝ կարող ենք ասել, որ իր գեղարվեստական զարգացման համար ուստական արվեստին այնքա՞ն պարտական Թաղեռույթանը, ապրելով ու աշխատելով հայ արվեստի զարգացման համար աննպաստ տարիներին, անվելով գերազանցողեն հայրենի միջավայրից վեցրած թեմաներով՝ կարողացավ մեծապես նպաստել հայ արվեստի զարգացմանը: Եթե ռեակցիայի տարիներին Թաղեռույթանը ժամանակավորապես հեռացավ առաջավոր արվեստի ինդիբերից և տորք տվեց ժամանակին, ապա ավելի ոչ և, որ առանձնապես կարեոր է, գեռա Հոկտեմբերյան Մեծ ռեռլյուսիայից առաջ, նորից վերադարձած իր արվեստը ժողովրդին ի սպաս դնելու նախկին ուղին: Ահա ինչու Թաղեռույթանը մուտք է գործում Սովետական Հայաստանի վերածնված արվեստի անդամանը որպես իր նկարելակիրպը, իր տրադիցիաները, գիմքն ու հոդին ունեցող լավագուշն վարպետներից մեկը:


Պ Ե Յ Զ Ա Ը

Գոյզովյուն ունի այն կարծիքը, թե Թագեռոյանին պետք է Համարիչ գերազանցորեն պելզաժիստ։ Գրա համար, անշուշտ, որոշ ճիմք կա, բայց և այնպես այդ կարծիքը բոլորովին ճիշտ չէր լինի։ Թագեռոյանն աշխատել է շատ ժանրերում և պելզաժներից բացի, նկարել է կոմպոզիցիոններմատիկ կտավներ՝ կենցաղային, պատմա-դիցաբանական, ներկայացին բովանդակությամբ, դիմանկարներ, ինչպես նաև դեկորատիվ բնույթի խոշոր պանոններ և թատրոնական գեկորացիաների էսքիզներ։ Եթե գիմանիկարի ժանրով թագեռոյանը մշտագիտ չլինար կամ առաջնային է ունեցել, ապա թիմատիկ նկարը միշտ պատճական բնույթ է ունեցել, ապա թիմատիկ նկարը միշտ եղել է նրա հետաքրքրության առարկան։ Ահա թե ինչո՞ւ թագեռոյանին գերազանցորեն պելզաժիստ համարելը չէր համապատասխանի իրականությանը, որովհետև խիստ կնեղացներ մեր պատկերացումը նրա մասին։ Նկարիչն ինքն էլ նկատում էր այդ բազմապիսովյունը և շատ էր գնահատում։

Այնուամենայնիվ, երբ զիսում ենք այն ամենը, ինչ նկարել է Թագեռոյանը իր ամբողջ գեղարվեստական գործունեության բնիթացքում, չենք

Umananda (1917)





կարող շտեսնել, որ պեյզաժն արդարի խիստ նշանակալի տեղ է գրավում նրա գործերում: Թագեռույանը պեյզաժով ավելի սիստեմատիկ էր զբաղվում, քան մի այլ ժանրով և ամեն տարի նկարում էր 15—25 պեյզաժ, իսկ ընդամենը նկարել է մոտ 500: Եվ պեյզաժային այս ժառանգությունը պահպանվելով դրեմ ամրոցավիճան՝ Շնարավորություն է տալիս Հետևել նկարչի զարգացման ամբողջ ուղան այս ասպարեզում, մի բան, որ շի կարելի անել մյուս գործերի նկատմամբ: Պեյզաժը Թագեռույանի մյուս ժանրերում ևս զգալի տեղ է դրավում, իսկ մի քանիսի մեջ էլ գերակշռում է: Երկու-երեք նկար կարելի է միայն նշել, որոնց մեջ պեյզաժ կամ բույրովին չկա, կամ աննշան տեղ է տրված նրան: Պեյզաժի ենթ պատշաճում նաև Թագեռույանի մի քանի զիմանկարներում: Այն տարիներին, երբ Թագեռույանի արվեստը կտրվեց շրջապատի իրականությունից, և նա ստեղծում էր կյանքից գեռու, երբեմն նույնիսկ ֆանտաստիկական աշխարհ, ապա պեյզաժն այն բնապատճուն էր, որն ամենից ավելի էր նրան կապում իրական կյանքին: Պեյզաժում բացահայտվեցին Թագեռույան-նկարչի շատ լավ կողմերը: Այս թի ինչու Թագեռույանին բայցառութեան պեյզաժիստ համարելով հանդիրձ՝ այնուամենալիք մեծ ուշադրություն պետք է զարձնել նկարչի այդ մարզում կատարած աշխատանքին և ամեն նից առաջ նշել այն ավանդը, որ մուծել է նա հայկական պեյզաժային նկարչության մեջ:

Անցած դարի 80-ական թվականների կեսից առաջ հայ նկարչության մեջ պեյզաժը դրեմ գոյություն չուներ, համենայն դիպու ինքնուրույն ժանրի նշանակություն չուներ, իսկ այդ տարիներից սկսած անմիշապես նկատելիորեն զարգանում է:

Առաջին նկարիչը, որ դրալի գեր կատարեց հայ պեյզաժային նկարչության մեջ և միաժամանակ այդ ժանրի նախահայրը հանդիսացավ մեղանում, Գևորգ Բաշինչաղյանն էր, որ իր զեղարվեստական գործունեության բառասուն տարիների ընթացքում մոտ երկու հազար պեյզաժ նկարեց: Բաշինչաղյանի այս ինտենսիվությունը, որ առավել էս ապշեցուցիչ է, որովհետեւ նրա պեյզաժները ոչ թի էտյուզային բնույթի են, այլ պատկերներ, և որ պայմանակարված էր նրա խոշոր հաջողությամբ, ուներ և իր բացասական կողմերը. միշտ չե, որ նա խստապահանջ էր իր դորժերի նկատմամբ: Այդ պատճառով էլ նա բավական շատ «աւալոնային» բնույթի պեյզաժներ նկարեց: Բայց և այնպես իր ծաղկման շրջանում, 90-ական թվա-

կաների վերջերին և ներկա դարի սկզբին, Բաշխնչաղյանը սակածեց մի շարք փարսկութեն կատարված սկզբաներ, որոնք իրավունք են տալիս նրան ակնառու տեղ գրավի հայկական պեղածի զարդացման պատմության մեջ:

Բաշխնչաղյանի և պեղածիստների հաջորդ սերունդների հական տարբերությունը աշխատելու մեթոդն է: Բաշխնչաղյանն իր պեղածները նկարում էր ասանց օգավկու բնականից, նույնիսկ ասանց հայությունը անելու՝ կարծելով, թե դա խանդարում է նկարչին, կաշկանդում նրա ստեղծագործական երևակայությունը: Այս տեսակիսից Բաշխնչաղյանը հետեւ մը Արքապովկուն, որն ամենից ավելի հետեւդականորեն էր այդ մեթոդով աշխատում: Այդ մեթոդը մի շարք առավելություններ ունենալով հանգերձ՝ միաժամանակ սահմանափակում է նկարչի զիասզանակությունը և տանուզ գետի կրկնությունն, որովհետեւ որպան էլ զարգացած մինի նկարչի տեսողական հիշողությունը, այնուամենայնիվ անկարող է պահել ու վերաբարպել բնության ամբողջ րազմականությունը:

Հայկական պեղածալիմն նկարչության զարգացումը Բաշխնչաղյանից հետո այլ զժուկ ընթացավի Բնականից աշխատելը հայ պեղածիստների համար գարճավ հիմնական, իսկ մի քանիսի համար էտյուպաշին պեղածը՝ ինքնանդանապատճեկ: Սա էլ մի այլ ծայրաշնորհություն էր: Իսկ ինչ վերաբերում է Ե. Թագիսովային, ապա նրա համար էտյուպը միշտ եղել է կյանքի ու բնության ուսուանասիրման կարենը միշոց: օգնել է նրան ընդլայնելու իր ստեղծագործական զիասզանունը: Եվ վերջապես Թագիսովային պեղածները նկարված լինելով անդիքականորեն բնականից՝ գերազանց են շատ էտյուպներ նկարիչների սովորական էտյուպաշին պեղածներից, որոնց մեջ նկատում ենք ե՛ կատարման անավարտություն, ե՛ մոտիվի պատահական ընտրություն: Այս տեսակիսից Թագիսովայինը հայրում է Մոլոկայի նկարչական ուսումնարանի պեղածացին տրապիցիաներին, Սալբասովից, Պոլենովից, Ամիտանից եկող տրապիցիաներին:

Թագիսովային էտյուպներում (խոսքը նրա գործերի հիմնական մտասալիք մտախին է) կա ե՛ կատարման ավարտվածություն, ե՛ մոտիվի ընտրության կոմպոզիցիոն ամրոցականություն, այսինքն՝ օժագած են այն հիմնական հատկություններով, որոնք բնորոշ են պեղած-նկարների համար: Իր գեղարվեստական զորունեալ բառառու տարիների ընթացքում Թագիսովային նկարած գինը հարյուր պեղածների մեջ կարելի է,

Քհարկե, գտնել և այնպիսիներ, որոնք ավելի մոտ են էալուզալին բնույթի պեյզաժների պատկերացմանը, սակայն նրա պեյզաժների զգալի քանակը նույն պեյզաժ-պատկերներն են, միայն թե փոր ծավալի: Դրանցից ամենահատկանշներն են՝ արգել հիշատակված «Բողոքություն», որ նկարել է գենու ուսումնառության տարիներին, «Թոշակալում», «Ենցութիւն նավահանգիստը», «Արաքս գետը», «Զով ցերեկ» (1910), «Փարութեայթում» (1911), «Շոկենալիխն սպասելիս» (1911), «Արարատն ու վանքը» (1913), «Հատկ», «Կեշիներ», «Արարատ» (1920), «Ալգետկա գետը» և շատ ուրիշներ: Այս հայուրացներից մի քանիսը նկարիչը հետագայում կրկնեց ավելի մեծացրած ծավալով, բայց որում համարյա ոչ մի փոփոխություն չկատարեց:

Թագեռայան-պեյզաժիստի տառանձնահատկություններից մեկը բնության պատկերնան շափազանց լայն բնդգիրումն է: Նա չը ամփոփվում նույն թիմաների նեղ շրջանակում՝ անվիճ պայմանագրելով կամ կրկնելով զրանք, ինչպես Բաշինշալյանն էր անում. ընդհակառակը՝ նրան գրավում էին նոր վայրեր, դրանցից ստացվող նոր տպավորություններ, որոնք հնարավորություն էին տալիս ընդգանել ու խորացնել բնության պատկերները: Ինչպես անել հնը՝ ամռան ամիսները հատկացնում էր նա լինավորապես ուղևորությունների ընթացքում էալուսներ անելուն: Ուղևորությունները հարստացնում էին մանավանդ նրա գեղարվեստական փորձը: Ճանապարհորդելը զժվարին գործ է, իսկական արվիսա, պիտույքուն (խոսքն, ինքարկե, միայն կենցազային կողմի մասին չէ): Այս տեսակիստից նա լավ գարոց էր անցել: Առաջին ուղևորությունը Սիրիա ու Պաղեստին՝ կատարել էր իր ուսուցիչ Պոլենսկի հետ: Թագեռայանը խիստ զգալուն էր ամեն տեսակ տպավորության հանդեպ, որովհետև ամեն մի տպավորության ինքնին նյութ է, որ հավարում է նա, հնոտ էլ մշակում արագ արած ուրվանկարից կամ էալուսից: Պոլենովը իր կովտորական ստեղծագործական սովորություններով ոչ միայն աեմնելու ու զգալու, այլև իր առջև փըռված ուղևորության համայնապատկերն ըմբռնելու, կարծես թե կարգալու խիստ զարգացած ունակությամբ, պիտք է նեմադրել, իր երիտասարդ աշակերտի մեջ ոչ այնքան ներարկեց, որքան զարգացրեց ու խորացրեց քնածին ընդունակությունները: Խոսքը այն խելացի, դիտող նկարչի ընդունակության մասին է, որը տոշորվում է իր հետագրքասիրությամբ մարզի ու կատարելասործի արարին տպավորությունների իր ընկա-

լումն ու արձագանքումը, սիրել ու գնահատել դրանք և զարգացնել նրանց տպավորվելու ու վերաբռնպաղեկու ստեղծագործական ձիբը: Աշխարհի ամեն մի անկյունում նկարիչը նրբորեն զգում էր այն, որը բնության փոխազգեցությամբ և պատմության զարգացմամբ ծնունդ է ատլիս ոճին: Այսպիսի զգացողություն էր մշակվել թադեոսյանի մեջ թի՛ զեղարվեստական ընդհանուր կովուրայով, թի՛ իրականությանը խորամուկս լինելու ձիբով, որոնք արդյունավետ ու տպավորություններով հարուստ էին գարնում նրա ճանապարհորդությունները:

Թագեռոսաներ ճանապարհորդելուց առաջ վերանայում էր իր՝ պարագումները, էտյուտները, լուսանկարները, ալբոմները: Ճանապարհին նրանից անբաժան էին ներկատություն, գրպանի ալբոմը ուրվանկարների համար, հեռագիտակը: Նա չէր նետվում տպավորությունների վրա նորդնայի ագանությամբ՝ փորձեց իմանալով, որ այդպիսի ագանությունն անգույց է ու անգործնական, արագ հոգնեցնում է ու ապառում ընկալունակությունը: Նա խորամտորեն զննում՝ մինչ էր իր անսածը, այնուհետեւ ընտրում, ընտրածի վրա կենտրոնացնում ուշագրությունը՝ ուրվանկարում ալբոմում, չայլուր անում: Եթե տպավորությունը շատ ուժեղ է դրան՝ մշակելու ու մեծ կտակի վրա փոխադրելու համար:

Իր ամենամատ շրջագայությունների ընթացքում, մերթ Հայաստանում, ուր լինում էր բոլոր շրաններում, մերթ Արևելյան նվազայում, մերթ Արևելյում Թյուրքիայում, Եթիվասոսում, Սիրիայում ու Պալեստինում, որտեղ լինում էր անցնելիս, կամ այն դեպքերում, երբ ավելի երկարատև ապրում էր որևէ վայրում, ինչպես՝ Բյուրականում, Պողենովյում, Աղուլիսում, Ցործում, Կիսլովոդսկում, Սուլակում, Թափեսյանը միշտ ձգուում էր այդ վայրերում գտնել ոչ միայն նոր մոտիվներ, այլև վերաբռնպահել տվյալ վայրի այն հատկանիշը, այն անկրինելին, որ հատուկ է բնության ամեն մի կտորին: Թաղենոյանն այն պետքաժիշտաներից չէր, որոնց հաջողվում էր որևէ մեկ բան և միայն այն, որ սովորաբար նրանց աշիբ առջևն էր, նա կարողանում էր ընզրկել և այն, ինչ առաջին անգամ էր տեսնում: Թաղենոյան-պեյզաժիստի բաղմաղանությունն ու լայն ընդգրկումը արտահայտվեցին և մի այլ բանում, մինչև վերջն էլ, ըստ այսած նրա զեղարվեստական ավելի, քան բառասնամյա դրծունեությանը, նրա մոտ շմշակվեցին կատարման պատրաստի, կայունացած

Հղանակներ, և նրա գործերի մեջ տրամաքանտ չկա: Անդամ այն գիպքերում, եթե նա կրկնում էր առանձնապես շատ հավանած մոտիվները, միշտ զբանում էր պառկերելու մի նոր ասպեկտ: Դա Թագեհոսյանի, որպես նկարչի և մանավանդ պելցամիսափ, ամենաթանկ հատկանիշներից է, որպեսիր ոչ միշտ կարելի է հանդիպել անգամ ամենախոշոր նկարիչների մոտ: Եվ դա էլ բույլ է տվել նրան վերաբերապես վաղարշապատի այգիների ու դաշտերի արեւազոց հարթությունները, Սեանի, Սանահինի, Քարավազյապի լեռնաշխարհի գովություններ հայրենի Հայաստանում, ոչ պակաս խորաթափանցությամբ զգալ Պոլենովի շրջակայքի, Օկայի առավինյա գովաշունչ մարգագետինների ու տնտեսների հրապարաք, Վենետիկի շրանցքների գույորշեցացումից խոնավ օգը, Բրեսալինի լեթի ժայռներն ու ավաղուտները և այլն:

Ամռան ամիսները, որ անց գք կացնում նկարիչը ուղևորություններ անելով, բնագիտակոր էին լինում նրա համար: Ամեն մի շրջագայությունից Թագեհոսյանը միշտն հաշվով բերաւ էր 20—30 էտյուպ: Մեծածավալ շնորհանք, մոտավորապես 20×21 սմ և համարյա թի միաշափ: արված են ևնթաներկված թղթի կամ ստվարթղթին փակցված քաթանի վրա: Այդ փոքր ծավալը իր զյուրատարությամբ խիստ հարմար էր շրջագայությունների համար, մյուս կողմից էլ նկարչին հնարավորություն էր տալիս զատ հնարավորին շատ փայրեր պարի առնելու: Դրանցից շատերը նկարված են շողենալի տախտակամածից, նավարկության ժամանակ բացվող համայնապատկերը դիտելիս կամ նավահանգստում կանգնած պահին: Թագեհոսյանի պելցամինները, չնայած իրենց փոքր ծավալին, սովորաբար ընդուռելում էին հոկայական տարածություններ՝ նորիզոնի վրա լնաներով եղանակված լուղարածներ:

Թագեհոսյանի պելցամինները հնարքը բարերական են նաև այն տեսակելուից, որ ավելի, քան նրա մյուս գործերից որևէ մեկը, հնարավորություն են տալիս մեկ խոսելու նրա աստիճանական ամելի, հպատկապես գեղանիշարշական վարպետության մասին, թի ինչպես էր ճախանում նրա ներկապնակը, ինչպես էին ներկերը գտնում ամելի տպավորիչ գույններն ավելի հազեցած և յուրաքանչյուր վրձնում՝ ավելի արտահայտիչ: Դա ակնրախ գործակի, երբ 1934 թվականին Հայաստանի թանգարանի գնդարվեստական բաժինը (Պետական պատկերասրահը) կազմակերպեց Թագեհոսյանի էտ-

յուրացին գործերից ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվեց գերազանցորեն՝ պեղաժային մոտ 450 գործ, այնուհետև էլ հետմահու 1938 թվականի ցուցահանդեսում դրանց թիվը ավելացվեց ևս 50 էայուրով, որ արել էր նկարից կյանքի վեցին երկու տարում, և դրոնք տալիս էին այդ աճի պարզ, հետևողական պատկերը:

1890 թվականի դրիմյան պեղաժները, որոնք, ինչպես ասել ենք, թագոսյանի ամենավաղ շրջանի գործերից են, աչքի ընկնելով նյութի մանրակրիստ ուսումնասիրությամբ, կարծես, գիւղս չին պանորում ո՛չ անհատականություն, ո՛չ էլ նկատելի վարպետություն, բայց որոնց արդեն ուշադրություն գարձեց Վ. Պոլենովի խորաթափանց աշքը նկարչության ուսումնարանի աշակերտական ցուցահանդեսի մյուս գործերի մեջ։ Դրանցից ընդամենը մի երկու տարի հետո նկարված այնպիսի պեղաժներ, ինչպես «Կոմիտասը Էջմիածնի լճի ափին» և մերձմոռակովյան մի քանի տեսարանները և դրանց մեջ «Բոգորոսիկում»-ը արդեն զգալի աճ էն առաջինների համեմատությամբ և աչքի են ընկնամ ու միայն մեծապես ազատ կատարմամբ, այլև անսովոր վարպետությամբ՝ երանդափարման տեսակետից գենուս զուազ մնալով հանդերձ։ Ժամանակի իմաստով՝ հաջորդ գործերում՝ էջմիածնի ու Գարալացյաղի շրջակայրի մի շարք պեղաժներում (1894) և մանավանդ Վ. Պոլենովի հետ Սիրիա ու Պաղեստինի կատարած շրջապայտթյան ընթացքում (1899) նկարսն պեղաժներում՝ թաղենույանը բացահայտվում է որպես պլեն-էրային¹ նկարչության դրվագին խնդիրները լուծող նկարիւ։

Այսպիսով Թագեհոսյանը, որպես կոլորիստ նկարիչ, դրսեռում է երես կեռւս 1900-ական թվականներից առաջ, այսինքն՝ այն ժամանակ, երբ ամբողջովին կանգնած էր սեալիստական դիրքերում։ Մենք ընդդում ենք այս հանգամանքը, որովհետո Թագեհոսյան-գունանկարչի, մասնավորապես պիեն-էրիստի, ծաղկումը հաճախ կապում են հետագա ժամանակաշրջանի հետ, երբ նկարչի արվեստում արտահայտվում է իմարեսիոնիդմի ազդեցությունը։

Շոշափելով Թագեհոսյանի իմպրեսիոնիստական շրջանը՝ անհրաժեշտ է ամենից առաջ նշել, որ դա երկարաւու չեղավ, ընդգրկեց մոտավորա-

¹ Բացօթյա (ՓԲ). Հայոցության այն տեսակը, որ կատարվում է բաց օդում (ի հակադրություն արվեստանոցի), և գերաբաղրում է արևի ցոլըն ու օդային տարածությունը։

պես 5 տարի՝ 1904—1908 թվականները, և երկրորդ՝ Թագեռույանը հետեւ վողական իմպրեսիոնիստ չէր և այդ տարիներին զուտ իմպրեսիոնիստական պլանով նկարած գործերը շատ չեն. «Պուլզուի գետաբերանը» (1902), «Ան գոնդունեց» (1904), Բրեստանի պեյզաժների շարքը (1907); իմպրեսիոնիզմի զգալի աղքացությամբ է նկարված այն պեյզաժների մեծ մասը, որ բերեց Թագեռույանը 1904 թ. ամռանը Իտալիա կտուրած շրջագայությունից. և մասնավորապես վենետիկյան ջրանցքները պատկերող մի շարք պեյզաժները: Դրանց մեջ Թագեռույանն օդապրոծով՝ է իմպրեսիոնիզմի գրավիլներից մեկը՝ փոխադարձաբար լրացնող գույների գուգարաւում, բայց և ամսական իրական աշխարհը չի լուծում զուտ գունագեղ վրձինումների մեջ. նյութական որոշ ասարկայականություն պահպանվում է: Վերջապես այդ նույն ասարիներին Թագեռույանը նկարել է նաև աշնաբիսի կտավներ, որոնց մեջ գիրակշռում է ունակիստական սկիզբունքը, ինչպես Բյուրականի պեյզաժների շարքը (1903), Արևմտյան նվրոպակտարած շրջագայության ժամանակ (1904-ի ամռանը) նկարած մի շարք պեյզաժները, ինչպես «Ենիսեյի պատուն», «Իիստենշտեյնի գրոսայզին», «Մյունիհն», ինչպես նաև գարցայլ Արևմտյան նվրոպայում կտարած ուղղերությունից (1906) բերած շվեյցարական մի շարք պեյզաժները՝ «Շիլիոնի գլուխկո», «Շիլարո» և այլն, նույն 1906 թվականին Թիֆլիսում նկարած մի բանի պեյզաժները:

1908 թվականից սկսած իմպրեսիոնիզմի աղքացությունը համարյա շրջում է, մուռմ է ուժեղացված գունագույնություն, որ հասուն է թագեռույանի մինչև կյանքի վախճանը նկարած բոլոր գործերին:

Խոսկովի թագեռույանի պեյզաժների ժամանակ է նշել նրան, որպես պեյզաժիստի, բնորոշ մի գիծ էս: Թագեռույանը սիրում էր արեր: Իհարեւ ո՞ր նկարիչը արեք չի միրում, առավել ևս, որ թագեռույանը ծնվել էր մի երկրում, որտեղ այնքան վլա է արեր: Հարավն արեվով է ապրում, բայց ապրում է ստվերի մեջ, ստվերի կենսարեր հրապարքը զովության պոեզիայի մեջ է. զովությունը արհավատ երկրներումն է ծնվել: Նրա հովանու տակ է կենդանացն միտքը, այստեղ միայն հնարավոր էր ստեղծագործել: «Շատրվանների հիշտավիտ զովության մեջ», ինչպես Պուշկինն է ասել Սաադի մասին զրած իր արևելյան բանաստեղծություններից մեկում: Ոչ թե անապատ, այլ օպիս, ահա արեկերի ու հարավի պոեզիան: Թագեռույանն իր ամրող

Էռովլամբ զգում էր այդ պողպիանը նա ստվերի նկարիչ էր, բայց ոչ ամպամած ու գորդ օրվա, երբ խոհնանում են բոլոր գուշները ու միաձուլվում — դառնում տաղտկափ, պղպոր բիծ: Միբել ստվեր, նշանակում է միբել արև: Սամիկը լավ է որպես կընարաստ, որպես շոդ, արևաշոդ ցերեկի հակառակ կողմ: Ոչ թե սահն, մեսած ստվեր, այլ զավ, կենդանի. վետինուուն լուսաստվեր: Թաղեռոյանը սիրում էր պատկերել հենց այս թանձր ու զով ստվերը, որտեղ զավները հյութեղ են, հագեցած, տամուկ, խոնավ, կենարար ու հրճնալի:

Հատկանշական է, որ նկարիչը իր ամենից ավելի նախասրբած էլուստիների շարքն էր գասում բրոժումյան պերգամենտը, որոնց մեջ ստվերի ու զովության մոտիվները գերակշռող էին փառահներ անառակի դարավար ծանրի շրջապատում: Այդ շարքի տասը պերգամենտը կամել էր նա իր բնակարանում, մինչդեռ նրա մյուս բոլոր պերգամենտը ժամանակադրական կարգով կանոնավոր գարսված էին պահարանում: Հիշում էմ և հնաեւալ զրուցը նրա տանը նմանավոր բրոժումյան պերգամենտի կողքին պատից կախված մի պերգամֆ առթիվ: Երբ ևս հաջցիր, թե զա ինչ է, Թաղեռոյանը պատասխանից. «Հոկուրիալն է»: — «Ինչպե՞ս թե կոկորիան է: Քար է այստեղ, արևախանձ ժայռեր, համաստարած շր ցամք, իսկ այստեղ, զով, պայծառ, կանաչ զալտրիք»: Թաղեռոյանը պատասխանեց. «Այս, այսպիսի պերգամֆ է շուրջ բոլորը, սակայն զվակին կից կա այդի՞ս սրանշելի, ամբողջովին կանաչ ու ստվերութ: Այստեղ միայն կարելի է հանգստանալ: Դա էլ նկարել ենք: Սակայն Թաղեռոյանն ընդգծել է ոչ թե վանք-զվակիը, ոչ թե մոայլ ու ահավոր Ֆիլիպ Ռ.-ի նախասիրած այդ շարապուշակ տապանի¹, որ կանդնած է Գվալպարամայի. արևախանձ, գեղնագործ ապառաժների շրջապատում, ոչ թե այդ պերգամֆի շեշտաված բնույթը, որ զանթեական դժոխիք երկրացին մի նմանակերպն է, այլ նրա այդ խնդրու, կանաչ ու ստվերոս ովրիպակը»: Կաթոլիկական մոլուսնության այդ մոայլ, մահաշունչ օրհներդի մեջ Թաղեռոյանը լսել է Վերածնության այդ պատահական թարգծալիքնը և մոցը իր շրջապատթյան ալբումի մեջ: Խակ բավական ժամա-

¹ Հոկուրիալ վանք-զվակը, որ զանգում է Մաղրիզից 50 կմ հյուսիս-արևմուտք, Սիւնու Գվաղարումա ինչնաշըմայի վրա, կառուցել է Խաղանիայի Ֆիլիպ Ա արքան (XVI դ.):

նակ անց, 1921-ին, իր ալբումը թերթիկս, վերարտադրեց դա որպես ոչ
մեծածավալայ, կանաչ գույնով հագեցած պիզզաժ:

Կանաչի թագավորության պատկերամը պիզզաժին նկարչության
ամենագոփակա խնդիրներից մնին է. այսանդ չկա ձեռքի այն սրությանը,
որ ունի քարի թագավորությունը՝ ժայռերը իրենց գույների փոփոշական
վիավիառամերությունը. կանաչը գժվար հասանելի է, և շատ քչերին է հա-
շողվում վերաբառապեր զալարիքի առի նրերանդները: Թագեռոյանը
կարդանում էր զանել ու վերաբառապեր սպիրական աշրի համար ան-
կարահելի նրանց նրբագույն երիներանդները:

Հիշում եմ նաև մեր մի շրջագայությանը Գառնիում: 1934 թվակա-
նին էր զա, ամենանը, նրեանում կազմակերպված նրա կայուղների ցու-
ցահանդիպց հնուու Ռվ Եղեկ է Գառնիում, վիտե, թե որքան ունեղ է այն-
տեղ լերկ, արեամանձ լիսների և ձորի կանաչի՝ խաղողի՝ այդինքների,
սաղարթախիա ընկույնիների ու թթենիների ալդ օավիսի հակապատ-
կերը: Մենք մոտեցանք կիրճի քարափին: Ինձ թվում էր, թե նկարիչն
անպայման կընարքի այնպիսի մի պատասիկ, որի մեջ բնության սուեղ-
ծած այդ հակապատկերը կը տեսվը գտնի: Մ. Սարյանն անպայման կանգ
կառներ այդ մոտիվի վրա: Բայց Թագեռոյանը իր էտյուդների համար
(որքան Հիշում եմ՝ արեց կը հատ) ընտրեց հենց այդ կանաչ, սովորու-
ացգիները կիրճի լանջերին, որի հատակից զալարված է Գառնի գերու:

Ընդգերավ Թագեռոյանի պիզզաժների այս գերակշռող կողմը՝ սև
իշարկե, չեմ ուզում ասել, որ նա նկարչի աշխավ չեր տեսնում քարերի ու
ժայռերի հասպայըրը: Նա զգում էր նրանց գույների ու արձանագրծական
ձեռքի ամբողջ ճանությունը, հաճախ էր նա գերվում նրանց խստաշունչ
սպազմայու: Հիշենք նրա պաղեստինյան էտյուդները, Սիրիայի, Կորսի-
կայի ափերի ու Բրետանի ժայռերի, Նորմանդիայի ավազուտների և
վերջապես Հայաստանի (Էջմիածին, Սևան, Լոռի) էտյուդները: Դրանք
բավկան պերճախոս կերպով ասում են, որ սավերի, զովության ու խո-
նավության հետ միասին նա ոգեշնչում էր նաև քարեղեն բնության բարկ
կոլորիտով: Նրա ոգեշնչումների զիապազոնը բավական լայն էր ու բազ-
մազան: Բայց և այսպես ավելի սիրելի ու սրտամուտ էր նրան բնության
ահա այս սովերտա, զովաշունչ, թանձր ու խոր կանչ գույներով հագե-
ցած հատվածը, որ ամենից ավելի հաճախ էր պատկերում: Յուղաներկի
երանգապահակի վրա նա գտնում էր իր նախասիրած ծիսծանը:

Թագենոսյանի պելցամֆների մեծ մասը ամառ է, սպատկերում: Հարավում ապրուղ նկարչի համար միանդամայն հասկանալի է զա, առավել ևս, որ Թագենոսյանն այդ ամիսներին բոլորումին ազատ էր լինում և իր ժամանակի տերն էր: Սակայն առանձնապես սիրում էր նա զարտունը, զգում էր զա նրբորն և վերաբարպատմ էր բնության զարթունը: Հարավում զարտունը շատ կարծ է և արագ հաջորդում է ամառը: Եվ ամեն տարի Թագենոսյանը անպայման իր վրձինով նշում էր այդ վաղանցով դարձնել: Հենց որ սկսում էրն զարնան առաջին օրերը և ուշում ծառերի պտավները, Թագենույնն առնում էր իր նկարչանանվիք ու զնում մերլ բուսաբանական այգին, մերլ Վերայի այգիների հոգմը, մերլ էլ քաղաքից գուրս որևէ տեղ: Նրա ամենասիրած և գարնանային պելցամֆների համարյա թե միակ մոտիվը որին հաճախ էր նա վերագտնում, զեղձի ու նշան ծաղկած ծառերն էին: Զարմանալի պանտիկովիչամբ ու նույն բացահայտմամբ էր նա վերաբարպատմ ծաղկած ծառերի բաց վարդագույն ու հերմակ թերթիկների բնքշությունն ու թթիուը:

Ավելի քիչ էին զրավում Թագենոսյանի աշնանային մտահիվները, բայց զրանց մեջ նա նա կարողանում էր երեսն բերել ճախ նրբերանգներ՝ ճշմարտացիորեն վերաբարպետով թասմանով բնությունը: Այդպես ևն, օրինակ՝ «Արագածը Երեանից», «Արաբատն աշնանը» և այլ պելցամֆները: Բայց ձմեռն արգեն ամենաէին չէր սիրում նկարնել: Նրա բաղմաթիվ պելցամֆներից մեզ հայտնի է ոչ մի բանով աշքի շնորհությունը միայն մը ձմեռային պատկեր:

Թագենոսյանը հազվագեց էր զիշեր նկարում: Մեզ հայտնի է միայն չորս պիշերային էտյուդ՝ «Էլունկա զիշեր» (Մուկվա), «Փարոս Թելլութում» (1911), «Ճանապարհորդներին սպասիկա» (1911), «Սեանը պիշեր»: Երկու տարի անց Թագենոսյանը առաջին երկուր վերածեց պատկերի: Բայց զրանից, զիշերային սպուժն ունեն նաև մրցանակի արժմնացած «Փարոս ուրդագավավաններին նկարը և Ռերիխովի «Ճանածառ» օպերայի զիշերային էսքիզը: Ահա այն ամենը, ինչ կապված է զիշերի պատկերման հետ: Բայց նկարիչը վարպետորն է վերաբարպետ զիշերը: «Փարոս Թելլութում» էտյուդի և զրանից արված պատկերի, մանավանդ առաջինի մեջ, մեծ խորաթափանցությամբ է նկարված Հարավային մութ զիշերը և զրա առաջարած խորհրդականությունը: Արտասովոր վարպետությամբ է վերաբարպետ լուսնի արտացոլման խաղը ծովի վրա,

սրին կարող էր նախանձել ամեն մի ծովանկարից: Զափազանց գեղանը-կարշական է այն պիշտացին պելզամբ, որ պատկերում է Պորտ-Մայվի սովորակառուցքը լուսարձաններից լուսավորված ֆելլան բնոնակիրների և շողենավին սպասարկների մուտ ու լուսավոր կերպարաններով («Շո-գենավին սպասելիս»). առանձնապես նույր է վերարտադրված գույնը-դույն լուսակիրի արտացոլման խավը շրի վրա:

Բանաստեղծականությունը հատուկ է թագեռույանի ոչ միայն պար-նանացին մուսափ ունեցող պելզամբներին, այլև հատկանշական է պելզա-ժային բալոր գործերին. պակաս խորաթափանցությամբ ու զգացմունքով չի նկարել նաև և ամառը: Ավելին՝ քա հատուկ է նրան, ընդհանրապես իրեք նկարչի, բայց ամենից ավելի լիրի բացահայտվում է նրա պելզամ-ներում, որոնք նրբության ու լիրիկականության իմաստով մինչև հիմա-անդերազանց են հայ պելզաժային նկարչության մեջ:

Թագեռույանի պելզամբներն իրենց լիրիկականությամբ ու բանաստեղ-ծականությամբ, հուզականությամբ ու բնության նույր զգացողությամբ՝ մոռ են կերպանի պելզամբներին: Բայց այն ժամանակ, երբ թագեռույանի պելզամբները միշտ կննուուրի են և տողորված բնության լավատեսական ընկալմամբ, կերպանի համար ավելի հատկանշական են եղերերգական ու թախուա արամազգություններով համակված պելզամբները, իսկ թա-դիսյանի համար այսպիսիք բացառություն են: Նրա բազմաթիվ պել-զամբներից և արքեն հիշատակված «Հովիլին ու Հոսալ», «Հովվերգական» նկարների պելզաժային փոնիրից բացի, կարելի է միայն նշել «Արագած» պելզամբ (1917), որը կերպարգական սրացակի բնույթ ունի: Համաշխար-համբն առաջին պատկանական ժամանակ նկարված այս պելզամբի, ինչ-պես նաև «Հովիլին» և Հոսալ և «Հովվերգական» նկարների մեջ առաջըն-դիմ են այդ պատկանական թագեռույանի մեջ առաջացրած ծանր ապրում: ները — արքայահայերի կոտորածները, հայրենիքի զլիսին պայմանական պելզամբը: «Արագած» պելզամբը նկարչի լավագույն ստեղծագործություններից է, նաև կարողացել է այստեղ վերարտադրել հայկական բնության ներշնուն պատկերը՝ չնայած այն բանին, որ որոշ գույներ կարող են խիստ ինտենսիվ թվաքանակությամբ մանուշակագույն լանջերը: Այս պել-զամբի առավելություններից մեկն էլ այն է, որ զա լիովին Թագեռույանի սակավաթիվ պելզամբներից է, և, ինչպես թվում է մեզ, նկարված է ոչ ու թի էտյուղից, այլ հիմնականում՝ բնականից և արվեստանոցում:

ավարտված է միայն Բացի դրանից, շափառ (54×76) համապատաս-
խան է նկարային բնույթի պեղաժների շափանին: Դա կարող է նաև հեր-
թել թագեռոյանի մասին հայտնված այն սխալ կարծիքը, թե նո փոքրա-
ծավալ պեղաժների նկարիւ է միայն:

Բացի ինչպես սովորաբար, այդ տարիներին ևս, երբ թագեռայանը
պեղաժներ էր նկարամ միայն բնականից, գարջաւ առաջաւ պես բնու-
թյան ընկալում էր միայն նրա կենուրախ ասպեկտով: Իսկ նկարչի
հոգեվիճակն արտացոլվել է միայն այն բանով, որ այդ տարիներին հա-
մարյա թե նա չի աշխատել:

Սովորական շրջանում թագեռոյանի նկարած պեղաժներին համուկ
է ոչ միայն այն լավատեսությունը, որ առաջ էլ հատկանշական էր նրա
պեղաժագին գործերին, այլև կյանքի վերջին տասնհինգ տարիներին
դրանց կննտուրախությունը հասնում է առավելագույն ցայտունության:
Բացի գրանից, աչքի են ընկնում կատարման Վ'լ ավելի մեծ ազատու-
թյամբ, և դրանց վրա տեսնում ենք իսկական վարպետության այն կնի-
րը, որ խոշոր նկարիչներն էլ ձեռք են բերում երկար ու համար աշխատ-
ատանքով միայն և որ արտահայտվում է այն յորոգինակ Ժամանությամբ,
ուր ոչ մի ավելորդ բան չկա, ամեն ինչ մտածված է և կտավին դրված
յուրաքանչյուր վրձինումք խոտրեն հաշվված, ուր նվազագույն միջոց-
ներով հասնում ես առավելագույն արտահայտչության: Ժամանակի ըն-
թացքում Թագեռոյանի աճած վարպետության շոշափելի ավացուցը
կարող են լինել ոչ միայն երեսնի շրջակայքի մի քանի պեղաժները, որ
նկարել է նա 1921-ին, և մանավանդ՝ 1934-ի սեանյան պեղաժների
շարքը, ինչպես նաև նույն այդ թվականին նկարված Առողջակ շրջակայքի
պեղաժները: Այս վերջին գործերով բայց էսպիցիան ավարտվում է թագեռո-
յանի, որպես պեղաժիստի, գործունեությունը:

Թագեռոյանի պեղաժները շատ տեսակետներից և ամենից առաջ
բնության ընկարման նրբությամբ ու խորությամբ՝ հայ գեղանկարչության
ստեղծած լավագույն գործերից են և դրանով էլ որոշվում է այն նշանա-
կալի ավանդը, որ ներդրել է այնտեղ մեր նկարիչը:

Գ Ե Մ Ա Ն Կ Ա Ծ

Թիմանկարը բանակապես զգալի տեղ չի գրավում թագեռոյանի գործերի մեջ։ Նկարչի ձևոքով կաղմված ցուցակում ընդամենը բանշորս հատէ, իսկ մեզ բանութն է ճայտնի։ Գեղարիխոսական բառանմամբ գործունեության համար, իհարին, շատ չէ զա։ Ժամանակի տեսակետից էլ հավասար չի եղի զիմանկարներ նկարելը։ մերթ անցել է 5—7 տարի, և Թագեռոյանը ոչ մի զիմանկար չի տվել։ մերթ էլ մի տարվա մեջ նկարել է երեք հատ։ Թիմանկարների մեծ մասը սպիտական շրջանում է նկարված։ Այնուամենայնիվ բոլորովին սխալ կլիներ եղարկացնել, թե զիմանկարը քիչ էր հետաքրքրում Թագեռոյանին, թե կուզ և նախասովիտական տարիներին։ Նախառկատեմբերյան շրջանում զիմանկարը որոշ շափով պատվերից կախված ժանր էր։ Մանոթանալով նախառկատուցիսն, այսինքն՝ մոտ 25 տարվա ընթացքում նկարած գործերի ցուցակին՝ տեսնում ենք, որ բացի Գեորգ Դ-ի և երիմյան Հայրիկի զիմանկարներից, ո՛չ մի ուրիշ պատվեր չկա։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Թագեռոյանը ամեն որի նկարը չէր նկարում, այլ միայն նրանց, ում ուզում էր։

Հաճախ եմ ասկիթ ունեցել Թագեռոյանից լսելու, թէ Հետաքրքրական կլինիկը նկարել այսինչին, և կամ ափսոսանք, որ չհաջողվեց նկարել այդինչին: Սովետական տարիներին սևփական նախաձեռնությամբ նկարեց Շիրվանզագեի, Հովհ. Թումանյանի և Կոմիտասի դիմանկարները: Նրա մուլերափ վրա նղած վերջին գործերը Կոմիտասի և իր ընտանիքի նկարներն էին:

Այնուամենայնիվ խիստ ցավալի է, որ Թագեռոյանը թիշ դիմանկար թողեց մեզ, որովհետև անկասկած օժտված էր դիմանկարչին անհրաժեշտ բոլոր հատկություններով: Թագեռոյանը դիմանկար անհման չէր սահմանափակում իրեն միայն արտաքին նմանությունը վերարտագրելու խթնդրով, այն կարողանում էր տալ պատկերվողի ավելի խոր բնութագրքը: Թի որքան հրանալի դիմանկարից էր նաև՝ կարելի է եղրակացնել Ռ. Մ. Սուրենյանի (1891) նկարից, որի մասին խոսել ենք արդեն և որ նրա առաջին գործերից է: Եթիւասարպական շրջանի այդ դիմանկարի մեջ թիեն կարելի է նկատել պատկերման մեղանշումներ, օրինակ՝ աչ ձեռքը, բայց դա նկարված է այնպիսի ոգեշնչումով, այնքան կենդանություն կա այդմեղ, որ բոլոր մանր թիւրություններն անտեսվում են: Այդ տարիներին է նկարված նաև պրոֆ. Շիացի դիմանկարը, որ Հայոնաբերված է 1945 թվականին և նշված չէ Թագեռոյանի ձեռքով կազմված գործերից ցուցակում: Այս նկարը չունի այն հմայքը որով Ռ. Մ. Սուրենյանի դիմանկարն է գերում դիտողին, բայց պրոֆ. Շիացի նկարը ուշազորությունը զրավում է իր խոր բնութագրումով, այսուեղ ևս նկարիչը ուշազորությունը կենարունացրել է պատկերվողի ներքին էկությունը վերարտագրելու վրա: Այս երկու գործերը, որ նկարել է Թագեռոյանը իր գեղարվեստական գործունեության արշալույսին, ապացուցում են նրա, որպես դիմանկարչի, ցայտուն ընդունակությունը: Եթե նախառելույցը ինը շկարունացրել է պատկերվողի ներքին էկությունը վերարտագրելու վրա: Այս վերջինը նկարված է բնականակությունը, ապա դա պատվերներ ըլինելուց իր: Դիմանկարի պատվերը չի ստացել նա ո՛չ Մոսկվայում, ո՛չ էլ, առավել ևս, Թիֆլիս փոխադրվելուց հետո:

Ռ. Մ. Սուրենյանի և Շիացի նկարներից հետո Թագեռոյանը վեց տարի դիմանկար չնկարեց, այնուհետև 1897-ին լուսանկարից նկարեց Գևորգ. Դ. կաթողիկոսին, իսկ մեկ տարի հետո՝ երիմյան Հայրիկին: Այս վերջինը նկարված է բնականից, բայց դարձալ պետք է գասվի նկարչին չոպեշնչող դիմանկարների շարքը: Դրանից հետո նորից մեծ ընդմիջում է

տեղի ունենաւմ: 1903-ի ամռանը, որ Թագեստյանն անց կացրեց Բյուրականում, նկարեց իր կնոջ զիմանկարը: Դա նրա կապիտալ և շատ ահաւակեռներից հետաքրքրական գործերից մեկն է: Սակայն հարց է ծագում՝ կարել՝ ե դաւա զիմանկար համարել դա: Գեռատի կինը բարձին կովնած է կանաչ գուլարիքի վրա պատկած՝ գիրք է կարգում: Այս նկարի մեջ դպալի տեղ է գրավում պէջամբը: Թագեստյանը նպատակադրութել է նկարել ոչ աշխանական զիմանկար, որքան մարդուն նկարել բնության մեջ, բայց օգոստ, գրանով իսկ մոտենալով՝ պեյզաժային՝ հանրային բնույթի նկարին:

Թառամյա ընդմիջումից հետո, 1907-ին, Թագեստյանը բնական խիճերից պատրաստում է իր և Վ. Պոլենովի մողակի զիմանկարները: Պոլենովն իրքն է Թագեստյանին ծանոթացրել իմանկարի այս հղանակը: Դրա բարդությունն այն է, որ ի տարրերություն իսկական մողակի, որտեղ զործ ունեն որոշ ձեռք ու շափի նյութի հետ, այսուել իմիմը պեսաք է հարմարեցնել որոշ շափի և բավարարվել սահմանափակ զայներով: Առանձին գեպերում հարի է լինում նույնիսկ խիճերը ներկել: Այդ խիճերն ամբացված են ցեղեննախ շաղախով: Զնայած «Ներկապնակի» սահմանափակ լինելուն և տեխնիկական անսովոր կատարմանը՝ նկարները իրենց լակոնիզմով հանդերձ արտադայտիչ են, բայց, իհարկե, պեսաք է զիտվեն որոշ հեռավորությունից: Թագեստյանի մողակի փորձերը այս երկուսով չվերջացան. նու պատրաստեց երկու այդպիսի գործեր ևս՝ «Մոլլա Նասրեդդինի յութ էշերը» և «Կատուն» (այս երկուսը, ինչպես և Պոլենովի զիմանկարը Թագեստյանը նվիրել է նրան, և այժմ գտնվում են Վ. Պ. Պոլենովայի անվան թանգարանում): Թագեստյանը շատ էր զիահաւառմ այս գործերը, մանավանդ զիմանկարները, բայց այլևս երրիբ չվերաբերձավ այդ փորձերին:

Այնուհետև Թագեստյանը նորից ընդմիջում է տալիս մինչև 1913—1914 թվականները, երբ նկարում է բանաստեղծ Յուրի Վերխովսկու (1913) և քանդակագործ Հ. Գյուրջյանի զիմանկարները: Սրանցից մեզ հայտնի է միայն սեւաշինը, որ չի կարի հաջող գործերի շարքը գասել: Հիշատակենք նաև իր կնոջ մանրանկարը (1916), որ ավելի շուրջ պատկերման եղանակների մեջ բազմազանության ապացույց է, քան թե նրա, որպես զիմանկարչի, գրանորում:

Ահա նախասովի տական շրջանում թաղեռայանի նկարած բոլոր դիմանկարացին գործեցին:

Այլ վերաբերմունք ուներ թագեռայանը զիմանկարի նկատմամբ ասվեական տարիներին: Հատկանշական է, որ սովորական 15 տարիների ընթացքում թաղեռայանը շատ ավելի զիմանկարներ տվեց, քան նկարչական գործունեության նախառևոլյուցիոն 25 տարվա մեջ: Մրան պետք է ավելացնել նաև այս, որ սովորական շրջանում նա տվեց մի քանի կոժուղիցիոն պորտրետներ, որպիսիք չեն նկարել նախաջնոկանիմբերից առարիներին, և որոնցից յուրաքանչյուրիք վրա աշխատել է երկու տարրոց ավելի: Հայ կովտորայի ականավոր գործիչների զիմաննկարների հետ միասին թաղեռայանը սովորական շրջանում նկարում է նաև սովորական շարքային մարդկանց, դա ցուց է տալիս, թե որքան ավելի էր նույնությանը մարդուն: Մենք այժմ ունենք մի քանի հիմնալի զիմաննկար, որ նկարել է նա սովորական տարիներին, և որոնք գեղարվեստական տեսակետից նշանակալի ենք են գրավիլ հայ զիմաննկարի պատմության մեջ:

Այդ տարիներին ստուգած զիմաննկարների շարքում ամենանշանակալիներից մեկը Հովհաննես Թումանյանին է: Թհե թաղեռայանը նկարել է զա 1931 թվականին, բանաստեղծի մահից բավական անց, բայց, որովհետեւ շատ լավ էր ճանաչում նրան և օժտված էր տեսողական սուր հիշողությամբ, ասա գժվար չեր վերստեղծի թուժանյանի պատկերը: Նկարչի խնդրեց բարպետ բարպետ էր. նա նկարական գրփել էր նկարել բանաստեղծին՝ կապելով նրան իր ստեղծագործության հետ, պատկերել աշխալով, ողիշնչված: Հերժանական ժամանակության անմիջապես կատարվեց: Նկարեց մի քանի էսքիզ, ուսկան ստիլաված եղավ երկար շարշարվել, մինչև զտավ իրեն բավարարող արուանայտություն, մինչև որ կարողացավ բանաստեղծին կապել ֆոնի հետ: Ֆոնի համար թաղեռայանը ընտրեց Թումանյանին հարազատ կոռու պելյամեր, որն այնքան նշանակալի տեղ է գրավում նրա երկերում: Դա լուս բնականից նկարված կոնկրետ պատառիկը չեր, այլ ընդհանրացված պելյամեր՝ նրա հիմնական գծերը, կորորիար, գուլները: Բանաստեղծի ողիշնչված դիմքը պելյամերի ֆոնի վրա նկարված է պլեն-էքսում, արեի ցուքերը խաղում են երեսի վրա: Նկարչին հաջողվեց խոսսակել բանաստեղծի կերպարը դուշնգուզն բժերի մեջ լուծելուց: Եթե նույնիսկ շմանաս, թե ում զիմա-

նկարն է դա, այնուամենայնիվ շես կարող շտւռնել ներքին հուզմունքն ու ոգեշնչումը, որ աշխի են զարնում առաջին իսկ հայացքից:

Զափաղանց ուշապատի է նաև Շիրվանզագերի դիմանկարը: Ով հիշում է Շիրվանզագերին նրա կյանքի վերջին տարիներին, շի մոռացել անշուշտ վիպասանի ներքուստ կինորունացած, կարծես ինքնամփոք գարձած, կերպարանքը: Արդյո՞ք մնեց գրողի մասին հանել էին բրազարձություններով մի իր անցյալին, թի՞ այլ մատեր էին քաղացնում նրան: Հնարավոր է, որ որոշ շափով ապդել էր նաև տեսողության թուլաթյունը, որից և առաջացել էր այդ ինքնամփոփոխյանը: Թագենույանը կարողացել է բռնել ինքն իր մեջ ամփոփված, իր ներքնաշխարհի մեջ սուլլամ վիպասանի պատկերը:

Սովորական շրջանի նշանակալի զիմանկարներից մեկն էլ Թագենույանի «Ինքնանկարն» է (1933), որ նկարված է արքեստական լուսի պայմաններում: Ցերեկվա լուսը սենյակի է թափանցել նորր կարմիր թղթի միջավ, որով ծածկված էին լուսամուռները: Աչա թի ինչու գեմքը սովորական մարմնագույն չէ, այլ կարծրավուն-մանուշակագույն նրբերանդ ունի: Սակայն այս անսովոր երանցը ամենակին չի անդրադարձել մեծ արտահայտչանքը տողորված ինքնանկարի վրա, որ Թագենույանի ամենահոգեբանական զիմանկարներից մեկն է:

Իր ուժեղը տարրեր կմագավաններում փորձել սիրող արվեստագետի դորժերից է նաև փայտե «Ինքնաքանդակը» (1924): Այս քանդակի մեջ լավ է վերարտադրված նմանությունը, ամկայն նկարչի համար անսովոր նյութով աշխատելու հետեանքով նկատվում է անփորձություն, որից և առաջցել են փորձքության անվստահությունն ու երրեմն էլ ավելորդ քաշինությունը:

Թագենույանն այդ տարրիներին նկարել է մի քանի կանացի զիմանկար, որոնցից երկուսը Ասաթիւանինին է: Արվեստագետը ոչ մի բարդ խնդիր չի առաջարկել այս զիմանկարներում, որոնք այնուամենայնիվ նկարված են Թագենույանի համար բնորոշ ամենայն լրջությամբ: Նկարիվ խոսափել է պատկերման որևէ շաբան, սասանդար հղանակից: Ամեն մի նկարի համար ընտրել է համապատասխան դիրք: Ասաթիւանիի առաջին զիմանկարում, որտեղ զենաստի կինը պատկերված է հայելու առաջ, տեսնում ենք երկու պատկեր՝ մեկը թիկոնքից, որտեղ երկում է դեմքի մի մասը, մյուսը՝ զեմառվեած անդրադարձումը հայելու մեջ: Մա, ավելի շուտ, զիմանկարային էտյուտ է՝ կոմպոզիցիոն ու գունանկարչական տեսակետից

Հետաքրքրական: Գիմանկարային խնդիրն ավելի խոր է գրված Ասաթիանի կիրարում, որտեղ ամբողջ ուշագրովյանը կհնարինացած է դեմքի, կերպարի ներքին բնուվագրի վրա: Շատ ավելի Հետաքրքրական ու նշանակալի է Բիմերի դիմանկարը, որտեղ Թագեռույանը կարուցել է բացահայտել դեռատի կնոջ հոգեվիճակն ու ապրումները, սրոված թափածից լարված նրա զեմքը, որով այս դիմանկարը կարելի է դառնել հոգերանական նկարների շարքը, որոնց մեջ բացահայտվում է մարդու ներք-նաշխարհը:

Աշխույժ է նկարված բանաստեղծ Հակոր Հակոբյանի դիմանկարը թե՛ արտաքին նմանության, թե՛ ներքին բնուվագրի տեսակին:

Թագեռույանի նշանակալի դիմանկարների շարքը պեսք է դասել նաև Կոմիտասի նկարը, որ թեև անավարտ է մնացել: Սա նկարչի վերջին գործերց մեկն է: «Կոմիտասը» Թագեռույանի ոչ միայն ամենալենածավալ, այլև մտահացմամբ ամենաբարդ գործն է: Ըստ էության սա կոմպոզիցիոն պորտրե է, ինչպես Ռեփինի «Գլինկան» կամ Կրամսկովի «Ենիկրասովը» Կոմիտասի դիմանկարի կոմպոզիցիոն հիմքը այն էտյուդն է, որ արել էր Թագեռույանը 1903-ին, Բյուրականում: Սյու դիմանկարային էտյուդի կոմպոզիցիոն մտահացմամբ, չնայած կատարման էսքիզայնությանը, պատահական չէ, և նկարիչը երեք տասնամյակ անց ցանկանալով նկարել Կոմիտասին, մի քիչ միայն բարգացրեց կոմպոզիցիան՝ ձախակողմյան Հետին պլանում զետեղելով գեղջուկ աղջիկների երգեցիկ խումբը: Իսկ Կոմիտասը, ինչպես էտյուդում, այնպես էլ այս նկարում, կանգնած է ամբողջ հասակով, հենված ծառին: Նկարում Կոմիտասը ձեռքին ունի մի թուղթ և գրի է առնում իր լսած մեղեղին: Կոմիտասը ներքուսա լարված է, կենարոնացած, ստեղծագործական ովելչնշմամբ առարված: Թագեռույանը դիմանկարը համարում էր հիմնականում ավարտված, այնպես որ գետ նրա կենդանության օրոք ցուցադրվեց երևանում: Բայց նա անհրաժեշտ էր համարում մի փոքր աշխատել կտավի վրա, մասնավանդ մեղմել զեմքի մի բանի ուժեղ լուսացոլերը, վերանկարել մի փոքր ծանր ամպը: Այս թերություններն այնքան նկատելի չեին նկարչի բնակարանում աշխատելիս, որտեղ լուսավորումն աննպաստ էր: Բայց դրանք վերացնելու ժամանակ շունչցավ:

Մի ուրիշ դիմանկար, որ գարծյալ անավարտ է մնացել, «Բնտանեկան նկարն» է: Այս գործը վազուց էր սկսված, սակայն ընդհատված և

արդպիս անավարտ էլ կախված էր նրա բնակարանում: Կյանքի վերջին ամիսներին միայն նկարիչը վերագրածավ գրան: Թագեռույանն այս կտավում պատկերել է իրեն, կնոջը և բոլոր հարազատներին: Առչեփ պլանում, նստած նկարչի առաջ, կանգնել է կինը. ետքի պլանում պատկերված է նկարչի ընտանիքը՝ ծնողները, քույրերն ու ինքը՝ մանկական հասակում: Կարծես թե նկարիչը կնոջը պատմում է իր մանկության ու ծնողների մասին: Թագեռույանի ինքնակենսագրությունն է դա՝ նկարի վերածված:

Վախճանվելուց քիչ առաջ ինձ գրած վերջին նամակում Թագեռույանն այս նկարի մասին ասում էր, թե քիչ է մնացել, որ ավարտի: Բայց մենք կարծում ենք, որ գեռ բավական աշխատանք է մնացել:

Այն հետաքրքրությունը, որ երեան էր բերում Թագեռույանը կյանքի վերջին տարիներին դիմանկարի հանգեց, չիմք էր տալիս կարծելու, որ նա կարող էր զենուս նշանակալի այլ գործեր էլ նկարել: Որքան էլ քանակական ասկազ է Թագեռույանի դիմանկարային ժառանգությունը, բայց և այնպես նրա վրձնին է պատկանում հայ դիմանկարչության լավագույն գործերից մեկը՝ Ռ. Մ. Սորենյանի նկարը, նրան ենք պարտական հայ կոլտուրայի ականավոր գործիչների՝ Հ. Թումանյանի, Շիրվանյանի, Կոմիտասի նկարները, ինքնանկարը, և հենց այդ էլ իրավունք է տալիս բավական նշանակալի համարել նրա ներդրումը հայ դիմանկարչության մեջ: Նրա դիմանկարների մասին կարելի է ասել չափահաներն Non multa, sed multum (Եատ չէ, բայց շատ է) ասածը:

ԹԱԳԵՇՈՅԱՆՑ ԹԱՅՐՈՒՆՈՒՄ

Թաղեռոյանը սիրում էր թատրոնը և միշտ էլ ձգտում էր գեղի թա-
տերական աշխատանքը: Նրան հրապարում էին դեկորատիվությունն ու
մոնումենտալ չափերը, ոճի ու դարաշրջանի վերաստեղծումը, հերթափն
իրականությունը, ֆանտաստիկն ու ռեալը, ճշմարիտն ու մտացածինը,
որոնք զուգորդվում ու իրար են հաջորդում թատերական արվեստում:
Ծիածանի բոյոր գուշներով վետվետող սեթեթի հերթափն սաստիկ սիրում
էր նա և ամենից ավելի հաճությամբ թատերական տեսք կտար զրան:
Օպերան գերազանցում էր զրամայից, որովհետեւ այստեղ ավելի հաճախ
ու ցայտուն էին միահյուսվում այն գծերը, որոնք մզում էին նրան գեղի
թատրոն: Երբ են հարցը, թե որ օպերան է ամենից ավելի սիրում,
«Գյուղական պատիվը», պատասխանեց նա, «որովհետեւ նրա մեջ պատ-
կերված կրանքը ճշմարիտ է» — կարև ձեւակերպեց նա: Նրան հրապարում
էր իտալացի դրամատուրգ Զ. Վերգալի դրաման, որ զարձավ Մասկանյիի
օպերացի լիբրետոն, որտեղ երաժշտական կրգուն զուգորդվում է
իրական, ճշմարտացի իրադրության մեջ պատկերված ողբերգական ձա-
կատագրի դատապարտված լինելու հետ: Այս այս ճշմարտությունը,

Հրաբորքոք, թրթուռն ու կրքոտ ճշմարտությունն էր ամենից ավելի սիրուժ թագեռոյանը բեմի վրա և այդ սեալիզմի մեջ իր վրձինի համար նույն քան լայն ասպարեզ էր տեսնուում, ինչպես հեքիաթի գունագեղ ֆանտաստիկայում:

Թաղեռոյանը երիտասարդական տարիներից թատերական աշխատանքի վայ հոչեր ուներ: Որպես Պոլենովի աշակերտ՝ նա զիտեր այն ներկայացումների մասին, որոնք բեմադրվում էին Ս. Ի. Մամոնտովի մերձուսկովյան Արքամցես դաստակերտում: Եթե գեռ Ս. Մամոնտովը իր հակայական միջոցների տեր էր, նրա շուրջն էին խմբվով ոռոսական արվեստի տաղանգավոր ուժերը՝ Վիետով Վասնեցովը, Վ. Պոլենովը, Կ. Կորովինը, Վրուբելը, իսկ երաժիշտներից՝ Ռիմսկի-Կորսակովը, կատարագներից՝ Շալյապինը, Զարեկան և որիշներ: Առաջին անգամ այդպես բեմադրվեց «Ջուաննուչչը» («Չայցորոկ») Վասնեցովի գեկորացիաներով և կոսայումներով, և այդ ձևակիրուումը այն ժամանակ նոր խոսք էր թատերական գեկորատիվ արվեստում: Այդտեղ էին աշխատում Պոլենովը, որ իր նորու ճաշակով համարյա պատմական ճշտությունն էր տալիս իր սեալ կերպարներին, Կ. Կորովինը՝ վառ-գունագեղ լուսավառություն տալով իր գեկորատիվ համարձակ մտահղացումներին. անզոսապ բոցով վառում էր այդտեղ Վրուբելը, որի համար ոչ մի սահմանագիծ չկար, և նրա ձեռքի տակ ամեն մի կերպար դառնում էր ֆանտաստիկ:

Պոլենովը թաղեռոյանին մասնակից դարձրեց «Յառաւտիք» տնային ներկայացման, ինչպես նաև Մամոնտովի օպերայում բեմադրության ձեփակորման աշխատանքին (դա այն բեմադրությունն էր, որտեղ երիտասարդ Շալյապինը տվեց Մեհֆիստովելի գերի իր նոր մեկնաբանությունը): Թագեռոյանը օգնեց նաև Պոլենովին՝ նկարելու «Հելլադայի ուրվականներ» օպերայի գեկորացիաները:

Թաղեռոյանը մոտիկից տեսնուում էր այդ աշխատանքը ու վարակվում թատերական արվեստի հանդեպ տածած չերմ, անշինչ սիրով:

Այս թատերական փորձերը հետազայում գրեթե զարգացում շատացան թաղեռոյանի ստեղծագործական պրակտիկայում: Զափահան տարիներին նրա թատերական աշխատանքը համարյա թե պատահական էր, նա էլ, բնականաբար, հետ մնաց թատրոնից և զարդարեց հետեւ բեմարվեստի զարգացմանը, չնկատեց, թե ինչպես թատերական գործի անսությունն ու պրակտիկան վերափոխում էր բեմի կառուցվածքը: Բայց նրա

թատերական միտքը շարունակում էր աշխատել և անում էր հայտնաւործություններ, «թատերական գյուտակեր»: Ել բոլորովին ինքնուրուցն կերպով մոտեցավ բնմական տուփի ամբողջ տարածությունը լցնելու մտքին, որը առաջարել էր հենց թատերական ոեֆորմը: Թագեսոյանն ասում էր, որ իր աշքը չի կարող հաշտվել այն բանի հետ, որ գործողությունը տեղի է ունենում միայն հաստակի վրա, իսկ մնացած ամբողջ շատ ավելի մեծ տարածությունը մնում է անշարժ ու դատարկ:

Թրիլիսիում ապրած երկար տարիների ընթացքում թատերական զեկավարներից ոչ մեկը շրմածեց Թագեսոյանին ներդրավել թատերական մշտական աշխատանքի մեջ: Նախառակալուցիոն տարիներին, անդամ «Արքունական թատրոնում», դա, իհարկե, անկարելի էր. չե՞ որ այն ժամանակ նկարչից պահանջում էին «շեղոր» գեկորացիաներ, այսինքն այնպիսիք, որ կարելի լիներ օգտագործել որտեղ ասես:

Բացառություն էր Թագեսոյանի աշխատանքը Ռեբիկովի «Տոնածառ» օպերայի վրա 1909—1910 թվականների թատերաշրջանում, երբ «Արքունական թատրոնի» անտրեպենյուրը կյանքնվալդը էր: Էյմենվալդը, որ դեռևս Մուսկվայից էր ճանաշում Թագեսոյանին, հրավիրեց աշխատելու այդ օպերայի վրա: Պահպանվել է այդ մեկ գործողությամբ օպերայի գեկորացիայի էսքիզը: Թագեսոյանը չկարողացավ ամբողջ թափով ծավալվել այդ աշխատանքում, որովհետև կաշկանդված էր գիրեկցիայի պահանջներով: Նրա զեկորացիան, որ պատկերում էր ոռուսական գովառական քաղաքի ձյունածածկ մի փողոց, կատարված էր միանդամայն ռեալիստական երանգներով, նա լավ էր օգտագործել պլանները, ասպարեզ էր ավել լուսասփյուռ էֆեկտներին և իր ամբողջ շափակորությամբ հանդերձ, այնուամենայնիվ, հաճալի բացառություն էր այդ թատրոնում:

Ավելի լրիվ կարողացավ Թագեսոյանը ցուցադրել իր գեկորացիան արվեստը Սոֆոլեսի «Անտիգոն» ողբերգության մեջ, որ բեմադրեց «Իկար» խորակը: «Անտիգոննե», «Թիերեի եռարանության» երրորդ մասը, ոչ միայն Սոֆոլեսի, այլև Հին գրականությունից մեկ հասած ամբողջ դասական դրամատուրգիայի ամենասիրված ողբերգություններից մեկը, պատմում է պարտականության (Անտիգոն) և իշխանության (Կիլոն) ողբերգության մասին: Թագեսոյանին հրապուրեց հին Հռուսաստանի վերաստեղծման խնդիրը. նա հաճախ էր տեսել Հելլադայի բնությունն ու

նախկին հուշարձանները և դրոշմել իր էտյուդների մեջ՝ արտասահման-
յան ուղղորդությունների ընթացքում:

Նկարիչը ավելից լրդպարպասյան թիրեի սրանշելի էսթիզը, ունալիստո-
րին օգտագործեց Հունատանից ստացած իր տպավորությունները: Ժայ-
ռերի աղոտ գեղնությունը, Ակրոպոլիսի մոխրագոյն զանգվածները, նրա
փայլած երանգները զուսպ, կարծիք ժլատ զամբայով, և այնուամենալ-
ինվ զգում ևս հարավային կիզիչ արեի շունչը, սրտեկ հիմնական երանց-
ների առերևությ զսպվածության տակից հառնում է միշտակա երանգների
ամբողջ ճայռությունն ու նրբությունը: Թագեռոյան իր գեկորացիան
շնկարեց հանավարագույրի վրա. դրա համար նա պահեց բեմական սո-
վորական երկնակային վարագույրը, որի առաջ, ամբողջ բարձրության
մեջ երրորդականից քիչ ցած գրեց իր գեկորացիան: Դրանով նա ամենի
մեծ շուափիւթյան հասակի կեննաշղթայի գծի, Ակրոպոլիսի տաճարի
և երկնիք միշտ զգացվում էր օդ, հեռասանն: Եվ ամբողջ բեմը, ցայտուն
ուղիղիքի հետ, ստանում էր մեծ խորություն ու հեռապատկեր: Թիֆլիսի
թեմի վրա առաջին անգամ Թագեռոյանի գեկորացիաներով ցուցագրվեց
զեղարվեստորեն ձևագրված ներկայացնում:

Դժբախտաբար, Թագեռոյանը առիթ շունեցավ այլևս աշխատելու
թատրոնի համար ընդհանուր մինչև 1926—1927 թվականները, երբ կարձ
ժամանակով լրացական օպերայի զիլավոր ուժիսյորը զարձավ էցիսին-
վալուրը որ այս անգամ էլ Թագեռոյանին հրավիրեց թատրոնում աշխա-
տելու: Նկարչին հանձնարարվեց ձեւալորեկ «Սամսոն և Գալիլա» օպերան:
Ընտրությունը հաջող էր: Զէ՝ որ Թագեռոյանը երկու անգամ ենիւ էր
Պաղեստինում, որից բավական շատ էտյուդներ էր պահել—Այսանի նա
օգտագործեց ոչ միայն Արևելքի հանաշողությունն ու բմբանումը, այլև
իր բմբանումն էլ մատրից բեմական կառուցվածքի մեջ: Ավելի քան քասն-
շինք տարի է անցել այդ բեմագորության օրից, բայց հիշողությունից
չի չնչվել զա: Առաջին պատկերում նկարիչը խռովոր պլանով տվիլ էր
մուռնումինտալ մի սանդուղք և մինչև կեսը երկացող հոդ սուներ, որից
զրանք ավելի ազդեցիկ էին թվում: Վերջին պատկերում, որ ներկայաց-
նում է Պագոնի տաճարը, նա ստեղծել էր սանդուղքների ու սյուների
նույն մոնումենտալ էֆեկտը, որոնք ոչ թի քաշված էին նախարհմ, այլ
արված էին այնպիսի խորընթաց պլանով, որ բեմը հսկայական էր
թվում: Պալիլայի տան տեսարանում Թագեռոյանը կարողացել էր զու-

գակցնել ետևի վարագույրի շոր՝ Հբաշունչ պեյզաժն ու Դալիլալի ալգու
աղբյուրի շուրջը եղած խոնալ ու երբներանդ կանաչի զովությունը։ Այ-
դոց լեռն ի վայր ձգվոմ էր մի սանդուղք՝ խորքից երեացող մարդկան-
ցով։ Մոտեցման աներկբա նորությամբ, թատերական հնամուլությունից
դերծ լինելով հանգերծ, այնուամենայնիվ, նրա ձևավորման մեջ զգաց-
վում էր թատերական փորձի պակաս։ տեղ-տեղ գերակշռում էին բեմի
ծավալի տեսակետից մանր գետալներ։

Դժբախտաբար այս երեք բնմագրությամբ սպառվում է Թաղեռոյանի
գործունեությունը թատրոնում, որտեղ նա, անկասկած, շատ բան կարող
էր անել, որովհետեւ օժոված էր գեղորածիվային-գեղանկարչական մեծ
ձիրքով և մեծ հնարազիտությամբ, այսինքն այն կարևորագույն հատկու-
թյուններով, որոնք անհրաժեշտ են թատրոնում աշխատող նկարչին։

ՆԿԱՐՉԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թագեռոսյանն այն նկարիչներից է, որոնց արվեստը անբաժան է՝ նրանց անձնավորությունից: Այդպիսի նկարչի արվեստը կարող էս լիով վիճակունել միայն այն գեպքում, եթե լավ ևս ճանաշում նրան: Ահա թի ինչու ներկա ուսումնասիրության խնդիրը չի կարելի սահմանափակել սուսկ նկարչի արվեստը քննության առնելով: Նկարիչ թագեռոսյանն անքառ-ժամանելի է մարդ թագեռոսյանից:

Նկարչի ուզին մենք քննարկել ենք նրա կենսագրության ֆոնի վրա, ինչպես նաև անցողակի նշել ենք նրա անձնավորությունը բնութագրող որոշ գծերը: Սակայն, նախորդ գլուխներում սպառված չէ, անշուշտ, նկար-չի անձնավորությունը լուսաբարող ամբողջ նյութը: Ահա զրա համար էլ ուզում ենք լրացնել արվեստագետի դիմանկարը:

Թագեռոսյանը զյուզացու զավակ էր, իր գեղարվեստական կրթու-թյունն ստացել էր Մոսկվայում, որտեղ էլ սկսվել էր նրա նկարչական դժբաննեռությունը: Պոլենովների տանը շփվում էր ոչ միայն լավագույն, առաջավոր նկարիչների, այլև սուս ինտելեկտենցիայի ներկայացուցիչների, առարրես պրոֆեսիաների մարդկանց հետ: Այնուհետև նրա ամբողջ կյանքն

ընթացավ թիֆլիսում, որտեղ նա լինում էր թե՛ Հայ, թե՛ այնուեղ եղած «միջազգային» անդրկովկայան ինտելիգենցիայի շրջաններում։ Այսպիսով, 66-ամյա կյանքից 60-ը անց է կացրել քաղաքում։

Թագեռոյանը շատ բան է վերցրել առևական արվեստից ու կուտառքաից։ Արտասահմանյան հաճախակի ուղևորությունները հարստացնում էին նրա գեղարվեստական ձաշակը համաշխարհային արվեստի զլուխուղործոցներին ժանովացնելով, որն իր հերթին չէր կարող շանդարձանալ նրա ամբողջ կուգաուրայի վրա։ Բայց, միաժամանակ, նրա մէջ կար ինչ որ նախնական, անանուն թարմություն, առողջ ու ամուր կայունություն։ զրեթե մանկական միամտություն ու իմաստություն։ Նա զուրկ չէր փիլտրուայական կոնցեպցիաներն ըմբռնելուց, իր ընդհանուր գեղարվեստական կուգաուրայի նախապատրաստված էր գրան, ու պահանջում փիլտրուայական կոնցեպցիաների բարձրությակ կառուցումներ, որոնք սկզբից մինչև վերջ լինեին հստակ, իրական, ասես զգալի ու շոշափելի, ինչպես այն մարմնացած ու ներդաշնակ պլաստիկ աշխարհը, որի հետ զործ ուներ նկարչի նրա աշբը։ Եվ երբ զրուցյն անցնում էր այդպիսի թևմաների, նա յսում էր ուշագիր, գրեթե լարված, իր համար ոչ հստակ տեսքում կանգնեցնելով գրուցակցին, հարցուփորձելով իր համար անհասկանակի կետերը, մերժելով այն, ինչ խանդարում էր պարզությանն ու ամրողականությանը։ Եվ ինչպես միշտ՝ ընկալիմ էր դանդաղ, բայց հաստատ, լրջորներ, ընդերկար, ճիշում էր լավ՝ ընկալածը կապելով իր ընդհանուր սիստեմին։ Եվ այն, ինչ նրա մէջ ուժանց թվուր էր անշարժություն, պահպանուականություն, իրականում նրա ամուր, անաղարտ խառնվածքից յոցանիշն էր։ Դա այն գործնական, առողջ շրջահայեցությունն էր, որն ամեն մի նոր ձանապարհով զգուց է քայլում, սակայն ընտրում է առաջատար ուղին Դանդաղաշարժություն էր դա ու զգուշություն, բայց ոչ լացում։ Դեպի նորություն ընթանում էր միայն հավատալով նրան և ընդունում ստուգելոց հետո միայն։ Դա ներքնաբուխ, ամուր ռեալիզմ էր, որի համար խորթ է ամեն տեսակ սնապաշտություն, և որը կարող է ամեն մի երեսը ու առարկա դիտել ամեն կողմից և ստուգել բոլոր զգացարաններով, բացի վեցերորդից։ Բայց ինչ ընդունում էր, պահում էր ամուր և եթե ատելի էր, ապա՝ դանդաղ ու զգուց, երբ համոզվում էր, որ սիստ է կատարվել։ Նա նման էր այն խոզոր, խոր նստած, ամուր թոկերով ու առազատաներով օժաված նավերին, որոնց փոթորիկը դժվարու-

թյամք է ճոճում և որոնք գեռևս օրորվում են, երբ ալեկոծությունը դադարել է և բալոր խարիսով նավակները հանգարտվել են նրա շուրջը: Թագեսոյանի մեջ կար մի նուրբ ոտեղնչվածություն, որը խոր կուլտուրայի արքասիք էր, և միաժամանակ հողից խոնավացող, թարմ, գեղջկական բան: Այս ակնանբների միախանումը յուրահատուկ պատկեր էր տալիս նրան:

Արվեստի մեջ առաջացած որևէ նոր խոսքի վերաբերվում էր մեծ հետաքրքրությամբ, բայտ որում նրա համար արվեստը միայն նկարչությամբ ու քանդակագործությամբ չէր սահմանափակվում: Նա սիրում էր երածշառությունը ու թատրոնը: Մի անգամ պատմում էր իր ապագորությունը Այսկողորս Գունկանի պարերից, որին տեսել էր իրկու անգամ՝ 1911-ին, ապա սովորական շրջանում: Նրա համար կասկածից զագու էր, որ Գունկանի արվեստը նոր խոսք է պարի ասպարեզում: Նա տեսնում ու զգում էր պարունակությունը արվեստի լավագույն սկզբունքների, անտիկ պլաստիկայի, խալչական Վերածնության նրբորեն բանասանդական պատկերների հետ: Առանձնապես հավանում էր Գունկանի «Գարնան» պատկերները և զուգորդում էր զրանք իր նախասիրած Բոտիչելլիի հետ:

Բաղեսոյանն արտաքուստ աշքի էր ընկնում հանգարտությամբ, զսպածությամբ, սահմանառությամբ, սակայն իր զինն իմացողի համեստությամբ: Աշքի էր ընկնում արտակարգ նրբանկատությամբ: Գանդաղկուած էր շարժունակությամբ, խոսակցության մեջ:

Խորի էր նա ազգային սահմանափակությանը: Վերցնում էր ամենայն գեղեցիկը, որտեղ էլ զա գտներ, բայց բնականարար առանձնապես չերմագին ու քնիչությամբ սիրում էր հարազատ ժողովրդի կուլտուրայան ժառանգությունը: Գեղարվեստական լայն կուլտուրան ոչ թե ջնշում, այլ խորացնում ու շեշտում էր նրա արվեստի ազգային գեմքի ցայտուն գծերը: Քաղաքացին մոռիլները քիչ էին հետաքրքրում նրան և չէին կարող խլացնել նրա սահմանադաշտական անձնափորության հիմնական ձգությունը գեղի հայրենի մոռիլները, հայրենի գյուղի փողոցը, արվեստի տուարկաներով արտահայտված հայրենի հնաշխարհը, Հայաստանի բնությունը: Գյուղական աշխատանքի իր պոեմիայով, արենի տապավ, այգիների բարեր ստվերով, ապառաժուստ կիրաներով, ձորերով, ակոսներով գծանկարված վարելահողերով, օգեղեն վրձինումներով աշխաժացած բարզինե-

բով և հավերժական Մասսի գեղանկարչական անսպառ փոփոխություններով: Որքան էլ բազմադասն ինքը նրա թեմատիկան, այնուամենալինիվ, ըստ էության ծաղովրդական նկարիչ էր նա: Հավելով հայրենի հողին՝ գիշաբանական Անթելի նման քաղում էր իր զորությունն ու լավագույն ողեղնչումները:

Քնքըորեն սիրում էր բնությունը և սպասում նրա փաղաքանքին: Սիրում էր ամենայն ծաղկում, «ամենն տեսակ կյանք» (Մայակովսկի), բայց ինչպես նշել հնք, առանձնապես սիրում էր գարունը: Ասացին իսկ պայծառ օրերից պատրաստվում էր զիմանիք գարունը. ենաւմ էր պատրշամբ, նայում՝ վնասված շե՞ն անկյուններ եղած ծիծեռնակի բույները: Եվ նստելով պատշաճամբում՝ գործարար շեշտով, առաջին անգամ գարնան զարթոնքի օրենքները բացահայտած և անմա՞ս բնության գաղտնիքները սիրած մնեն, ինչպես կրիայի լոջությամբ պատմում էր, թե ինչ հաջողություններ է արել գարունը: «...Ա՛յ, ակացիայի աշերիը բացերը բացվելու վրա են, մի քանի օրից պարտիզում կծաղկի յասամանը, իսկ լասամանի տակ, շատրվանի մոտ երեկ վարդեր անկեցինք, շուտով կլինն և ծաղիկները: Ցուց տալով իր պատշաճամբից կրկացն Պավթի սարի լանջերը՝ ասում էր. «Տեսեք, կանաչել է այնտեղ, իսկ այնտեղ՝ հեղեղատում ծաղկել է նշենին: Ներսը՝ սենյակում նշենու մի մեծ փոնջ կա, երեկ աշակերտուհին բերեց»: Այդպիսի օրերին Թաղենոյանը միշտ մըդվում էր գեպի բնության գիրկը. վրան էր քաշում ու թիկնոց, վիրցնում կոստյում ձեռնափայտն ու նկարչատուփը և կնոջ ու այցի եկած բարեկամի հետ գնում քաղաքից զուրս կամ Թոփ բարձր ափերը և նկարում ու հիանում բացվող տեսարանների վրա: Առանձնապես հաճելի է Թիֆլիսը գարնանը, երբ ծաղկում են նշենին, ինձորենին, բալենին, գեղենին, որոնք ծխի սպիտակ ու վարդագույն գուլաների նման սփոփում են շըշակա սարերի վրա: Թաղենոյանը համեմատում էր զբանք հինավորց մարտանկարի հետ, որի վրա սփոված են հրետանու կրակի ծխագնդեր: Այդ զրուանքների ժամանակ ուրախ ու զրուցաներ էր լինում նաև Վերհշշում էր անցյալը, ամուն համար ծրագրեր կազմում և, իհարկե, հաճությամբ վերաբանում իր նախասիրած նյութին՝ նկարչությանը:

Թաղենոյանը, որ ընդհանրապես բարյացակամ էր մարդկանց հանդեպ, առանձնապես սրտառուց էր վերաբերվում երեխաներին: Ահա թե ինչ է զրում նրա մասին վ. Պոլենովի զուարտ Ե. Սախարովան. «Կենդա-

նի կերպով հաւոսում է իմ հիշողութայն մեջ նկարչի գրավիչ պատկերը՝ որ այնքա՞ն չերժություն ու բովանդակություն էր մացնում մեր մանկության մեջ: Եղիշե Մարտիրոսավիչը շատ էր սիրում երեխաներին: Նրա հմտություն Ռոմանովնայի համար մեծ վիշտ էր, որ երեխա չունեն: Նու մեզ համար բարձրարվեստ խաղալիքներ էր շինում: Իր իսկ պատրաստած զեկորացիաների ֆոնի վրա երեսում էին դրանք ու շարժվում թելերով, որոնք ինքը նկարիչն էր զեկալիքում: Այդ արագիցիան սկսել էր Ելենա Դմիտրինան Պոլենովան, որ այլպիսի տեսաբաններ էր կազմակերպում տոնածառի առթիվ: Նրա մահվանից հետո, ի հիշատակ նրա, Եղիշե Մարտիրոսավիչը էր շարունակում: Առանձնապես հիշում եմ լեռնային մի պեյզաժ, որի ֆոնի վրա երեխան էր գալիք լեռնային ողին՝ կոտոշներով ու կճղակներով: մենք գրան անվանում էինք «Մատիրիկոն»: Եղիշե Մարտիրոսավիչը սիրում էր նաև ֆոկուներ ցուց տալ: Նա այդ անում էր լրացնեմ, հանդիսավոր կերպով, հայկական անորոշական շեշտով: «Սկսում եմ» Մենք բոլոր շունչը բռնած՝ հետեւում էինք և շատ էինք սիրում այդ ներկայացումը:

Եղիշե Մարտիրոսավիչը վայելում էր մեր ընտանիքի ընդհանուր սերը:

Նկարչության մասին զբուցելիս Թաղենույանն անսպաս էր: Նու օժաված էր արվեստ մեծ էրուղիցիայով, որ ձևոք էր բնել սուսական և արեմատակելուսպական թանգարանների արվեստի բոլոր նշանավոր գործերին ծանոթանալով: Գա այն էրուղիցիան չէր, որ ձևոք է բիրզում զրբերից ու տեսական ուսամնասիրություններից: Գրանք զանազան քաղաքներում ու երկրներում, ժողովուրդների գեղարվեստական համարի ու բնության գեղեցկության զրոշմբ կորող արվեստի գանձարաններում կատարած ուշադիր ու սիրով լի գեղերումների տպավորություններն էին: Այս տեսակիակից հակայական էր Թաղենույանի հիշողությունը, կառուն ու խելացի, ևս կասեի նկարչի բանվարական հիշողություն, որովհետեւ դա ոչ միայն սրանշացումների էսթետիկական ծալիկարագ էր, այլև աշխատանիր մեղմի՝ սոսկեթուր նեկտարի հավաքումն իր փեթակի, խելացիորեն ու հաստատապես կազմակերպված իր նկարչական անտեսության համար:

Նա ճանաշում էր Տրետյակովյան պատկերասրահի բառացիորեն

մամեն մի նկարը և նույնիսկ հիշտ հիշում էր, թե ո՞ր սրահի ո՞ր տեղից է կախված:

Բավական էր որեք տեղեկանք խնդրել նրանից որեք նկարչի մասին. և նա զանգաղ, սակայն ճշգրիտ ու սպառիչ լրիվությամբ բաց էր անում՝ իր հակայական պաշարը և թլում. «Նրա նկարները կան էրմիտաժում, Լուվրում, Կենսինգտոնի պատկերասրահում ու Պրադոյում, ինչպես և Բելլինի թանգարանում»: Ճանաշում ու հիշում էր ամեն մի թանգարանի անկյունը, թեև 15—20 տարի էր, ինչ չէր եղել այդտեղ: Դիտեր, թե իր գրադարանի ո՞ր գրքի ո՞ր էջումն են այդ նկարների արտասալությունները: Եվ հանում էր այդ գրքերը ու հիշուությամբ, ասես մեխանիկական տեղեկատուով, գտնում անհրաժեշտ պատկերը: Նրա էրութիցիան արժեստագիտական էր, տեսողական, սակայն նույնքան ամուռ, իր սիստեմի հատ համաձայնեցված ու ստուգված, ինչպես որ նկարչի իր ողջ էռումը, որ որոշակի գիտե, թե ինչ է ուզում, սիրում ու դնահատում և ինչ կա այդ սահմաններից գուրս:

Թեև նա ծնված էր հարավի կիզիչ արևի տակ, բայց տաքությանն ընկնելուն պես ամբողջովին սպիտակ զգեստ էր հագնում և ատելությամբ խոսում մուսալուս հեղձուցիչ շոգի մասին ու երազում շուա հասնել ծովափ կամ Ռուսաստանի սաղարթախիտ կամ վշատերի անտառները: Հաճությամբ էր վերհիշում 1911 թ. ամսունը երուսաղեմում անցկացրած օրերը: «Բայց չե՞ որ երուսաղեմում ամսունը անտառների շոգ է»: «Ամենին,— ասաց նա, — գուրսն է շոգ, իսկ տննրում ամենուրեք զոյլ է, ավելի զոյլ, քան Թիֆլիսում»: Հիշում էր նա խոչըր, հասա քարենքից շինված հնամենի հյուրատների կիսախափար անցքերը, ուր երբեք չը թափանցում արևի կիզիչ հառակալիքը, որտեղ խոնավության աստիճան զոյլ է այն ժամանակ, երբ շորէ բոլորը անջուր ու արեախանձ անապատ է:

Ամառը Թիֆլիսում վրձինն ընկնում էր նրա ձեռքից, իսկ երուսաղեմի ապաստարանի կամարների ներքո, «երանավետ սովորի տակ» նա տեսնպագին աշխատում էր:

Մոսկայում սկսվեց նրա գեղարվեստական գործունեությունը, և աստղի նման արագ բարձրացավ նա Մոսկվայի հորիզոնի վրա: Անմիջապես գնահատեցին նրան: Բայց որքան էլ հաճելի լիներ այդ հաջողությունը, այնուամենայնիվ նրան քաշում էր հայրենի երկիրը: Թիֆլիս փոխադրվելն, իհարկե, բացառապես նյութական պատճառները, ընտանեկան

կյանքի համար անհրաժեշտ մշտական վաստակ ունենալու ցանկությունը չէին: Խսկ ինչպես զիմտվորեցին նրան հայրենիքում: Վերելում մենք արդեն ճիշտատակեցինք, թե ինչպիսի բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Թաղեռոյանի և Հայ, վրաց ու սուսական ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչների միջն Բայց բոլորովին այլ կերպ բնուունց նկարչին Հայ բուրժուական միջավայրը, այսինքն՝ այն շրջանները, որոնք մեան կարող էին նյութապես աշակցել նրան՝ նկարներ գնելով կամ պատվերներ տալով: Կատարյալ անտարբերությամբ վերաբերվեց Հայ բուրժուազիան Թաղեռոյանի նկարչական տաղանդին՝ ընձեւելով նրան նկարչության ուսուցի տաղտկալի պաշտոնը միջնակարգ դպրոցներում: Տանակից տարի նախառելուցույին Թիֆլիսում ապրելու բնիմացքում ոչ մի նկար չծախավեց: Ապրակի¹ Հայ բուրժուազիայի համար նրա նկարիչակերպը անհանդուժելի նորովք էր:

Թաղեռոյանը մեկուսացավ տանը: Իր բնակրանի երեք փոքրիկ սենյակները վերածեց շինող, ինտիմ թանգարանի: Այստեղ կարելի էր տեսնել մի փոքրիկ կոլեկցիա, որի մեջ կային Այլազովսկու, Վրուգելի, Պոլենովի, Մուսասարովի, Լեիտանի, Կորալլինի, Յ. Լանսկրնի, Ֆուկիի, Հայ նկարիչներից՝ Սարյանի, Արծումբանյանի, Թերլեմնեցյանի, Է. Շահնի, Վրացիներից՝ Գաբրաչյանի, Թորիձեի գործերը: Դրանց հետ միասին կար մանրանկարներով դարդարված շին Հայ ձեռագրերի և հայկական անեղնագործությունների կոլեկցիա: Բազմակողմանի էր նա իր կողեկցիոններության մեջ, սուկամի հնարավորություններն, ինչպես, խիստ սահմանափակ էին, և կոլեկցիայի նկարների մեծ մասը արվեստագետ բարեկամների ու ընկերների նվերներն էին: Խնն էր իր գործերից էր նվիրում նբանց: Սեփական նկարներից մի քանիսն էր միայն կարել բնակրանի պատերից: Այդաել ձեզ զիմավորում էին արվեստի հարցերի վերաբերյալ Հաճելի դրույցը և նկարչի հյուրընկալությունը:

Այդտեղ, արիստօնի գործերի շրջապատում էր ընթանում նկարչի կյանքը: Ոչ միայն պատերի նկարները, այլև այդտեղ եղած կա՛մ-կարասին կամ իր ձեռքով էր շինել, կամ շինել էր տվել բատ իր գծագրի կամ ցուցումների: Երա տանը կախված էին իր իսկ նկարած գուան վարագալու պատերից:

1 Թաղամաս Թիֆլիսում, որտեղ ուսույնությայից առաջ գերազանցակես Հայ բուրժուազիան էր ապրում:

ները, մեկը պատկերում էր վարդավառի տոնը, մյուսը՝ սկանդինավյան ծովագին ոճավորված մոտիվներ: Պատշաճամբում միշնորմ էր շինել և դրա ետև էլ աշխատում էր ոսանդայով ու գորով: Արհեստը սիրում էր արվեստի պես, արվեստի մեջ էլ սիրում էր արհեստը, Սիրում էր գնալ շուկա, շուտումու տալ հնավաճառի արկղի կամ հենց սալահատակի վրա թափված հնութին և որևէ բան գտնում էր այնտեղ՝ մետաղի իր, մանր զարդ, հախճապակի, հին շրջանակ, բոլորն էլ կեղառա, զրեթե սևացած: Թաց տանը խնամքով սրբում էր կեղար, լրացնում պակաս մասերը, վերականգնում, և իրեւ անճանաչելի էր գտնում: Երրիմն կասկածիկ արժեք ունեցող փոքր նկարներ, էակուդ էր առնում, շակում, զնարակով ծածկում, և նկարը վերափոխվում էր, կենդանանում: Այդ ձեռվ մի անգամ դնել էր մի հին, ափելի, քան միշակ պեղզաժ, մի զյուղապատկեր՝ գետափին կովեր, իսկ հետին պլանում՝ անտառապատ ափ: Յուզատիվի (օլեոգրաֆիայի) տեսք ունեցող այդ նկարը նրա հմուտ ձեռքի տակ կերպարանափոխվեց, և նա դնելով իր իսկ շինած շրջանակի մեջ՝ հպարտությամբ միացրեց իր կոլեկցիային, կախեց բնակարանի մյուս գործիքի կողը:

Մասնավոր մի կոլեկցիայից թագուսյանը ձեռք բերեց մի հին նկար, որտեղ երկու պարող երաժշտ, commedia dell'arte-ի պերսոնաժներ՝ թատրոական գեեստներով, պատկերված էին դրուեսկային պլանով: Նա անմիշապես վերաբերեց զա Կալոյին և սաստիկ ուրախացալ, երբ հնատագայում բարեկամներից մեկը բերեց այդ նույն երաժիշտաներին պլատկերով Կալոյի օֆորտի լուսանկարը՝ միշախ թի հակառակ ուզզությամբ, որը հաստատում էր թագուսյանի վերագրումը: Շատ էր սիրում նա այդ նկարը և ասում, «Անուանույան, Հենց որ վեր եմ կենում, զնում եմ ուզիդ զրա մոտ, հիանում»:

Ոչ թե քայլը, հաշակի կամայականությունը և նրբաճաշակությունն էին ստիպում, որ նկարին իրեն շրջապատի արվեստի թե՛ սեփական, թե՛ ուրիշի գործնորով, այլ բնական, պարզ ու աշխատված, զուտ հոգեկան պահանջը:

Չի կարելի ասել, թե թագուսյանը քիչ էր կարդում, բայց նրա ընթեցանության շրջանակը սահմանափակ էր և անձնական գրադարանը քիչ գրքեր ուներ: Գերազանում էր կարդալ մայրենի լեզվով, և նրա սեղանի վրա, էսքիզների կողքին կտեսների մի բացված գրքույկ՝ նահապետ:

Քուշակի տաղերի սյունակներով: Ժամանակակից բանաստեղծներից առանձնապես բարձր էր գնահատում Հովհաննես Թումանյանին: Նրա դիմանկարի վրա աշխատելիս ավելի հաճախակի էր կարդում բանաստեղծի երկերը: Նրա գրական հետաքրքրությունները գլխավորապես վերաբերում էին Արևելքին: Հաճախ կարող էիր տեսնել նրան Մասպերոյի «Հին Արևելք» ուսումնասիրելիս: Սիրում էր մանավանդ Ռաբինդրանաթ Տագորին: Հավանում էր Հին ժամանակների մեջ նորացած ու բնության սիրով առողջապահ այդ հայեցալական փիլիսոփայությունը: Հաճախ էր կրկնում «Գիթմանչալիք» (Տագորի այս դիրքն առանձնապես սիրում էր) խոսքեր՝ ունկնդրելով նրա յուրահատուվ, լսողությունը շոյող երաժշտությանը: Հավաքում էր Տագորի նկարները և դրանցից երկուսը, փոքր շրջանակների մեջ զրած՝ կախել էր գրասեղանի դիմացի պատից, Պոենովի դիմանկարի կողքին: Եվ ինձ թվում է, թե Թագեռույանը Տագորին տանող ուղին գտավ ամենից առաջ նրա արտաքին պատկերի՝ բրանձին նահապետի հմայքի միջոցով: Աշքի թովանքով ապրող նկարչի համար տանապես հասկանալի է դա:

Նայելով նրա զգուշությանը, զապլածությանն ու համեստությանը, որոնցով աշքի էր ընկնում Թագեռույանը, նրա ամբողջ բարեհամբույրությամբ հանդերձ, առաջին հայացքից շըր կարելի ասել, թե գիտելիքների ու տպավորությունների ինչպիսի ճողովություն էր ցուցաբերում նա բարեկամական զրուցից ընթացքում: Նա արտաքին փայլ չուներ, բայց ոնքը մի խոր պայծառություն: Այդ ճողովությունը շինկով գրքային տպավորել էր նրա մեջ սրտալի, մեծ աշխատությունը: Երբեմն դա համեմվամ էր գումրով, երբեմն էլ զգացլում էր անհատական խիստ-մոտեցում: Երբեմն նրա ուսուերեն ոչ միշտ ճարտար խոսքը գտնում էր ինչ-որ անսպասելի կամ զվարձալի բառ ու սահմանում, որոնք հնչում էին անմոռանալի ցայտունությամբ, գրական ամեն դարձվածքից ավելի ցայտուն: Մեկ էլ հշում էր ինչ-որ կենցաղային նրբերանու, իսկ Թագեռույանը գրանց նկատմամբ անտարբեր շըր և վերաբարձրում էր առանձնակի ճաշակով՝ ճաշակելով նրա ինքնատիպությունը և ուրախ ծիծաղելով:

«Պախտա, Կոնչիտա» — հիշում էր նա, թե ինչպիս Տոլեդոյի (Խոպանիա) մի նեղ փողոցում, վանդակացանց, կանալ փեղկավոր փոքրիկ պատշգամբներից երկու ընկերուհի ձայն էին տալիս իրար և վարակիչ ծիծաղում:

«Դպաբիա» — ծոր տալով ասաց նա՝ երկրորդ ա-ի առաջ շունչ քաշելով. — այսպես են ֆելլահներն անվանում սրանք, — և ցուց տվեց նեղոսի վրա ընթացող թևանման առագաստ ունեցող նեղ նավահների էտյուգը: «Դասաբիա» — կրկնում էր նա՝ ունկնդրելով իր տեսողական տպավարությունն ուժեղացնող այդ արևելյան երաժշտությունը: Հետո էլ նայում էր զրուցակցին և ուրախ ծիծաղում՝ հաճելիորեն զգալով կեցության պայծառությունն և նրա գեղարվեստական գրսնորումների ամրող գրամիչ բազմազանությունը: Հիշում եմ, թե ինչպես մի անգամ բարեկամներից մեկը մեջքերից Օմար հայամի այս տողը. «Բայց արա քեզ, եղայր իմ, աշխարհի բոլոր հոտերի, գուշների ու հնչունների առաջ»: Թագեռույնն անմիջապես այս խոսքերը գրեց իր ծոցատերությունը:

Սուանձնապես հաճելի էր լսել Թագեռոյանին, երբ նա բարեկամներին, մոտիկ մարդկանց ցուց տալով իր էտյուգները՝ պատմում էր այս կամ այն վայրից ստացած տպավորությունները: Եյսուեղ նրա խոսքը կորցնում էր ժամանությունը, և նա հափշտակությամբ էր պատմում իր տպավորությունները:

Ցուց տալով մի էտյուգ, որ արել էր հշխանաց կղղիներից (*Մարմարա, Կոստանդնովպոլիս*) Թագեռոյանը պատմում էր, թե ինչպես Տարմարյայի համայնապատկերի մեջ իր համար բացահայտվեց հին հելլենական պեղպամբը: Հունաստանի ափերից արած էտյուգները հիշեցնում էին Աթենք այցելելը, և թե ինչպես Ակրոպոլսում ինքը ապշել էր, որ մարդկային գեղարվեստական հանճարի մնացորդները պահած այդ բնական ամրոցի հենց ստորոտին է փակչել ամենաբարացահայտ ժամանակակից աշխարհը. այդտեղ՝ ներթեսում, Ակրոպոլսի պարիսպների տակ, կանալը մին էին տապակում, լվացը անում, նախատում իրար, կանչում էին արաղազները, զուում՝ ավանակները: Մահացման այս վեճը պոեդիայի և կենանի, ինչպես կյանքն է, պրոզայի միաձուլության մեջ, նա անասեիի հրապուրը էր տեսնում: Նրա աշքերը զմայլած կանգ էին առնում մերձակա բլուրների ձիթենիների արծաթաթուուր փոշու և հատկապես ծովային մուգ կապույտի և Սալամբնի ափերի ալիքաձև գծերի դեղնության զուգագրության վրա:

Թագեռույնի արած ուրվանկարները հետագայում առաղձ դարձան «Ֆիդիասն ու Զեսը» նկարի համար, որտեղ Հունաստանի մեծ քանդակագործին Ակրոպոլսի զադաթից երևում է թանձր ամպերի միջից հառնող

Զնսի պլումը: Կորֆու կղզում Թագեռոյանին հետաքրքրում են Հին քա-
ղաքի՝ ժամբալին տեսարաններով իլ նեղ փողոցները:

Ցուց տալով վենետիկյան իր էտյուպները՝ Թագեռոյանը Հիշում էր
իր վերջին այցելությունը, պատմում, թի ինչպես պատահաբար հանդի-
պել էր Ռեպինին այն հյուրանոցում, ուր իշխանել էր և ինքը: Երիտա-
սարդության օրերին Թագեռոյանը հաճախ էր Ռեպինին հանդիպել Պոլե-
նովի տանը, երբ Պետրոպավլից գալիս էր Մոսկվա: Ավելի, քան քսան
տարվա ընթացքում Թագեռոյանն, իհարկե, խիստ փոխվել էր, բայց
Ռեպինն անմիջապես ձանաշել ու մոտեցել էր նրան: Հստ Թագեռոյանի
պատմածի՝ Ռեպինն ընկնաված էր. նոր էր վերադարձել Վիեննայից. ուր
հոգին էր հանձնել իր բարեկամ Նորդման-Սկերովին: Վշտի ծանրությու-
նից այնպես էր կուցել և դիմագծերն այնպիս էին փոխվել, որ առաջին
պահ չէր ճանաշել Ռեպինին, մինչև որ մեծ արվեստագետը ասել էր իր
անունը: Խոսել էին այդ ժամանակ Վենետիկում բացված միջազգային
ցուցահանդեսի մասին, Հիշտուակվել էր խսպանացի նկարիչ Անգլական,
որին ցուցահանդեսում մի ամբողջ պահ էր հատկացված: Ռեպինը խո-
ժովիկց ու ասաց: «Այդպես նկարելու համար վաստ հիվանդությամբ բու-
նավորված ուղեղ պետք է ունենալ: Ա՛յ, Զուլուագյին սիրում եմ. վար-
ուեմ է նա»:

Եղիշե Թագեռոյանը սովորաբար հնույալ ուղեգծով էր կատարում
իր շրջագայությունն Արևելքում. Բաթումից շոգենավով Կոստանդնու-
պոլիս, Փիրեա, Խտալիա: Այստեղ կանգ էր առնում, որպեսզի այցելեր
Հոռոմի, Ֆլորենցիայի ու Վենետիկի մեծահարուստ թանգարաններն ու զի-
տեր Հնության կոթողները: Խակ եթի Խտալիան ուղեգծի մեջ չէր ժանում,
առա Մարսելլից մեկնում էր Փարիզ, այսուղից էլ՝ Բրետանի կամ Նոր-
մանդիա: Մի անգամ էլ Թագեռոյանը եղավ Խոպանիայում: Առիթ ունե-
ցավ նաև լինել Անգլիայում, Քելքիայում ու Հոլանդիայում: Ճանապար-
հուրդությունների, ընթացքում, մանավանդ ծովային, երբ շոգենավի
տախտակամածից էրնում էին առավելա նորանոր համախապատկերներ,
նկարիչը բազմաթիվ պեյզաժներ էր նկարում: Խակ Արևմուտքում ժիներու
օրերին, բացի Բրետանից ու Վենետիկից, որոնք ոգեշնչել են նրան պեյ-
զաժների մի շաբթ նկարելու, Թագեռոյանին ամենից ավելի դրավում էին
